ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՓԱՍՏԱՑԻ ՊԵՏԻ ԵՒ ՄԻ ՇԱՐՔ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԱՌԱՁԱՑԱԾ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՒ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՒԱՆ · 2026

Զեկույցի պատրաստումը բխում է ՀՀ Կառավարության 2026–2031 թթ. ծրագրից եւ պատրաստվել է ՀՀ վարչապետի հանձնարարությամբ:

Զեկույցը պատրաստվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից:

Ծանոթագրություն.

Սույն Զեկույցը որեւէ կերպ չի վիճարկում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանաբանական հիմքերը, Սրբազան Ավանդությունը եւ կանոնական կարգը: Ընդհակառակը, Զեկույցի նպատակն է փաստագրել հենց այդ հիմքերի, Կանոնագրքի եւ եկեղեցական ավանդույթների խախտումները՝ ի պաշտպանություն Եկեղեցու ինքնության եւ ինքնավարության:

Զեկույցի պատրաստման նպատակով օգտագործվել են բացառապես բաց աղբյուրներում առկա եւ օրինական ճանապարհով հասանելի հանրահայտ տեղեկություններ, որոնց վերաբերյալ ներկայացված են պատշաճ հղումներ:

Բովանդակություն

Սեղմագիր 4
Փաստագրում 6
01 - Կուսակրոնության ուխտի խախտում 6
02 - Կուսակրոնության ուխտի խախտման տարածում 9
03 - Բարեվարքության խախտումների անպատժելիություն 10
04 - Հոգեւորականների կամայական հետապնդումներ 14
05 - Ֆինանսական անթափանցիկություն 19
06 - Ազգակցական ձեռնադրություններ եւ իշխանության յուրացում 27
07 - Քաղաքական գործունեություն եւ Սուրբ Խորանի քաղաքականացում 30
08 - Սոցցանցային խմբեր, ատելության խոսք եւ ապատեղեկատվություն 37
09 - Արտաքին ազդեցությունների տարածում 39
10 - Ազգային-Եկեղեցական ժողովի 27-ամյա խափանում 43
11 - Եպիսկոպոսաց եւ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովների խափանում 47
12 - ՀԱՍԵ միասնական Սահմանադրության խափանում 49
13 - Պառակտումներ Սփյուռքի թեմերում 51
14 - Եկեղեցապատկան գույքի ոչ նպատակային օգտագործում 56
15 - Հովվապետական առաքելության չկատարում 61
16 - Եկեղեցու խորհրդակցական կառավարման տապալում 65
Առաջարկվող լուծումներ 70
Ելակետային սկզբունքներ 70
Ճանապարհային քարտեզ 71

ԲԱԺԻՆ 1

Սեղմագիր

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետի եւ ՀԱՍԵ մի շարք բարձրաստիճան հոգեւորականների գործունեության հետեւանքով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում առաջացել է ճգնաժամ, որն արտահայտվում է հետեւյալում.

ՃԳՆԱԺԱՄԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ

01 ՀԱՍԵ փաստացի պետի կողմից կուսակրոնության ուխտի խախտումը եւ զավակ ունենալն անհամատեղելի են Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջադրվող կանոնական պահանջների հետ:

02 ՀԱՍԵ փաստացի պետի՝ կուսակրոնության ուխտը ստանձնելուց հետո զավակ ունենալու հանրահայտ փաստը ստեղծում է ընկալում, թե կուսակրոնության ուխտի խախտումը ընդունելի է, եւ նման վարվելակերպ են որդեգրում բազմաթիվ այլ կուսակրոն հոգեւորականներ:

03 Բարձրաստիճան հոգեւորականների կողմից կուսակրոնության ուխտի եւ բարեվարքության խախտումների դեպքերը պատշաճ քննության եւ արձագանքի չեն արժանանում եւ այդ երեւույթի շուրջ ՀԱՍԵ փաստացի պետի կողմից ձեւավորվել է ըմբռնման մթնոլորտ:

04 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը կամայական հետապնդումների է ենթարկում հոգեւորականներին՝ իր ենթակաների վերաբերյալ տարածելով վարկաբեկող նյութեր, միանձնյա որոշումներով՝ առանց պատշաճ քննության ընթացակարգերի, կարգալույծ է հռչակում հակականոնական գործունեությամբ զբաղվելու հրահանգներին հակադրվող եւ Եկեղեցում ստեղծված արատավոր բարքերը քննադատող հոգեւորականներին:

05 ՀԱՍԵ գործունեությունը դուրս է ֆինանսական թափանցիկությունից. Եկեղեցու նմանօրինակ գործունեության արդյունքում առաջանում է հսկայական ստվերային շրջանառություն: Եկեղեցուն արվող հսկայածավալ նվիրաբերումների տնօրինման վերաբերյալ հաշվետվություններ չեն հրապարակվում, որի պայմաններում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետի ընտանիքի անդամների ցուցադրական բարեկեցությունը ողջամիտ կասկածներ է առաջացնում:

06 ՀԱՍԵ փաստացի պետն ի հակադրություն ՀԱՍԵ Կանոնագրքի՝ իր ազգականներին ձեռնադրել է եպիսկոպոս, իր ծննդավայր գյուղից շուրջ երկու տասնյակ անձանց ձեռնադրել է հոգեւորականներ եւ նշանակել է բարձր եկեղեցական պաշտոնների, այդ թվում՝ թեմերի առաջնորդների՝ այդպիսով փաստացի յուրացնելով իշխանությունը ՀԱՍԵ-ում:

07 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը եւ մի շարք բարձրաստիճան հոգեւորականներ վարում են բացահայտ քաղաքական գործունեություն, Եկեղեցու տարբեր կառույցներ եւ նրա Սուրբ Խորանը օգտագործում են քաղաքական քարոզչության համար: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը եւ նրա մերձավոր շրջապատը հոգեւոր ծառայողներին պարտադրել են կազմակերպել քաղաքական ակցիաներ կամ մասնակցել դրանց:

08 ՀԱՍԵ փաստացի պետը հոգեւորականների ներառմամբ ստեղծել է սոցիալական ցանցերի կեղծ եւ իրական օգտատերերի ցանց, որոնց միջոցով ատելություն եւ անհանդուրժողականություն է քարոզում ու ապատեղեկատվություն տարածում:

09 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը եւ նրա ընտանիքի անդամները ՀԱՍԵ-ն օգտագործում են Հայաստանի Հանրապետությունում արտաքին ազդեցությունների տարածման համար:

10 ՀԱՍԵ փաստացի պետն իր գահակալության 27 տարիներին, ի հակադրություն Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու կանոնադրության պահանջների՝ խափանել է Եկեղեցու գերագույն մարմնի՝ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը՝ Եկեղեցին դնելով միահեծան կառավարման հիմքի վրա:

11 Սահմանված պարբերականությամբ չեն գումարվել Եպիսկոպոսաց, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովները, ինչի հետեւանքով Գերագույն հոգեւոր խորհուրդը գործել է ոչ օրինական կազմով, կարեւոր կանոնադրական փաստաթղթերը մեծ մասամբ մնացել են անվավեր:

12 ՀԱՍԵ փաստացի պետը պարբերաբար խափանել է ՀԱՍԵ միասնական Սահմանադրության ընդունումը, ինչի հետեւանքով Եկեղեցին գործել է անձիշխանության պայմաններում՝ առանց իրավազոր կանոնական հիմքերի:

13 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետի կողմից իրականացված կանոնադրական ճնշումները, կամայական նշանակումները, գույքային միջամտությունները պառակտումներ են առաջացրել Սփյուռքի թեմերում եւ օտարել են թեմերի հավատավոր ժողովրդին Մայր Եկեղեցուց:

14 ՀԱՍԵ փաստացի պետի վերահսկմամբ տարիներ ի վեր եկեղեցապատկան կամ եկեղեցու տնօրինմանը հանձնված գույքն օգտագործվել է ոչ նպատակային՝ լքվել է կամ օգտագործվել է բիզնես նպատակներով:

15 ՀԱՍԵ փաստացի պետը գործունեության ողջ ընթացքում պատշաճ կերպով չի կատարել իր առաքելությունը թեմերի հավատավոր ժողովրդի հանդեպ, չի կատարել հովվապետական այցեր դեպի հայաստանյան ու սփյուռքի որոշ թեմեր եւ դրանցում չի մատուցել Սուրբ Պատարագներ:

16 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոտը ՀՀ տարածքում, նախկին խորհրդային պետություններում, ինչպես նաեւ արեւմտյան որոշ երկրներում փաստացի զրկված է Եկեղեցու կառավարմանը մասնակցելու հնարավորությունից, թեմերը զրկված են ինքնավարությունից: Թեմերի զգալի մասում եւ ծխական համայնքներում պատշաճ կերպով չեն իրականացվում թեմի Ներկայացուցչական ժողովի պատգամավորների, Թեմական Խորհրդի անդամների եւ ատենապետության, ինչպես նաեւ՝ համայնքային ու ծխական մարմինների եւ նրանց առաջնորդների կամ հոգեւոր հովիվների ընտրություններ, ժողովներ ու նիստեր:

ԲԱԺԻՆ 2

Փաստագրում

Սույն բաժնում փաստագրված են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետի եւ մի շարք բարձրաստիճան հոգեւորականների գործունեության հետեւանքով հասունացած ճգնաժամը հավաստող վկայությունները, նյութերը եւ հանրահայտ փաստերը, ինչպես նաեւ այն կանոնական հիմքերը կամ իրավական դրույթները, որոնք խաթարվել են վերոնշյալ գործունեության արդյունքում:

01 **ՀԱՍԵ փաստացի պետի կողմից կուսակրոնության ուխտի խախտումը եւ զավակ ունենալն անհամատեղելի են Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջադրվող կանոնական պահանջների հետ:**

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. 1972թ-ին ՀԱՍԵ փաստացի պետը, այդ ժամանակ լինելով սարկավագ, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի ձեռամբ ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ստանձնելով կուսակրոնության ուխտը եւ վերանվանվելով Գարեգին աբեղա: **[1]**

1.2. ՀԱՍԵ փաստացի պետի կողմից կուսակրոնության ուխտի խախտման եւ զավակ ունենալու վերաբերյալ տարիներ շարունակ հնչել են բազմաթիվ վկայություններ, հրապարակվել են անձնական հստակ տվյալներ եւ մանրամասներ: Այդպիսի փաստեր հրապարակվել են 2010-ական թվականներից սկսած եւ երբեւէ չեն հերքվել ո՛չ Մայր Աթոռի եւ ո՛չ էլ անձնապես փաստացի կաթողիկոսի կողմից:

1.3. ՀԱՍԵ փաստացի պետի կողմից կուսակրոնության ուխտի խախտման եւ զավակ ունենալու մասին փաստագրված առաջին հրապարակումներից է 2015թ-ի ապրիլի 1-ին «Հրապարակ» օրաթերթի կողմից հրապարակված «Իսկ կաթողիկոսի դստեր կոշիկի չափը Ձեզ չի՞ հետաքրքրում» վերտառությամբ հոդվածը: Դրանում մասնավորապես ասված է.

> *«Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսին մոտ կանգնած անձը մեզ տեղեկացրեց, որ «կաթողիկոսի աղջիկը Սարյան փողոցի վրա դեղատուն ունի: Անունն էլ Խաթուն է: Գարեգին Բ-ն ընդհատակյա դստերը կոչել է իր մոր անունով: 28-32 տարեկան կին է»:* **[2]**

1.4. Mamul.am լրատվական հարթակի կողմից 2019թ-ի սկզբին հրապարակվել է «Ցնցող բացահայտումներ կաթողիկոսի կնոջ մասին» վերնագրով հոդվածը, որում էական մանրամասներ եւ անձնական տվյալներ են ներկայացված ՀԱՍԵ փաստացի պետի կնոջ եւ դստեր մասին.

> *«Լոլա Միքայելի (Միխայելովնա) Գրիգորյանց: Ծնվել է 1962 թ. հուլիսի 24-ին, Ուզբեկստանի Քարշի քաղաքում: Երիտասարդությունն անցել է Ռուսաստանի Լենինգրադ քաղաքում*

որտեղ էլ ծանոթացել է այդ օրերին Գերմանիայից դեպորտ արված եւ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանի հովանու ներքո Մոսկվայի եւ Նոր Նախիջանի հայոց թեմում ապաստանած Գարեգին աբեղա Ներսիսյանի հետ: Գարեգինի կամ ավելի ճիշտ՝ Կտրիճի եւ Լոլայի սիրո մտերմությունից ծնվում է իրենց աղջիկը, ով ի պատիվ իր տատիկի՝ Գարեգինի մոր անվան, նույնպես անվանակոչվում է Խաթուն: Լոլան շարունակում է Գարեգին-Կտրիճի հետ քողարկված ամուսնական հարաբերությունները: Այս մասին իմանում են շատ բարձրաստիճան եկեղեցականներ, բայց աչք են փակում եւ լռում են, քանի որ իրենց մեծ մասն էլ ուներ եւ ունի ապօրինի կին-երեխաներ, ինչը արգելված է եկեղեցական եւ բարոյական օրենքներով»: **[3]**

1.5. ՀԱՍԵ փաստացի պետի՝ դուստր ունենալու մասին բազմիցս հայտարարել են ՀԱՍԵ հոգեւորականները: Մասնավորապես, 2018թ-ին այդ մասին հրապարակային հայտարարել են Կորյուն աբեղա Առաքելյանը եւ Խորեն վարդապետ Հովհաննիսյանը, ովքեր պնդել են, որ պատրաստ են նաեւ վճարել միջազգային ԴՆԹ հետազոտություն իրականացնելու համար.

«Հայտնի է, որ 1979-80 թվականներին, երբ նա աբեղա էր ուսանում էր ուղղափառ եկեղեցու հոգեւոր ակադեմիայում, ծանոթացել է Լոլա Գրիգորյանցի հետ եւ նրանց ծանոթության արդյունքում, ըստ հավաստի տվյալների, 1981 թվականին ծնվել է Խաթուն Կտիչի Գրիգորյանցը՝ մոր ազգանունը կրելով»: **[4]**

1.6. 2025թ-ից սկսած ՀԱՍԵ փաստացի պետի՝ կուսակրոնության ուխտի խախտման եւ զավակ ունենալու մասին ՀԱՍԵ գործող եւ նախկին հոգեւորականները սկսել են էլ ավելի հաճախ եւ բացեիբաց հայտարարել եւ հավաստել: Այդ մասին վկայել են փաստացի կաթողիկոսի նախկին գավազանակիր, անձնական քարտուղար Խորեն վարդապետ Հովհաննիսյանը, Տարոն քահանա Հունանյանը, Հովհաննես քահանա Մաթեւոսյանը եւ այլք: **[5] [6] [7]** Այս փաստի մասին հայտարարել եւ վկայություններ են տվել նաեւ բազմաթիվ հասարակական ու քաղաքական գործիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ: **[8] [9]**

1.7. Կին եւ զավակ ունենալու մեղադրանքներին ի պատասխան ՀԱՍԵ փաստացի պետն ունեցել է միայն մեկ անդրադարձ, որտեղ չի հերքել մեղադրանքը: Նա, մասնավորապես, հայտարարել է.

«Եթե որեւէ հանցանք եւ մեղք վերագրվում է որեւէ եկեղեցականի, այն պետք է ներկայացվի համապատասխան ատյաններին, եւ այնտեղ այդ հարցը քննության է առնվում, եւ համապատասխան որոշում կայացվում. սա է սկզբունքը: Որեւիցե առումով ես ճիշտ չեմ գտնում, որ եկեղեցականները պետք է առանձին մեղադրանքներին անդրադառնան, պատասխաններ հնչեցնեն: Մեկ ատյան կա՝ եկեղեցական ատյանն է, որտեղ եկեղեցականը բոլոր հարցերին կպատասխանի՝ լինի արդար թե զրպարտչական: Եթե այդպիսի մեղադրանք է հնչեցնում Հայոց կաթողիկոսին, ուրեմն պետք է հարգի եկեղեցու կարգուկանոնը եւ դրա համաձայն գործի»: **[10]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.8. Համաձայն ՀԱՍԵ Կանոնագրքի՝ եպիսկոպոսությունը եւ հետեւաբար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի աթոռը շնորհվում են բացառապես կուսակրոն դասին: Բոլոր եպիսկոպոսներն ու Կաթողիկոսը կապված են կուսակրոնության ցմահ ուխտով, եւ այդ ուխտի պահպանումը նրանց կանոնական կարգավիճակի առաջնային պայմաններից է: Կուսակրոն դառնալիս հոգեւորականը ստանձնում է կուսակրոնության ուխտը՝ ամուսնությունից եւ աշխարհիկ կյանքից հրաժարվելու հանձնառությունը, որի արտաքին խորհրդանիշը վեղարն է: Այս ուխտն ունի ցմահ բնույթ. կուսակրոն հոգեւորականն այլեւս իրավունք չունի ամուսնանալու, ինչպես ամուսնացյալ քահանան չի կարող միակողմանիորեն ընդունել կուսակրոն կարգավիճակ: **[11]**

1.9. Կուսակրոնության ուխտի ստանձնման ժամանակ հոգեւորականն ի թիվս այլնի ստանձնում է հետեւյալը.

> *«Ես օրհնությամբն Աստծո եւ կամոքն ազգիս, հաստատ համոզմամբ հանձն եմ առնում ընդունելու կուսակրոն քահանայության կարգը: Փրկչի իջման սուրբ սեղանի առաջ խոստանում եւ ուխտում եմ. - Սրբությամբ պահել կուսակրոն քահանայության ուխտս: Հավատով ու նվիրում ծառայել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ հայ ժողովրդին...»:*

1.10. Ըստ ՀԱՍԵ Կանոնագրքի՝ կուսակրոնության ուխտի խախտումը (ամուսնություն, համատեղ կյանք, զավակ ունենալ) դիտվում է որպես ծանր կանոնական զանցանք, որը հաստատվելու դեպքում կանոնական հետեւանքներ է առաջացնում: ՀԱՍԵ Կանոնագրքում ներառված «Առաքելական կանոններ»-ում կուսակրոնության ուխտի խախտման առնչությամբ սահմանված է հետեւյալը.

> *«25. Եպիսկոպոսը կամ երէցը կամ սարկաւագը, եթե պոռնըկութեան մեջ կամ երդմնազանցութեան կամ գողութեան մէջ բռնուեն, կարգալոյծ լինեն, բայց եկեղեցուց չմերժուեն, որովհետեւ Սուրբ Գիրքն ասում է՝ Երկու անգամ վրէժ մի՛ հանիր»:*

ՀԱՍԵ Կանոնագրքում ներառված Բարսեղ Մեծի կանոնները սահմանում են.

> *«18. Կոյսերը, որոնք մի անգամ խոստացել են նուիրել իրենց Քրիստոսին, եթէ մարմնաւորական ախտի մէջ կընկնեն, անարգում են այն ուխտը, որ դրել են Աստուծոյ հետ. դրանց մեղանչումն աւելի չար է, քան այրունը: Այդպիսի կոյսը շնացողի պատժին է ենթարկւում: 19. Ուխտական մարդիկ ասելով հասկանում ենք վանականները, որոնք կուսակրօն կեանք վարել են ցանկանում: Նրանցից պարզ եւ որոշ խոստում պիտի առնել միշտ կուսակրօն մնալու. ով կմեղանչի, անառակների պատժին կենթարկուի: 60. Կոյս լինելու խոստում անողը, եթէ երդմնազանց լինի, շնացողի ապաշխարանքին ենթարկուի. նոյն պատժին ենթարկուեն կուսակրօնութեան խոստում տուողները»:* **[12]**

ԱՄՓՈՓՈՒՄ

1.11. Առկա են բազում վկայություններ եւ հավաստումներ, որ ՀԱՍԵ փաստացի պետը խախտել է կուսակրոնության ուխտը եւ զավակ ունի, ինչով պայմանավորված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կանոնագրքով, Առաքելական կանոններով եւ ՀԱՍԵ բազմադարյա ավանդույթներով այդ անձն անհամատեղելի է Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբազան աթոռի հետ եւ պետք է ազատի այն:

1.12. ՀԱՍԵ փաստացի պետի՝ դուստր ունենալու փաստը երբեւէ չի հերքվել ոչ Մայր Աթոռի եւ ոչ էլ անձամբ փաստացի կաթողիկոսի կողմից:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոս - Կենսագրություն, https://www.armenianchurch.org/hy/Կենսագրություն
2. Հրապարակ (2015-04-01). «Իսկ կաթողիկոսի դստեր կոշիկի չափը Ձեզ չի՞ հետաքրքրում». https://hraparak.am/am/post/591fa856e3d84d0d37fd1190
3. Mamul.am (2019-01-17). «Ցնցող բացահայտումներ կաթողիկոսի կնոջ մասին». https://m.mamul.am/am/post/85474
4. Aravot.am (2018-06-13). «Կաթողիկոսը դուստր ունի, պատրաստ ենք միջազգային ԴՆԹ հետազոտության համար վճարել». https://www.aravot.am/2018/06/13/963856/; Aravot.am (2018-06-30). «Հայր Կորյուն. «Գարեգին 2-րդը աբեղա եղած ժամանակ խախտել է կուսակրոնության ուխտը»». https://www.aravot.am/2018/06/30/967826/
5. Armtimes.com (2025-12-26). «Ո՞նց կարելի է ձեռնադրվել կուսակրոն, հետո ամուսնանալ. Տեր Հովհաննես քահանա Մաթեւոսյան». https://armtimes.com/hy/article/328428
6. Armtimes.com (2025-12-24). «Կաթողիկոսի դուստր ունենալը անհերքելի փաստ է. Տեր Տարոն քահանա Հունանյան». https://armtimes.com/hy/article/328314
7. Civic.am (2025-06-02). «Իշխանությունը վերջապես հասավ Լուսավորչի գահը ուզուրպացրած հրեշին. Խորեն վարդապետ Հովհաննիսյան». https://civic.am/news/94199

8. Նիկոլ Փաշինյան (2025-06-02). «Եթե պարզվի, որ իրոք Գարեգին Բ–ն խախտել է կուսակրոնության ուխտը եւ զավակ ունի, նա չի կարող լինել Ամենայն հայոց կաթողիկոս».
https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/pfbid02VnCgb6wa38UANFFSvf2XYkzcJqjQvd9nz9zWU5NmzwLyWuwkNX1Fonfv3PtT1Bs8l
9. Արմենպրես (2025-12-15). «Հոգեւոր դասը պետք է որոշի... Փաշինյան». https://armenpress.am/hy/article/1237594
10. 168.am (2026-06-02). «Ո՞ր պահին խզում առաջացավ Վեհափառի ու Նիկոլ Փաշինյանի միջեւ. Ամենայն հայոց կաթողիկոսի պատասխանը». https://168.am/2026/06/02/2423934.html
11. Կանոնագիրք Հայոց (կազմող՝ Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոս, VIII դ.). գիտաքննական հրատարակություն՝ Վազգեն Հակոբյան, հ. Ա (Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964), հ. Բ (1971)
12. Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան, «Հայոց Եկեղեցական Իրավունքը», Վերահրատարակություն 2011թ.

02 ՀԱՍԵ փաստացի պետի՝ կուսակրոնության ուխտը ստանձնելուց հետո զավակ ունենալու հանրահայտ փաստը ստեղծում է ընկալում, թե կուսակրոնության ուխտի խախտումն ընդունելի է, եւ նման վարվելակերպ են որդեգրում բազմաթիվ այլ կուսակրոն հոգեւորականներ:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Կուսակրոնության ուխտը խախտելու վերաբերյալ առկա են բազմաթիվ չհերքված վկայություններ եւ հրապարակումներ բարձրաստիճան հոգեւորականների առնչությամբ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյան (Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ), Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան (Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական պատվիրակ), Ռուբեն եպիսկոպոս Զարգարյան, Տաթեւ եպիսկոպոս Հակոբյան (Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ), Արշակ եպիսկոպոս Խաչատրյան (Մայր Աթոռի դիվանապետ), Առաքել արքեպիսկոպոս Քարամյան (Կոտայքի թեմի առաջնորդ), Վազգեն եպիսկոպոս Միրզախանյան (Բալթյան երկրների թեմի առաջնորդ) եւ շատ ուրիշներ: **[1] [2] [3] [4] [5]**

2.2. Կուսակրոնության ուխտի պահպանումը բարձրագույն հոգեւոր դասի համար առանցքային մարտահրավերներից է, ինչի խախտումները մշտապես եղել են եւ հանդիսանում են տարատեսակ շահարկումների, խարդավանքների, արտահոսքերի, մեղադրանքների հիմք ու պատճառ, եւ այդ դեպքերի շուրջ կամայական դրսեւորումներն էապես խարխլում են ՀԱՍԵ բարձրագույն սպասավորների նկատմամբ վստահությունը: Այդ առնչությամբ առկա են նաեւ հաստատված փաստեր: Արձանագրված է բարձրաստիճան հոգեւորականի կողմից կուսակրոնության ուխտը խախտելու վերաբերյալ հաստատող խոստովանություն. հայտնի է Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանի կողմից կուսակրոնության ուխտի խախտման հրապարակային խոստովանության փաստը, որն արվել է 2018թ-ին: **[6]**

2.3. Առկա են փաստեր ու վկայություններ այն մասին, որ ՀԱՍԵ փաստացի պետը կուսակրոնության կարգավիճակ եւ վեղար է շնորհել այնպիսի հոգեւորականների, որոնք նախկինում ամուսնացյալ են եղել, սակայն ամուսնալուծվել են առանց ՀԱՍԵ կանոնակարգով նախատեսված հիմքերի: Համանման հաստատված խնդիր առնչվում է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Ասողիկ աբեղա Կարապետյանին: Վերջինս, ըստ հրապարակումների, մինչեւ 2019թ-ը եղել է ամուսնացյալ քահանա, ամուսնացած է եղել հայտնի սոպրանո Սիրանույշ Գասպարյանի հետ եւ ունեցել է երկու դուստր: Նշված տարում քահանան առանց եկեղեցական պատշաճ հիմքի ամուսնալուծվել է եւ կաթողիկոսի կողմից ստացել է կուսակրոն աբեղայի կարգավիճակ, ինչը ՀԱՍԵ կանոնակարգով չի թույլատրվում: **[7] [8]**

ԱՄՓՈՓՈՒՄ

2.4. ՀԱՍԵ փաստացի պետի կողմից կուսակրոնության ուխտի հանրահայտ ու անպատիժ խախտումը պայմաններ է ստեղծել այլ բարձրաստիճան կուսակրոն հոգեւորականների առջեւ միեւնույն հակականոնական ընթացքով ընթանալու համար: Տարածված հակականոնական բարքերը լրջագույն հարված են հասցնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հեղինակությանը:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Mamul.am (2019-02-25). «Գարեգին Բ-ն խրախուսում է համասեռամոլ եւ կուսակրոնամերժ հոգեւորականներին». https://m.mamul.am/am/post/85986
2. Mamul.am (2018-10-24). «Գարեգին Բ-ն Խաժակ արք. Պարսամյանի հետ միլիոնավոր դոլարներ է դիզել մասունքների վաճառքից գոյացած գումարներով». https://m.mamul.am/am/post/83687
3. Հրապարակ (2019-04-25). «Նոր սկանդալ, ՊՎԾ պետի տեղակալի հայրը Կոտայքի թեմի առաջնորդն է». https://hraparak.am/am/post/929337526
4. Medianews.site (2025-11-25). «ԿԳԲ-ի գործակալ Եզրասի կինն ու արտամուսնական կապից ծնված որդին. լուսանկարներ». https://medianews.site/593124/?brid=8AD6s3s-oxnuXXBfsIe_2A
5. Fbnews.am (2026-01-11). «Կտրիճի կողմից Մասյացոտն թեմի առաջնորդ նշանակված Վաչիկ Զարգարյանը կին ու երեխա ունի». https://www.fbnews.am/news/2132772/ktritwi-kvokmic-masyacvotn-temi-arajnvord-nshanakvats
6. Նոյան Տապան (2018-06-14). «Տիրան Արքեպիսկոպոս Կյուրեղյանը խոստովանում է..». https://www.youtube.com/watch?v=lqXCI58RDGY
7. Mamul.am (2019-03-12). «Կաթողիկոսը քահանայի ամուսնալուծության պատճառ». https://m.mamul.am/am/post/86167
8. Mamul.am (2019-07-10). «Տնաքանդ քծնողի վարձատրությունը ուխտադրուժ շնացողից». https://m.mamul.am/am/post/88019

03 Բարձրաստիճան հոգեւորականների կողմից կուսակրոնության ուխտի եւ բարեվարքության խախտումների դեպքերը պատշաճ քննության եւ արձագանքի չեն արժանանում, եւ այդ երեւույթի շուրջ ՀԱՍԵ փաստացի պետի կողմից ձեւավորվել է ըմբռնման մթնոլորտ:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. ՀԱՍԵ հոգեւորական դասի կողմից բարեվարքության կանոնների տարատեսակ խախտումների մասին շարունակական հաղորդումների առնչությամբ առկա են բազմապիսի վկայություններ, արտահոսքեր, լրատվական հրապարակումներ եւ հայտարարություններ, որոնք առնչվում են հոգեւորական ծառայություն իրականացնող մի շարք անձանց կողմից հոգեւորականին ոչ հարիր վարքին եւ բարեվարքության կոպիտ խախտումներին: Շրջանառվել են պնդումներ, ըստ որոնց՝ ՀԱՍԵ ներքին կառույցներում եւ ճեմարաններում արմատացած է բարոյական անկումը, իսկ միասեռականության ու սեռական զանցանքների, մասնավորապես՝ մանկապղծության մեջ կասկածվող կամ մեղադրվող որոշ հոգեւորականներ ոչ միայն չեն պատժվում, այլեւ արժանանում են բարձրագույն ղեկավարության հովանավորությանը:

3.2. Մանկապղծության թեմայով ամենաաղմկոտ հրապարակումները եւ վկայությունները վերաբերում են ՀԱՍԵ փաստացի պետի եղբորը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին: 2016թ-ին տարածվել է կարգալույծ հռչակված Գրիգոր (Արծրունի) քահանա Ավետիսյանի ֆեյսբուքյան գրառումը, որտեղ նա մանկապղծության մեջ է մեղադրում Եզրաս արք. Ներսիսյանին.

«80-ականներին, Արգենտինայում ավտովթարի հետեւանքով որբ է դառնում ազգությամբ հայ Միքայելը (Մարչելլո), որին տեղի թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը ուղարկում է Հայաստան, որպեսզի նա անտեր չմնա եւ ուսուցանի սուրբ Էջմիածնի հոգեւոր Ճեմարանում: Օգտվելով մանչուկի ճնշված եւ անտեր վիճակից՝ գարեգին Բ չկաթողիկոսի եղբայրը ներկայիս Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս նզովյալ եպիսկոպոսը (այն ժամանակ Ճեմարանի ուսանող), բռնաբարում է Միքայելին եւ դա անում է բազմաթիվ անգամներ: Բանը հասնում է նրան, որ նա փողով Էջմիածին քաղաքի նարկոմաններին է բերում, որ կենակցեն Միքայելի հետ»: **[1]**

3.3. Միեւնույն թեմայի շուրջ լրատվամիջոցներից մեկը բաց նամակ է հրապարակել «Պողոս Չուրուքյան» ստորագրությամբ, որտեղ վերահաստատվում է Եզրաս արք. Ներսիսյանի մասին տվյալ տեղեկությունը. *«Սույն փաստը հաստատված է այդ օրերի Գեւորգյան ճեմարանի ուսանողների եւ հոգեւորականների կողմից»*: Թեմայի շուրջ հաջորդ բաց նամակում, որը կրկին ստորագրված է նույն անունով, ասված է.

«...այն ուսանողը, որին պղծել է Եզրաս սրբազանը, եւ որին պայմանականորեն անվանում ենք «Մարչելո»՝ չցանկանալով այդ մարդուն հիշեցնել իր սոսկալի ապրումները, այսօր հոգեւորական է եւ ծառայում է արտասահմանի թեմերից մեկում»: **[2]**

3.4. Եզրաս արք. Ներսիսյանին վերագրվող մանկապղծության, ինչպես նաեւ միասեռական հակումների մասին տեղեկությունը հրապարակվել է նաեւ «Փաստ» լրատվամիջոցի կողմից: Դրանում, ի թիվս այլ տեղեկությունների, ասված է.

«Եզրաս (աշխարհիկ անունով՝ Մկրտիչ) Ներսիսյանը Գեւորգյան ճեմարանում սովորելու տարիներին, ըստ Արծրունի (Գրիգոր քահանա) Ավետիսյանի վկայության, մի քանի անգամ բռնաբարել է Արգենտինայից եկած եւ ճեմարանում կրթություն ստացող մի հայազգի մանկահասակի՝ Միքայել (Մարչելլո) անունով: Վերջինս հետագայում ձեռնադրվում է քահանա՝ Տեր Մասիս Գյուլումջյան (Գյումիյան) անունով՝ պաշտոնավարելով Իսպանիայում... Եզրասը ճեմարանում ուներ մի դասընկեր՝ Հակոբ անունով, որը նույնպես միասեռական էր: Հակոբը (մականունը՝ Հուդա) ձեռնադրվում է սարկավագ, ապա՝ աբեղա եւ անվանակոչվում հայր Խորեն: Գարեգին Բ-ն, իմանալով, որ այս եկեղեցականը համասեռամոլ է եւ իր եղբոր զուգընկերը, ոչ միայն կուսակրոն քահանայության է արժանացնում նրան, այլեւ ուղարկում է Զագորսկ՝ ուսումնառության եւ հետագայում նշանակում Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսուչ: Որոշ ժամանակ անց հայր Խորենը հեռանում է եկեղեցական ասպարեզից»: **[3]**

3.5. 2016թ-ին հրապարակվել է մեկ այլ տեղեկություն հոգեւորականների կողմից երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների մասին: Հայկական **[4]** եւ ֆրանսիական **[5]** մամուլը գրել է Երուսաղեմի հայոց պատրիարքության երկու (որոնցից մեկն արդեն հանգուցյալ է) եւ մեկ նախկին միաբաններին վերագրվող մանկապղծության դեպքերի մասին: Անչափահաս ժառանգավոր աշակերտ Հրայր Եզեկելյանի նկատմամբ սեռական ոտնձգությունների մեջ էին մեղադրվում Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը, Բեթղեհեմի Սբ. Ծննդյան վանքի նախկին տեսուչ Խաղ վարդապետ Ջունդուրյանը եւ Հայր Դեմետրիոս Աթարյանը:

3.6. Առկա են բազմաթիվ հրապարակումներ ու վկայություններ միասեռական հոգեւորականների վերաբերյալ, ինչը Եկեղեցու կանոնագրքով չի թույլատրվում եւ հակականոնական է: Մասնավորապես, 2013թ-ին «ՄԵԼ» երիտասարդական լիգայի համանախագահ Սեւակ Հովհաննիսյանը հայտնել է, թե ունի հավաստի փաստեր եւ լուսանկարներ, որ Մայր Աթոռում աշխատող Հակոբ աբեղա Գրիգորյանը նույնասեռական է: **[6]** Այս հայտարարությունից եւ համացանցում նկարների տարածումից հետո միայն աբեղան կարգալույծ է արվում: **[7]**

3.7. Եկեղեցում սեռական բնույթի կարգազանցությունների մասին հաստատող վկայություններ են հրապարակել նաեւ մի շարք հոգեւորականներ: Մասնավորապես, 2016թ-ին կարգալույծ արված Հովհաննես աբեղա Սահակյանը նույն թվականի օգոստոսին բաց նամակ էր հղել ՀԱՍԵ փաստացի պետին, որտեղ ի թիվս այլնի գրել էր.

> *«...Դուք ոչինչ չեք կառուցել, այլ միայն քանդել եք, եւ դրա վկայություն է լեփ-լեցուն համասեռամոլ հոգեւորականները, որոնք խրախուսվում են Ձեր կողմից եւ բարձր պաշտոններ են զբաղեցնում: Համատարած իգացման ֆոնին ծիծաղելի է խոսել հոգեւոր կյանքի մասին, այլ պետք է խոսել հոգեւոր ինքնասպանության մասին...»*: **[8]**

3.8. Նաթան արք. Հովհաննիսյանի միասեռական հակումների վերաբերյալ վկայել է կարգալույծ աբեղա Հարություն Հարությունյանը եւ պատմել է ճեմարանական տարիներին իր տեսած եւ լսած միջադեպերի մասին: **[9]** 2016թ-ին մամուլում տարածվել է «Մամիկոն Մանուկյան» ստորագրությամբ բաց նամակ, որում, ըստ հեղինակի, ներկայացվել են Մայր Աթոռի ներքին խոհանոցին վերագրվող պատմություններ.

> *«...շատ մտերիմ է մեկ այլ միաբանի՝ Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Խորեն աբեղա Առաքելյանի հետ, ով եւս ճեմարանում եւ միաբանների մոտ, ըստ ականատեսների, աչքի էր ընկնում իր միասեռական հակումներով: Խոսակցություններ կան, որ միասեռական հակումներ ունեցող միաբաններից է նաեւ Կյուրեղ վարդապետ Դավթյանը»:* **[9]**

3.9. «Փաստ» լրատվամիջոցի կողմից հրապարակվել է նաեւ այսպես կոչված՝ «համասեռամոլ հոգեւորականների» ցուցակ, որտեղ առկա է շուրջ 20 հոգեւորականի անուն: **[3]**

3.10. Կուսակրոնության ու բարեվարքության կանոնների խախտմանն առնչվող կարեւոր փաստարկված դեպք է նաեւ Արշակ արք. Խաչատրյանին վերագրվող ինտիմ բնույթի տեսանյութերի տարածումը, որտեղ, ըստ աղբյուրի պնդման, արքեպիսկոպոսը սեռական կապ է ունենում իր ազգականի հետ: Չնայած արքեպիսկոպոսի կողմից հերքմանը՝ ՀՀ Քննչական կոմիտեն փորձաքննության է ենթարկել տեսանյութերը, ինչի արդյունքում հաստատվել է տեսանյութերի իսկությունը: **[10]**

3.11. Արշակ արք. Խաչատրյանի վերաբերյալ տեսանյութի արտահոսքից հետո մի խումբ եպիսկոպոսներ հանդես եկան բաց հայտարարությամբ, որում նրանք ՀԱՍԵ փաստացի պետին մեղադրում են այն բանում, որ նա ամեն կերպ փորձում է կոծկել Արշակ արք. Խաչատրյանի սրբապղծությունը եւ դրանով «հովանավորում է սրբապղծությունը»: Եպիսկոպոսների ստորագրությամբ հայտարարության մեջ պահանջ էր ներկայացված հեռացնել արքեպիսկոպոս Խաչատրյանին, ինչը, սակայն, տեղի չունեցավ: **[11]** Նշված տեսանյութերն ուսումնասիրելու եւ դրանց առնչությամբ եզրակացություն ներկայացնելու նպատակով Մայր Աթոռում ստեղծվել է հանձնախումբ, որի անդամները, ուսումնասիրելով հարցը եւ ստանալով ՀՀ Քննչական կոմիտեի փորձագիտական եզրակացությունը, նամակով դիմել են փաստացի կաթողիկոսին՝ առաջարկելով որոշակի ժամանակով դադարեցնել Մայր Աթոռում արքեպիսկոպոս Խաչատրյանի զբաղեցրած բոլոր պաշտոններն ու եկեղեցական ծառայությունները: ՀԱՍԵ փաստացի պետն առ ոչինչ է համարել իր իսկ կողմից ստեղծված հանձնախմբի ներկայացրած փորձաքննության արդյունքները: **[12]**

3.12. Լրատվամիջոցներում առկա է նաեւ տեղեկություն այն մասին, որ 2017–2018 ուստարում Սեւանի Վազգենյան դպրանոցում տեղի է ունեցել ուսանողի ինքնախեղման (ամորձատման) դեպք: Ըստ հրապարակման՝ տեսուչ Նշան վրդ. Հմայակյանն այս մասին հարցազրույց է տվել, սակայն այն օրեր անց հեռացվել է համացանցից: Թեմայի շուրջ Տարոն քահանա Հունանյանը մեկնաբանել է, որ երիտասարդը տուժել է ու որպես հավանական պատճառ մատնանշել է քրիստոնեական վարդապետության վատ մատուցումը սաներին.

> *«...հոգեւոր կերպար չունեցող եկեղեցական առաջնորդների եւ իր ածանցյալների հոգեբանությունից կամ նրանցից վերցված օրինակով երիտասարդը կարող էր սխալ հասկանալ քրիստոնեական վարդապետությունը, եւ դրա համար կարող են նման դեպքեր լինել»*: **[13]**

3.13. Ճեմարաններում անառողջ մթնոլորտի, սաների հետ բիրտ ու դաժան վերաբերմունքի մասին առկա է վկայություն հենց Գեւորգյան ճեմարանի նախկին փոխտեսուչ Եղիա աբեղա Խաչատրյանի կողմից.

> *«Փոխարէնը ճեմարանում պատահականօրէն յայտնուել էին այնպիսի աննկարագիր ուսանողներ, ովքեր իրենց փողոցային պահուածքով եւ «գողական» մտածելակերպով չէին տարբերւում դրսի տղաներից: Երբ փորձեցի կարգի հրաւիրել այդ սաներին, տեսչութեան կողմից հանդիպեցի լուրջ դիմադրութեան, քանի որ, ինչպէս յետագայում բացայայտեցի, այդ անձինք տարբեր եկեղեցականների ծանօթ-ազգականներն էին: Սրանք վատ օրինակ էին հանդիսանում ճեմարանի մնացեալ սաների համար: Տեսուչը նրանց հետ այնքան բիրտ ու դաժան էր վարւում, որ ես սարսափում էի»*: **[14] [15]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.14. Հոգեւորականների բարեվարքությանն առնչվող թվարկված կարգազանցությունները ՀԱՍԵ Կանոնագրքի կանոններով մերժելի եւ դատապարտելի են, իսկ դրանք թույլ տվող հոգեւորականները պետք է հեռացվեն միաբանների շարքերից: Այս ամենով հանդերձ՝ տվյալ կարգազանցությունների նկատմամբ ՀԱՍԵ փաստացի պետի դրսեւորած ըմբռնման ու ընտրողաբար պատժելիության մթնոլորտի պայմաններում առկա չեն քննության եւ վճիռների անաչառ եւ թափանցիկ մեխանիզմներ:

3.15. Մայր Աթոռում 2011թ-ից ստեղծված Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախումբը չունի անհրաժեշտ ընթացակարգերով հաստատված կանոնադրություն, նրա կազմը միանձնյա նշանակում է ՀԱՍԵ փաստացի պետը, եւ այն իրավասու չէ քննելու եպիսկոպոսների ու Կաթողիկոսի հարցերը: Այսինքն՝ կաթողիկոսին եւ բարձրաստիճան հոգեւորականներին ուղղված մեղադրանքները քննելու իրավասու ատյան փաստացի գոյություն չունի: **[16]**

ԱՄՓՈՓՈՒՄ

3.16. Բարձրաստիճան հոգեւորականների կողմից կուսակրոնության ուխտի եւ բարեվարքության խախտումների հաղորդված դեպքերը պատշաճ քննության չեն արժանանում: ՀԱՍԵ փաստացի պետի կառուցած՝ հոգեւորականների բարեվարքության քննության ձեւական մեխանիզմները ոչ միայն զուրկ են անաչառությունից եւ անկողմնակալությունից, այլեւ ամբողջությամբ ենթակա են իր միանձնյա վճիռներին, զուրկ են իրավազոր հիմքերից, իսկ կաթողիկոսին եւ բարձրաստիճան հոգեւորականներին ուղղված մեղադրանքները քննելու իրավասու ատյան փաստացի գոյություն չունի:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Usarmenianews.com (2016-03-27). «Կաթողիկոսի եղբայրը պեդոֆիլ է». https://www.usarmenianews.com/am-n-2327.html
2. Usarmenianews.com (2016-05-10). «Ամենայն հայոց կաթողիկոսը քաջություն չունեցավ իր հարազատ եղբոր ՝ մանկապղծության հետ կապված փաստված լուրի հիման վրա հայրապետական քաջ որոշում ընդունել». https://www.usarmenianews.com/am-n-3425.html
3. Past.am (2019-03-21). «Հրապարակվել է Հայ Առաքելական եկեղեցու համասեռամոլ հոգեւորականների անունները». https://past.am/?p=213589&l=am#gsc.tab=0
4. Armlur.am (2016-03-22). «Սկանդալ. հանգուցյալ Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը՝ մանկապիղծ». https://armlur.am/504424/

5. Le progres (2016-03-19). «A pedophilia case hits the Armenian church». https://www.leprogres.fr/faits-divers/2016/03/19/une-affaire-de-pedophilie-frappe-l-eglise-armenienne-ilgv
6. Aravot.am (2013-11-13). «Նոր աղանդ՝ Երեւանում, համասեռամոլ աբեղա՝ Մայր Աթոռում». https://www.aravot.am/2013/11/13/405067/?replytocom=927150
7. Armlur.am (2014-07-19). «Համասեռամոլության մեջ կասկածվող աբեղան կարգալույծ արվեց». https://armlur.am/203380/
8. Վարդգես (Հովհաննես աբեղա) Սահակյան (2016-08-18). «Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսին». https://my.mamul.am/am/post/61336
9. Մամիկոն Մանուկյան (2016-08-31). «Միասեռական հոգեւորականներ Հայ եկեղեցո՞ւմ». https://m.mamul.am/am/post/61598; Armtimes.com (2025-10-20) «Նաթանի մականունը Նատաշա է, տղաներին ասում էր՝ ձեր ոտքերը ինձ գայթակղում են. բացահայտ համասեռամոլ է». https://www.youtube.com/watch?v=hu5xKluAG88
10. Armtimes.com (2025-11-27). «Հաստատվել է Արշակ Խաչատրյանի մասնակցությամբ տեսանյութերի իսկությունը. լուսանկարներ». https://www.armtimes.com/hy/article/326621
11. Factor.am (2025-11-24). «Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանը կհեռանա՞ Մայր Աթոռից. ովքեր են ստորագրել գաղտնազերծված դիմումի տակ». https://factor.am/956214.html
12. Արմենպրես (2025-11-27). «Գարեգին Բ-ն անհավատարիմ է գտնվել կաթողիկոսական օծմամբ ստանձնած իր ուխտին. մի խումբ բարձրաստիճան հոգեւորականներ հայտարարություն են տարածել». https://armenpress.am/hy/article/1236166
13. Armtimes.com (2026-07-30). «Ամորձատում, սեռավարակ, հույն քավոր, գերեզմանի վաճառք. ինչ է կատարվում Մայր Աթոռում. Տեր Տարոնը՝ լուրերի մասին». https://armtimes.com/hy/article/340927
14. Armlur.am (2013-08-27). «Մայր Աթոռում ապրելը գնալով դառնում է անհնարին, իսկ մթնոլորտը՝ վանող». https://armlur.am/52411/
15. Hraparak.am (2013-08-30). «Եղիա աբեղա Խաչատրյանի պարզաբանումը». https://hraparak.am/am/post/591fb837e3d84d0d37fd9f4a
16. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին. «Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախումբ». https://www.armenianchurch.org

04

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը կամայական հետապնդումների է ենթարկում հոգեւորականներին՝ իր ենթակաների վերաբերյալ տարածելով վարկաբեկող նյութեր, միանձնյա որոշումներով՝ առանց պատշաճ քննության ընթացակարգերի, կարգալույծ է հռչակում հակականոնական գործունեությամբ զբաղվելու հրահանգներին հակադրվող եւ Եկեղեցում ստեղծված արատավոր բարքերը քննադատող հոգեւորականներին:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Արշակ արք. Խաչատրյանի մասնակցությամբ ինտիմ տեսանյութի շուրջ ծագած ճգնաժամի առնչությամբ առանձին ուշադրության է արժանի Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի վկայությունը: Ըստ Սարոյանի հրապարակային պնդման՝ նշված նյութերը սկզբում տարածվել են հենց եպիսկոպոսների շրջանում՝ ՀԱՍԵ փաստացի պետի հանձնարարությամբ: **[1]**

4.2. Ըստ վկայությունների՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի նախկին առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանին 2001թ-ին ՀԱՍԵ փաստացի պետը կարգալույծ է հռչակել հեռախոսային զանգով՝ առանց կանոնական քննիչ ատյանի գործարկման՝ նրան փոխարինելով իր սեփական եղբորով՝ Եզրաս Ներսիսյանով: Այս կամայական որոշմանը հետին ամսաթվով օրինական տեսք տալու համար նա գործի է դրել իր կողմից միանձնյա եւ ապօրինի վերակազմավորված Գերագույն հոգեւոր խորհուրդը, ինչին կտրականապես դեմ են արտահայտվել եւ որոշման տակ չեն ստորագրել Երուսաղեմի ու Պոլսո պատրիարքները: **[2]** Ըստ Կյուրեղյանի՝ Մայր Աթոռը *«Գարեգին Բ-ի օրոք ֆինանսական գույքի կենտրոնացման կանոնադրական լծակներով եւ պատժիչ գործելաոճով ասպարեզից հեռացնում է բոլոր ազնիվ ու պատրաստված հոգեւորականներին»*: **[3]**

4.3. ՀԱՍԵ փաստացի պետին ուղղված՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի բաց նամակների շարքում բարձրաձայնվում են Մայր Աթոռում տիրող վախի, սպառնալիքների ու կամայականությունների մթնոլորտը, ինչպես նաեւ նյութական շինարարության ստվերում հոգեւոր արժեքների համակարգային անտեսումը: Պատրիարքը խիստ քննադատության է ենթարկում եկեղեցական նվիրապետության կոպիտ խախտումները, երբ հանուն անձնական քմահաճույքների կամ քաղաքական շահերի հալածանքների են ենթարկվում եւ ասպարեզից հեռացվում վաստակաշատ հոգեւորականները, «մինչդեռ համակարգը լցվում է կամազուրկ ու շողոքորթ տարրերով»: Ըստ պատրիարքի՝

> *«Այս իրողությունները ոչ միայն խաթարում են ներեկեղեցական առողջ սերնդափոխությունը, այլեւ Մայր Եկեղեցին կանգնեցնում են հոգեւոր ու կառուցվածքային ամբողջական կործանման վտանգի առաջ»*: **[4] [5]**

4.4. ՀԱՍԵ փաստացի պետին ուղղված՝ Պոլսո հայոց նախկին պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի նամակում ուղղակիորեն բարձրաձայնվում է ՀԱՍԵ փաստացի պետի կողմից Եկեղեցու դարավոր ավանդույթների ու կանոնադրական դրույթների կոպիտ ոտնահարման մասին: Պատրիարքը խիստ քննադատության է ենթարկում նրա միանձնյա գործելաոճը, ինչը դրսեւորվում է այլ նվիրապետական Աթոռների իրավասություններին միջամտելով, Վատիկանի հետ առանց եկեղեցական օրինական մարմինների նախնական համաձայնության կանոնական ուժ չունեցող փաստաթղթեր ստորագրելով, թեմական առաջնորդներին կամայականորեն պաշտոնանկ անելով եւ ընտրովի լիազորություններ ունեցող Գերագույն հոգեւոր խորհրդի կազմը սեփական հրամանով միանձնյա նշանակելով: **[6]** Բացի այդ, Վիկիլիքսում տեղ է գտել նաեւ ԱՄՆ դիվանագիտական հաղորդագրությունը, որտեղ Պոլսո պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը ուղղակիորեն հայտարարում է, որ *«Գարեգինի կաթողիկոսական ընտրությունը 1999 թվականին ժողովրդավարական չէր եւ, ըստ էության, կազմակերպվել էր ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից»*: **[7]**

4.5. 2013թ-ին ներեկեղեցական կառավարման եւ կարգապահական պրակտիկայի վերաբերյալ հանրային քննարկման առարկա դարձավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նախկին փոխտեսուչ Եղիա աբեղա Խաչատրյանի հեռացման գործը: 2013թ. օգոստոսին Գարեգին Բ-ին հասցեագրված բաց նամակով նա հայտարարեց, որ իր նկատմամբ կիրառվել են «անտեղիտալի հալածանքներ»՝ կապված իր «հոգեւոր նկարագրի եւ աշխարհայացքի» հետ, եւ որ այդ մասին բազմիցս նամակներով զեկուցագրել է Կաթողիկոսին՝ առանց արդյունքի: **[8]** Հաջորդ նամակով աբեղան մանրամասն ներկայացրել է ճեմարանում տիրող «յոռի բարքերն» ու աշխարհիկ մթնոլորտը, տեսչության հետ ունեցած լարվածությունը, ինչպես նաեւ լուսարարապետի կիրառած «հակականոնական, անհիմն եւ քմահաճ» պատիժները: **[9]** Նույն տարվա դեկտեմբերին ՀԱՍԵ փաստացի պետի տնօրինությամբ Եղիա աբեղա Խաչատրյանը կարգալույծ հռչակվեց՝ «ուխտազանցության եւ եկեղեցականին անհարիր ընթացքի» հիմնավորմամբ: Հետագայում, արդեն որպես աշխարհական, նա հրապարակային հարցազրույցում խիստ քննադատության ենթարկեց ՀԱՍԵ փաստացի պետին ու Մայր Աթոռի կառավարումը՝ պնդելով, որ եկեղեցում ձեւավորվել է «անձի պաշտամունք», պաշտոնները տրվում են ազգակցական-բարեկամական կապերով, կարգալուծությունը վերածվել է վախեցնելու գործիքի, իսկ կարգալուծությունների հիմքերը ստուգող մեխանիզմ չկա: **[10]**

4.6. 2014թ-ին մեծ աղմուկ բարձրացավ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում 14 տարի ծառայած Մարտիրոս քահանա Բերբերյանի՝ ՀԱՍԵ փաստացի պետի տնօրինությամբ կարգալույծ հռչակվելու դեպքը: Մարտիրոս քահանա Բերբերյանը մեծ համբավ եւ

հեղինակություն ուներ մոսկվաբնակ հայերի շրջանում իր անբասիր ու նվիրված հոգեւոր ծառայության համար եւ հատկապես այն հանգամանքով պայմանավորված, որ բոլոր տեսակի ծեսերը եւ ծառայությունը հավատավոր ժողովրդին մատուցում էր առանց որեւէ գումարի կամ նվիրատվության: [11] Քանի որ քահանան նաեւ աշխատավարձ չէր ստանում թեմից, իր եկամտի միակ աղբյուրը եղբոր հետ ունեցած խաղալիքի վաճառքի ընկերությունն է եղել: Այս պատրվակով երկար տարիներ ենթարկվելով ՀԱՍԵ փաստացի պետի եղբոր՝ Եզրաս արք. Ներսիսյանի հետապնդումներին, վերջիվերջո կարգալույծ է հռչակվում «եկեղեցականին անհարիր ընթացքի համար»: [12]

4.7. Արամ քահանա Ասատրյանը 2025թ-ին ֆեյսբուքյան գրառմամբ հանդես եկավ եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականների հասցեին քննադատական հրապարակմամբ՝ անդրադառնալով եկեղեցու ներքին կառավարման, հոգեւոր իշխանության գործելակերպի եւ կարգապահական մեխանիզմների վերաբերյալ իր մտահոգություններով.

> *«Այսօր այլեւս անհրաժեշտություն է, եւ կարեւոր է ընդունել, այն փաստը որ Եկեղեցական իշխանության ներսում պետք է ստեղծվեն անկախ դատական եւ կարգապահական մարմիններ, որոնք ի տարբերություն այսօրվա «կարգապահական հանձնախումբերի», որտեղ դատավոր, դատախազ, ատենակալներ, փաստաբաններ վճիռ կայացնողներ եւ բեկանողներ զանազանված չեն եւ ըստ էության հոգեւորականի իրավունքների եւ արժանապատվության ոտնահարման ատյան են, կքննարկվեն քահանաների նկատմամբ կիրառվող միջոցառումները՝ բացառելով անհիմն պատժամիջոցները կամ կեղծ պատճառաբանությունները: Պետք է կիրառվեն հստակ կարգավորումներ, որոնք կվերականգնեն քահանաների ապօրինի սահմանափակված իրավունքները»*: [13]

Այնուհետեւ «Առաջին ալիքի» եթերում Արամ քահանա Ասատրյանը շարունակում է քննադատությունը եկեղեցու վերնախավի նկատմամբ: Հետագայում այս հայտարարությունների արդյունքում հոգեւորականը ՀԱՍԵ փաստացի պետի տնօրինությամբ կարգալույծ հռչակվեց՝ որպես հիմք նշելով Արագածոտնի թեմի առաջնորդի զեկուցագիրը եւ կարգապահական հանձնախմբի եզրակացությունը: [14] [15] [16]

Արամ քահանա Ասատրյանի հրապարակային քննադատություններից հետո նրան աջակցություն հայտնած հոգեւորականներից Տարոն քահանա Հունանյանը եւ Թադեւ քահանա Թախմազյանը եւս կարգալույծ են արվել ՀԱՍԵ փաստացի պետի կողմից: [17] [18] [19] [20]

4.8. Հանրային հեռուստաընկերության եթերում երկու հարցազրույցով Մասյացոտնի թեմի առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանն անդրադարձել էր ՀԱՍԵ ներքին խնդիրներին, կառավարման համակարգին եւ բարեփոխումների անհրաժեշտությանը: [21] [22] Դրանից հետո եւս ՀԱՍԵ փաստացի պետի տնօրինությամբ Գերագույն հոգեւոր խորհրդի որոշման հիման վրա Գեւորգ եպիսկոպոս Սարոյանն ազատվել է Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնից, ապա կարգալույծ է հռչակվել: [23] Եպիսկոպոսը դատական հայց էր ներկայացրել ՀԱՍԵ դեմ՝ իրեն անհիմն կերպով Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնից ազատելու համար, ինչի արդյունքում դատարանը բավարարել է հայցադիմումի միջնորդությունը եւ կիրառել է հայցի ապահովման միջոց՝ վերականգնելով Գեւորգ եպիսկոպոս Սարոյանին Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնում: [24] Ավելի ուշ դատարանի վերջնական որոշմամբ ուժի մեջ է թողնվել դատարանի միջանկյալ որոշումը: [25] Միեւնույն ժամանակ, քանի որ ՀԱՍԵ փաստացի պետը եւ որոշ եպիսկոպոսներ խոչընդոտել էին նշված դատական ակտի կատարմանը, դատախազությունը հաստատել է վեց եպիսկոպոսի եւ կաթողիկոսի գործով մեղադրական եզրակացությունը եւ ուղարկել դատարան: [26]

4.9. 2025թ-ին համացանցում տարածվեց 2023թ-ին տեղի ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրություն Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի եւ կաթողիկոսի նախկին գավազանակիր Աղան աբեղա Երնջակյանի մասնակցությամբ: Դրանում Աղան աբեղա Երնջակյանը գանգատվում է ՀԱՍԵ փաստացի պետի կողմից իր նկատմամբ կիրառված կամայականություններից, ինչպես նաեւ՝ հակականոնական կարգադրություններին չենթարկվելու արդյունքում իր նկատմամբ կիրառված պատիժներից: Աղան աբեղա Երնջակյանը զրույցի ընթացքում փաստում է.

> *«Կաթողիկոսն ինձ ասում ա՝ ընտանիքիդ անդամներին ինչի՞ չես վերցնում գնաս միտինգ անես Նիկոլի դեմ... Կաթողիկոսն ինձ ասեց՝ Նիկոլը մեղքի խորհրդանիշն ա, էն եկեղեցականը, ով որ մեղքի դեմ չի պայքարում, նա եկեղեցականի կոչում չունի... Ի՞նչ է նշանակում «մորդ վերցրու գնա Նիկոլի դեմ»... Եւ այդ հանձնարարությունը չանելը նշանակում ա անհնազանդություն...»*: **[27]**

2023թ-ի դեկտեմբերի 1-ին ՀԱՍԵ փաստացի պետի հայրապետական տնօրինությամբ Տ. Աղան աբեղա Երնջակյանը կարգալույծ էր հռչակվել: Հրապարակային պաշտոնական աղբյուրներում այդ որոշման հիմքում նշված չէ որեւէ կարգապահական խախտում, քաղաքական հայտարարություն կամ պատճառ, այլ նշված է, թե իբրեւ կարգալուծումը կատարվել է աբեղայի դիմումի համաձայն: Սակայն ձայնագրությունից ակնհայտ է դառնում, որ աբեղային այնպիսի հակականոնական պահանջներ են ներկայացվել ու ճնշումներ են գործադրվել ՀԱՍԵ փաստացի պետի կողմից, որ նա ստիպված է եղել իր դիմումի համաձայն հրաժարվել ծառայությունից: Այժմ ձայնագրության մասով հարուցված է քրեական գործ: **[28]** **[29]**

4.10. Տարբեր ժամանակներում իրենց նկատմամբ հալածանքների, հետապնդումների եւ Մայր Աթոռում զանազան արատավոր դրսեւորումների մասին են բարձրաձայնել բազում այլ եկեղեցականներ, ներկա եւ կարգալույծ հոգեւորականներ, այդ թվում՝ Աբել քահանա Մանուկյանը **[30]**, Սահակ քահանա Գալուստյանը **[31]**, Հովհաննես աբեղա Սահակյանը **[32]**, Խորեն վարդապետ Հովհաննիսյանը **[33]**, Եղիա աբեղա Խաչատրյանը **[34]**, Գարեգին աբեղա Հարությունյանը **[35]** եւ շատ ուրիշներ **[36]**:

4.11. Ըստ Մայր Աթոռի պաշտոնական հաղորդագրության՝ ՀԱՍԵ փաստացի պետի գահակալության 26 տարիների ընթացքում կարգալույծ է հռչակվել 100-ից ավել հոգեւորական, ընդ որում, ըստ այդ պարզաբանման՝ 38-ն ասպարեզը թողել է իր դիմումի համաձայն, 27-ն ինքնակամ լքել է ծառայության վայրը, 15-ը՝ թեմական առաջնորդների ներկայացրած միջնորդագրերի հիման վրա, 21-ը՝ ուղղակիորեն կաթողիկոսի կողմից: **[37]** Դատելով վերոնշյալ, ինչպես եւ բազմաթիվ այլ հաղորդումներից ու վկայություններից՝ ՀԱՍԵ փաստացի պետի մոտ ընդունված պրակտիկա է պարտադրված կարգալուծումները պաշտոնապես ներկայացնել որպես «սեփական դիմումի համաձայն»՝ ինչպես Աղան աբեղա Երնջակյանի դեպքն է:

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.12. Ինչպես արձանագրված է 3.15-ում՝ Մայր Աթոռում 2011թ-ից ստեղծված Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախումբը չունի անհրաժեշտ ընթացակարգերով հաստատված կանոնադրություն, նրա կազմը միանձնյա նշանակվում է ՀԱՍԵ փաստացի պետի կողմից, եւ այն իրավասու չէ քննելու եպիսկոպոսների ու կաթողիկոսի հարցերը: Տվյալ հանձնախմբում դատավորի, դատախազի, պաշտպանի եւ վճիռ կայացնողի գործառույթները տարանջատված չեն, ինչը դարձնում է վարույթը ձեւական եւ մեկ անձի կամքից կախված:

ԱՄՓՈՓՈՒՄ

4.13. ՀԱՍԵ փաստացի պետի կաթողիկոսության ողջ շրջանում եւ հատկապես 2025-2026թթ-ին կարգապահական վարույթներն ամբողջությամբ գործիքայնացվել են: Կանոնազուրկ եւ միահեծան հանձնախմբի միջոցով ՀԱՍԵ փաստացի պետը կամայական հետապնդումների է ենթարկում եւ կարգալույծ է հռչակում Եկեղեցու կառավարումը հրապարակավ քննադատած կամ քննադատներին աջակցած հոգեւորականներին, այդ թվում՝ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ եպիսկոպոսի, մինչդեռ բարեվարքության ծանր մեղադրանքների առարկա դարձած հոգեւորականները մնում են պաշտոններում եւ նրանց գործերը չեն քննվում:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հանրային հեռուստաընկերություն/Լուրեր (2026-01-16). «Արշակ սրբազանին վերագրվող տեսանյութը նախ տարածվել էր եպիսկոպոսների շրջանում. Գեւորգ եպիսկոպոս Սարոյան»
2. Hetq.am (2011-11-04). «10 տարի առաջ կարգալույծ արված թեմի առաջնորդը պատրաստվում է դատի տալ «Արմենիա TV»-ին». https://hetq.am/hy/article/6131
3. Mamul.am (05.05.2014). «Գարեգին կաթողիկոսը նստած գահին իրեն Աստված է զգում...». https://my.mamul.am/am/post/29490
4. Civilnet.am (2013-08-06). ««Սպառնալիքը չի՛ պատշաճիր կրօնականին». Երուսաղեմի պատրիարքը՝ Վեհափառ Հայրապետին». https://civilnet.am/hy/news/123645
5. Armlur.am (2014-11-28). «Երուսաղեմի Պատրիարքը Գարեգին Բ-ին կոչ է արել կարգազուրկ լինել եւ Հայոց եկեղեցին փրկել կործանումից». https://armlur.am/572132/
6. Mamul.am (2019-03-18). ««Գարեգին Բ-ի ընտրությունները ժողովրդավար չեն եղել եւ ղեկավարվել են Քոչարյանի կողմից». Պատրիարք Մութաֆյան». https://m.mamul.am/am/post/86225
7. Wikileaks (2003-03-26). «ARMENIAN PATRIARCH MESROB II ON THE CHURCH, ARMENIA, AND TURKEY». https://wikileaks.org/plusd/cables/03ISTANBUL399_a.html
8. Armlur.am (2013-08-27). «Մայր Աթոռում ապրելը գնալով դառնում է անհնարին, իսկ մթնոլորտը՝ վանող». https://armlur.am/52411/ ; Կարգալույծ հռչակելու մասին - https://168.am/2013/12/16/310229.html
9. Hraparak.am (2013-08-30). «Եղիա աբեղա Խաչատրյանի պարզաբանումը». https://hraparak.am/am/post/591fb837e3d84d0d37fd9f4a
10. A1+ (2018-07-27). «Բացահայտումներ Կաթողիկոսի մասին». https://a1plus.am/hy/article/190155 ; Տեսանյութ - https://www.youtube.com/watch?v=XKS6Qa7MMHc
11. Hraparak.am (2014-05-05). «Մտավորականի բողոքը եկեղեցում տիրող անարդարությունների դեմ». https://hraparak.am/am/post/591fb0f5e3d84d0d37fd641d
12. 168.am (2014-05-02). «Ինչու են կարգալույծ արել Տեր Մարտիրոս Բերբերյանին. «Ես անարծաթ ծառայում էի ժողովրդին»». https://168.am/2014/05/02/360541.html
13. Տեր Արամ (01.09.2025) «Պետք է կիրառվեն հստակ կարգավորումներ, որոնք կվերականգնեն քահանաների ապօրինի սահմանափակված իրավունքները»
14. Արագածոտնի թեմ (12.09.2025) «Տեր Արամը պետք է անդրադառնա, որ խնդիրների նմանօրինակ արծարծումը հանրային հարթակներում չարամատորեն կարող է շահարկվել այլոց կողմից, ինչը եւ տեղի է ունենում այս դեպքում»:
15. Հանրային հեռուստաընկերություն (16.09.2025) «Տեր Արամ քահանա Ասատրյանի հարցազրույցը Պետրոս Ղազարյանի հետ»
16. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին. Հայտարարություն (21.10.2025) «Կարգալույծ է հռչակվել Տ. Արամ քահանա Ասատրյանը»
17. Տեր Տարոն (03.10.2025) Հրապարակում «Ես հավատում եմ, որ չլռելու ժամանակն է, ճշմարտությունը չլռեցնելու ժամանակը»
18. Տեր Թադէ (28.09.2025) Հրապարակում «Նա բարձրացրել է խնդիրներ, որոնք գաղտնիք չեն վաղուց, որոնց մասին շատերս լռում ենք՝ երբեմն կարգալուծությամբ պատժվելու վախից, երբեմն չհասկացվելու եւ միայնակ մնալու մտահոգությունից»
19. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (06.11.2025) «Կարգալույծ է հռչակվել Տավուշի թեմի հոգեւոր սպասավոր Տ. Տարոն քահանա Հունանյանը»
20. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (03.12.2025) «կարգալույծ է հռչակվել Թալինի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տ.Թադէ քահանա Թախմազյանը»
21. Հանրային հեռուստաընկերություն (02.12.2025). «Հարցազրույց Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի հետ». https://www.1lurer.am/hy/tv_program/zhdqa
22. Հանրային հեռուստաընկերություն (12.01.2026). «Հարցազրույց Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի հետ». https://www.1lurer.am/hy/2026/01/12/1/1445805
23. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (27.01.2026). Կարգալույծ է հռչակվել Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը
24. Արմենպրես (17-01-26). «Դատարանի որոշմամբ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը վերականգնվել է Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնում». https://armenpress.am/hy/article/1239849
25. Բարենորոգում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու (2026-02-13). «Դատարանի որոշմամբ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը հանդիսանում է Մասյացոտնի թեմի առաջնորդ».

    https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0y74siSRqF8vJH1ZUrfst5CXcv8axziy26DhxEH3VQeufDerzqSK5MfrFfs7t7rkrl&id=61584788970921
26. Radar.am (2026-07-31). «Գարեգին Բ կաթողիկոսի եւ 6 եպիսկոպոսների գործն ուղարկվել է դատարան». https://radar.am/hy/news/social-2770533900/
27. Առաջին ալիք. Լուրեր (17.10.2025). «Նաթան արքեպիսկոպոսի եւ Աղան աբեղայի ձայնագրությունը». https://www.youtube.com/watch?v=dXkEeMewSso

28. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (04.12.2023) Հայրապետական տնօրինությամբ եւ իր դիմումի համաձայն կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռի միաբան Հոգեշնորհ Տ. Աղան աբեղա Երնջակյանը:

29. Ազատություն (17.10.2025). «ՔԿ. Հոգեւորականներին վերագրվող ձայնագրության վերաբերյալ հաղորդման առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել».
https://www.azatutyun.am/a/kk-hogevorakannerin-veragrvogh-dzaynagroutyan-veraberyal-haghordman-artiv-kreakan-varouyt-e-nakhadzernvel-/33562883.html

30. Tert.am (2011-06-03). «Շվեյցարահայ քահանան՝ կաթողիկոսին. Ոչ Ձեզանից կարգ ստանալն է պատիվ, ոչ էլ կարգալույծ լինելը՝ անպատվություն». https://tert.am/am/news/2011/06/03/abel/290728

31. Armtimes.com (2011-06-29). «Ովքե՞ր են վեհափառի ֆավորիտները». https://armtimes.com/hy/article/26171

32. Mamul.am (2016-08-21). ««Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին վերածվել է հոգեւոր անապատի՝ լեցուն օձերով եւ կարիճներով». Հայր Հովհաննես». https://my.mamul.am/am/post/61336

33. Mamul.am (2019-02-23). ««Գարեգին Բ-ն չարիք եւ պատուհաս է ոչ միայն այսօրվա, այլ նաեւ վաղվա համար». բաց նամակ Փաշինյանին». https://my.mamul.am/am/post/85963 ; Խորեն Հովհաննիսյան (2026-01-12). «Հրեշը եւ ես».
https://www.facebook.com/nshank.hovhannisyan/posts/pfbid02rz44LLPCmjJaegUtrVdSYo52YcMGVnhQTsnYoY6AFwTNgsdft9BrXxmLeJYSReM5l

34. Mamul.am (2018-09-14). «Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն ավելի մեծ եւ վտանգավոր չարիք է, քան իրեն ծնած եւ սնած Գարեգին Բ-ն»». https://my.mamul.am/am/post/82764

35. Mamul.am (2018-07-13). «Գարեգին-Կտրիճ Ներսիսյանը ձերբակալվել ու մեկ գիշերվա ընթացքում արտաքսվել է Գերմանիայից». https://my.mamul.am/am/post/81404

36. Mamul.am (2019-02-01). «Սուրբ Էջմիածնի Սրբալույս Գահին պետք է բազմի իսկապես արժանի կաթողիկոս». https://my.mamul.am/am/post/85673

37. Civilnet.am (2026-01-09). «Գարեգին Բ-ի օրոք կարգալույծ է հռչակվել 101 հոգեւորական. Մայր Աթոռ». https://civilnet.am/hy/news/995646

05

ՀԱՍԵ գործունեությունը դուրս է ֆինանսական թափանցիկությունից. Եկեղեցու նմանօրինակ գործունեության արդյունքում առաջանում է հսկայական ստվերային շրջանառություն: Եկեղեցուն արվող հսկայածավալ նվիրաբերումների տնօրինման վերաբերյալ հաշվետվություններ չեն հրապարակվում, որի պայմաններում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետի ընտանիքի անդամների ցուցադրական բարեկեցությունը ողջամիտ կասկածներ է առաջացնում:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. ՀԱՍԵ ֆինանսական գործունեության եւ գույքի տնօրինման թափանցիկության հարցը մշտապես եղել է հանրային եւ քաղաքական քննարկումների առանցքային թեմաներից մեկը: Քննադատությունները հիմնականում վերաբերում են եկեղեցու ֆինանսական հաշվետվողականության բացակայությանը, նվիրատվությունների, եկամուտների եւ ծախսերի ոչ հրապարակայնությանը, ինչպես նաեւ հարկային պարտավորությունների կարգավիճակին:

5.2. 2024թ-ի մայիսին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԱԺ-ում հայտարարեց, որ կառավարությունը Հայ Առաքելական Եկեղեցուն առաջարկել է ներդնել հարկային հաշվառման համակարգ՝ միաժամանակ պարտավորվելով եկեղեցուց հավաքագրված հարկերի ամբողջ գումարը վերադարձնել հենց եկեղեցուն: Առաջարկը մերժվեց, ինչը վարչապետը կապեց ֆինանսական թափանցիկության խնդրի հետ: **[1]** Հայտարարության առնչությամբ Մայր Աթոռը հրապարակեց պաշտոնական հայտարարություն, որտեղ վարչապետի՝ առաջարկը մերժած լինելու պնդման վերաբերյալ պարզաբանում առկա չէր եւ հետագայում եւս այդպես էլ մեկնաբանություն չհրապարակեց, թե ինչ հիմքով է այն մերժվել: **[2]** 2026թ-ի ապրիլին վարչապետ Նիկոլ Փաշինյանը կրկին հայտարարեց, որ եկեղեցին չպետք է բացառվի

համընդհանուր հայտարարագրման եւ հարկային համակարգից՝ նշելով, որ եկեղեցականները եւս պետք է հայտարարագրեն իրենց եկամուտները, իսկ հավաքագրված հարկերը պետությունը պատրաստ է ամբողջությամբ վերադարձնել եկեղեցուն՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով նաեւ լրացուցիչ ֆինանսավորում: [3]

5.3. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վերստուգիչ հանձնախմբի ատենապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը 2024թ. մայիսին արձանագրել է Եկեղեցու եկամուտների գերակշիռ մասի՝ ոչ հարկվող եւ, ըստ էության, ոչ հայտարարագրվող լինելու փաստը.

> *«Մոմի եւ մյուս պարագաների վաճառքից ստացված եկամուտը ընդհանուր առմամբ, Մայր Աթոռի իրականացրած ծախսերի 10-15 տոկոսն է փակում: Պարզ հարց կառաջանա, թե այդ դեպքում ինչպե՞ս ենք մեր մյուս ծախսերը փակում: Փակում ենք մեր ստացած շնորհների, տրամադրված հանգանակությունների հաշվին... Հարկային օրենսգրքի համաձայն ոչ առեւտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվները հարկվող եկամուտ չեն համարվում: Համապատասխանաբար, այդ անհատույց ստացված ակտիվների հաշվին կատարված ծախսերը նույնպես հարկային ծախս չեն համարվում: Այսինքն, եկեղեցու ծախսերի զգալի մասը կատարվում է ստացված նվիրատվությունների հաշվին, որոնք որպես անհատույց ստացված ակտիվ, չեն մասնակցում շահութահարկի հաշվարկներին»*: [4]

Նվիրատվությունների եւ դրանց տնօրինման շուրջ հաշվետվությունների մասին եպիսկոպոսը նշել է.

> *«Մայր Աթոռին տրված ֆինանսական օժանդակությունները, նվիրատվությունները արտասահմանյան ֆոնդերից կամ աշխարհի տարբեր երկրներում ապրող անհատ բարերաներից են... Առհասարակ, Մայր Աթոռին նվիրաբերված բոլոր գումարները նպատակային գումարներ են, դրանց վերաբերյալ բոլոր հաշվետվությունները պարբերական կարգով ներկայացնում ենք նվիրատուներին»*: [4]

5.4. 2026թ-ի մայիսին «Հրապարակ» օրաթերթը տեղեկացրեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ներկայացվել են զգալի չափերի հարկային պահանջներ՝ ներառյալ պարաֆինի ավելացված արժեքի հարկը, ինչպես նաեւ տույժերն ու տուգանքները. պահանջը կազմել է շուրջ 220 միլիոն դրամ, եւ գումարը վճարվել է Մայր Աթոռի կողմից՝ հետագա իրավական հետեւանքներից խուսափելու նպատակով: [5] Այս տեղեկությունը հետագայում հաստատեց Մայր Աթոռի տեղեկատվական կենտրոնի ղեկավար Եսայի քահանա Արթենյանը՝ նշելով, որ մոմի հետ կապված մեծ գումարներ վճարվել են պետբյուջե: [6]

5.5. ՀԱՍԵ փաստացի պետն իր պաշտոնավարման տարիներին առանցքային կառուցվածքային փոփոխություններ է կատարել Մայր Աթոռի ֆինանսա-տնտեսական համակարգում: Շուրջ 20 տարի առաջ ՀԱՍԵ թեմերին պատկանող անշարժ /եկեղեցիներ, առաջնորդանիստ շինություններ, բարեգործական հաստատություններ, ուսումնական կենտրոններ/ ու շարժական գույքը վերահաշվարկման եւ վերագույքագրման հետեւանքով անցել է Մայր Աթոռի անմիջական տնօրինության տակ, առաջնորդարաններից վերցվել են տարածքային սեփականության եւ վարձակալման բոլոր վկայագրերը: Թեմերի առաջնորդները զրկվել են իրենց թեմերի բարերարներից անմիջական դրամական փոխանցումներ ստանալու հնարավորությունից: Ներկայում որեւէ թեմում եկեղեցիների վերանորոգման, կառուցման կամ այլ շինարարություն իրականացնելու համար թեմական առաջնորդները բարերարներից ֆինանսական օժանդակություն կարող են ստանալ բացառապես Մայր Աթոռի միջոցով, որի հաշվեհամարին էլ փոխանցվում են բարերարների գումարները: ՀԱՍԵ փաստացի պետն է տնօրինում այս կամ այն թեմին անհրաժեշտ դրամական հատկացումների չափն ու ժամանակը: Այդ որոշումները փաստացի կաթողիկոսը կայացրել է միանձնյա, իսկ ըստ գործող կանոնակարգի՝ դա պետք է իրականացվեր կամ առնվազն վավերացվեր ՀԱՍԵ

գերագույն մարմնի՝ Ազգային-Եկեղեցական ժողովի հաստատմամբ, որը ՀԱՍԵ փաստացի պետի գահակալման տարիներին երբեւէ չի հրավիրվել:

5.6. Եկեղեցու գործունեության ֆինանսական թափանցիկության հարցը բարձրացվել է նաեւ ազգային անվտանգության հարթությունում: Ըստ այդ մոտեցման՝ եկեղեցու ֆինանսական մուտքերն ու ծախսերը չունեն հանրային հաշվետվողականության հստակ ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ինչի պայմաններում եկեղեցական տարբեր ձեւաչափերի եւ նվիրատվությունների անվան տակ երկիր կարող են մուտք գործել վերահսկողությունից դուրս ֆինանսական միջոցներ, որոնք հնարավոր է ուղղվեն քաղաքական գործընթացների սպասարկմանը, փողերի լվացման եւ այլ հանցավոր գործունեության ֆինանսավորմանը, ինչը կարող է դուրս մնալ ֆինանսաբանկային համակարգի դիտարկման շրջանակներից: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված է մոտ 70 կրոնական կազմակերպություն, որոնք նույնպես, օգտվելով ֆինանսական հաշվետվողականության եւ թափանցիկ գործունեության պահանջի բացակայությունից, կարող են իրենց ֆինանսական խողովակներն օգտագործել օտարերկրյա հանցավոր կազմակերպությունների կողմից փողերի լվացման նպատակով: 2026թ-ի փետրվարին Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է.

> *«Եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչների բարեվարքության, ֆինանսական թափանցիկության, հաշվետվողականության մեխանիզմներ պետք է լինեն, որովհետեւ մենք այսօր ունենք ինֆորմացիա, որ ճշտման փուլում է, այդ թվում՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ձեւաչափերով, Հայաստանի Հանրապետություն են մուտք գործում ստվերային գումարներ քաղաքական նպատակով Հայաստանում օգտագործելու համար»*: **[7]**

5.7. Եկեղեցու ֆինանսական հոսքերի նկատմամբ վերահսկողության եւ բարերարների ծագման ստուգման մեխանիզմների բացակայության պայմաններում հաղորդվել են բազմաթիվ դեպքերի մասին, երբ եկեղեցիների ու մատուռների կառուցումն ու վերանորոգումը ֆինանսավորվել է անհայտ ծագման ունեցվածք ունեցող անձանց, քրեական հեղինակությունների եւ քրեական ենթամշակույթին հարող անձանց միջոցներով կամ նրանց ուղղորդմամբ, իսկ կառույցների օծումն իրականացրել են ՀԱՍԵ բարձրաստիճան հոգեւորականները՝ ընդհուպ փաստացի կաթողիկոսը: **[8] [9]**

5.8. Շիրակի մարզում տարիներ գործող «Միրոյան տուֆ» ընկերության հիմնադիր ղեկավար Մարտիրոս Միրոյանը 2018թ.-ին վկայել է, որ 2008թ.-ին անձամբ Եզրաս արք. Ներսիսյանն իր կազմակերպությունից խաբեությամբ յուրացրել է շուրջ 300 հազար դոլար արժեքով տուֆ, որը մատակարարվել է իբրեւ Մոսկվայում հայկական եկեղեցու կառուցման համար: Շուրջ 100 աշխատատեղ ունեցող ընկերությունը խաբեության պատճառով սնանկացել եւ փակվել է: Խաբեության էությունը եղել է մատակարարված ապրանքի արժեքը քիչ գրանցելը, Եզրաս արք. Ներսիսյանի կողմից բանավոր երաշխիքները չկատարելը, ՀԱՍԵ փաստացի պետին եւ նախագահի աշխատակազմի այդ ժամանակվա ղեկավար Կարեն Կարապետյանին որպես գործարարի դեմ ճնշման գործիք կիրառելը եւ սպառնալիքներով լռեցնելը: Ի սկզբանե Եզրաս արք. Ներսիսյանն ապրանքի դիմաց չվճարելը պատճառաբանել է նվիրատվությունների ուշացմամբ ու բացակայությամբ, իսկ ավելի ուշ գործարարին պարտադրվել է գործարքը ներկայացնել որպես նվիրատվություն եկեղեցու կառուցման համար: **[10]**

5.9. 2015թ.-ին Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումը (ICIJ) հրապարակել է «Swiss Leaks» քննության արդյունքը, ըստ որի՝ շվեյցարական HSBC բանկի խոշոր հաշվետերերի շարքում հայտնվել է նաեւ ՀԱՍԵ փաստացի պետը. «His Holiness Karekin II Nersis» անվամբ հաշվին 2006–2007թթ-ին եղել է 1.1 մլն դոլար, իսկ բանկի փաստաթղթերում

հաշիվը երեւում է 2000թ.-ից: Մայր Աթոռի մամուլի խոսնակը ICIJ-ին տված պարզաբանման մեջ նշել է, որ հաշիվը բացվել է ի շահ եկեղեցու՝ բարեգործական նպատակներով: [11]

5.10. Լրատվամիջոցների կողմից ՀԱՍԵ փաստացի պետի եւ նրա ընտանիքի անդամների բիզնես ակտիվների մասին տարիներ շարունակ հրապարակվել են բազմաթիվ նյութեր, որոնք չեն հերքվել:

- ՀԱՍԵ փաստացի պետին կամ նրա ընտանիքին, մասնավորապես, վերագրվում են բենզալցակայաններ, ջերմոցներ, անասնապահական ֆերմաներ, մշակովի հողատարածքներ Ոսկեհատ գյուղում: [12] Ըստ միեւնույն հրապարակման՝ 2018թ-ի դրությամբ ՀԱՍԵ փաստացի պետին կամ նրա հարազատներին են պատկանում «Պարադիս» եւ «Մուշ» ռեստորանային համալիրները, որոնց համար սնունդ է մատակարարում փաստացի կաթողիկոսի քրոջ որդու՝ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի բիզնեսը: Ըստ լուրի՝ վերջինս Մուղնիի վանքի հարեւանությամբ լավաշի, գաթայի եւ խմորեղենի արտադրամաս է հիմնել, որտեղից էլ ամեն օր սնունդ է մատակարարում թե՛ վերոնշյալ օբյեկտներին, թե՛ Մայր Աթոռի միաբանական սեղանատուն:
- Ըստ հասարակական գործիչ Սարգիս Հացպանյանի՝ ՀԱՍԵ փաստացի պետի եղբայր Եզրաս արք. Ներսիսյանն ունի հնաոճ իրերի խոշոր բիզնեսի մասնաբաժին. *«Իմ կարծիքով՝ Գարեգին Բ-ի համար արգելակող հանգամանք է հանդիսանում իր հայտնի եղբոր՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի եւ Արամ Աթեշյանի բիզնես գործընկերության հանգամանքը: Նրանք միասին Ռուսաստանում անտիկվար իրերի բիզնես ունեն, եւ դա ծաղկեցրել են այն աստիճանի, որ միլիոնների հասնող եկամուտներ են ապահովում: Արամ Աթեշյանը ֆինանսների տեսակետից երեւի ամենահարուստ հոգեւորականն է, ով ամենատարբեր երկրներում բիզնեսներ, տներ եւ այլ տեսակի ֆինանսական եկամուտների աղբյուր ունի»*: [13]
- Ըստ լրատվամիջոցների՝ ՀԱՍԵ փաստացի պետի եղբոր՝ Գեւորգ Ներսիսյանի որդու՝ նախկին դատախազ Կորյուն Ներսիսյանի սեփականության շարքում են նշվում Լուսագյուղ բնակավայրում գտնվող «Բելուգա» ռեստորանային համալիրը, «Մարլի» բրենդային խանութ-սրահը, գազի լցակայաններ, սգո սրահների ծառայություն, սուպերմարկետ եւ այլն: [14] Ըստ պաշտոնապես գրանցված իրավունքների՝ Գեւորգ Ներսիսյանին, նրա կնոջը՝ Սոնիկ Ներսիսյանին եւ որդուն՝ Կորյուն Ներսիսյանին համատեղ սեփականությամբ պատկանում են Ոսկեհատ գյուղում գտնվող 4 հողամասեր եւ մեկ հողամաս Ապարանում: Առանձին Կորյուն Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանում են Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում գտնվող 22 հողամասեր: Գեւորգ Ներսիսյանի դուստր Խաթուն Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանում են Էջմիածնում գործող երկու խանութ, ինչպես նաեւ նա հանդիսանում է ոչ մասնագիտացված խանութներում մանրածախ առեւտրով զբաղվող «Սոնէ» ՍՊԸ իրական շահառուն: [15] Ոսկեհատ գյուղում գտնվող 4 հողամասեր համատեղ սեփականությամբ պատկանում են Խաթուն Ներսիսյանին և նրա հարազատներին:
- ՀԱՍԵ փաստացի պետի եղբոր՝ Գեւորգ Ներսիսյանի մյուս որդուն՝ Համբարձում Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանում են Ոսկեհատ գյուղում գտնվող 12 հողամասեր, Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղում գտնվող 2 հողամասեր եւ 4 տարբեր նշանակության տարածքներ Էջմիածին քաղաքում: Համբարձում Ներսիսյանը հեղուկ գազի, սեղմված գազի մանրածախ առեւտրով զբաղվող «Լի Գազ» ՍՊԸ տնօրենն է, (ընկերությունը գրանցված է նրա մոր՝ Սոնիկ Ներսիսյանի անունով) [16], հեղուկ գազի, սեղմված բնական գազի առեւտրով զբաղվող «Առաջին ծիծեռնակ» ՍՊԸ-ի մի մասի

սեփականատերը [17] եւ մանրածախ առեւտրով եւ ջերմոցային կուլտուրաների մշակմամբ զբաղվող «Արմա Գրոու» ՍՊԸ 50% բաժնետերն է: [18] Համբարձում Ներսիսյանին է պատկանում Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի ավտոտեխսպասարկման կետերից մեկը, դրան մոտ գործող բացօթյա լողավազանը, «Ֆլոքս» ռեստորանային համալիրը, ինչպես նաեւ՝ «Լի Գազ» գազալցակայանի հարեւանությամբ գտնվող «Պարադիս» հանգստի գոտին:

- ՀԱՍԵ փաստացի պետի եղբայրը՝ Գեւորգ Ներսիսյանը, 2002թ-ից գրեթե երկու տասնամյակ ղեկավարել է Ոսկեհատ համայնքը: 2016թ. «Հետք»-ի հետաքննության համաձայն՝ համայնքի սեփական եկամուտների 37,5 տոկոսն ուղղվել է «անապահով» ճանաչված անձանց, որոնք հիմնականում եղել են համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ եւ ՀԱՍԵ փաստացի պետի հարազատները, մասնավորապես՝ գյուղապետի որդին: [19] «Հետք»-ի հետաքննության մեջ հիշատակվող համայնքային նպաստառության շահառուների ազգանունները (Դիշլարյան, Գյոզալյան) համընկնում են ՀԱՍԵ փաստացի պետի կողմից ձեռնադրված համագյուղացի հոգեւորականների ազգանունների հետ:

5.11. Եկեղեցու հոգեւորականների շրջանում առկա սոցիալական խիստ անհավասարության վերաբերյալ առկա են բազում հրապարակումներ, փաստեր եւ վկայություններ:

- Ցածր աստիճանով հոգեւոր ծառայողները Եկեղեցուց աշխատավարձ ընդհանրապես չեն ստանում: Այս մասին վկայել են հենց հոգեւորականները: Շմավոն քահանա Ղեւոնդյանը քահանաների կողմից ծիսակատարությունների դիմաց նվիրատվություն ստանալու թեմայի շուրջ 2007թ-ին վկայել է. *«Քահանան աշխատավարձ չունի, միայն վանքում աշխատող կուսակրոններն են աշխատավարձ ստանում: Ուստի ինչո՞վ ապրի այդ մարդը, ինչպե՞ս ընտանիք պահի: Հետեւաբար, որեւէ աննորմալ բան չկա, երբ մարդը խաչը համբուրում եւ նվիրատվություն է անում եկեղեցուն»*: [20] Այս փաստը վկայվել է նաեւ բազմաթիվ այլ անձանց կողմից: Մատենադարանի գիտաշխատող, նախկին դպիր Արամ Դիլանյան. *«Հայտնի է, որ հայ քահանան աշխատավարձ չի ստանում եւ թողնված է համայնքի հույսին... քահանան կա՛մ սովի պետք է մատնի իր ընտանիքը, կա՛մ պետք է այս ու այն կողմ գնա եւ ինչ-որ բան հայթայթի: Ճիշտ կլինի, եթե աշխատավարձ սահմանեն քահանային, խելամիտ սահմաններում, որպեսզի քահանան զբաղվի միայն հոգեւոր ծառայությամբ»*: [21]
- Լրատվամիջոցներում անանուն մնացած հոգեւորականների կողմից 2020թ.-ին հրապարակվել են Մայր Աթոռի կողմից վճարվող աշխատավարձերի չափերը. *«Հայաստանի թեմերում ծառայող քահանաները, բացի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանաներից, աշխատավարձ չեն ստանում առհասարակ... Վերոնշյալ կարգավիճակում գտնվող հոգեւոր ծառայողները չեն օգտվում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրենց հասանելիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կամ պետության կողմից տրամադրվելիք որեւէ ծրագրից... Հայաստանյան թեմերում սպասավորող սարկավագները, անկախ իրենց ընտանեկան կարգավիճակից, չունեն հստակ եւ ֆիքսված աշխատավարձ, այլ վարձատրվում են թեմակալների որոշմամբ... Մայր Աթոռի կուսակրոն հոգեւորականները սկսած աբեղայից ստանում են ամսական 400 ԱՄՆ դոլարի համապատասխան աշխատավարձ, ինչը հոգեւոր կոչումին համապատասխան աճում է՝ եպիսկոպոսի եւ արքեպիսկոպոսի պարագային հասնում է ամսական մոտ 1000 ԱՄՆ դոլար»*: [22]
- Եկեղեցու մեկ այլ սարկավագ թեմայի շուրջ վկայել է. *«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քահանաները՝ թվով մոտ մեկ տասնյակ են, կոչվում են «էլիտար» քահանաներ, որոնք ավարտել են Գեւորգյան Հոգեւոր ճեմարանը, եւ ոչ միայն ստանում են ամսական աշխատավարձ՝ 1000 ԱՄՆ դոլարին համապատասխան դրամ, այլեւ շաբաթ եւ կիրակի*

օրերին նշանակված են Էջմիածնի վանքերում՝ իբրեւ ծիսական քահանաներ, իսկ Հայաստանի թեմերում ծառայող քահանաները ոչ միայն չեն ստանում որեւէ աշխատավարձ իրենց թեմից, այլեւ պարտավորված են «Լուսավորչի լումա», «Նարեկացու լումա» ուղարկել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որը կլորիկ գումար է՝ այսպես կոչված ներքին «նալոգ»: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճեմարանավարտ սարկավագները ամսական ստանում են 1000 դրամ, այո՛, այո՛ հազար դրամ: Պաշտպանությունից հետո միայն ամսական ստանում են 60 հազար դրամ, այն էլ եթե բախտավոր են... Հոգեւոր ծառայողները չեն օգտվում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրենց հասանելիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կամ պետության կողմից տրամադրվելիք որեւէ ծրագրից: Մայր Աթոռում Կաթողիկոսի բարձր հրամանով տարիներ շարունակ բացեիբաց ոտնահարվում են մարդու պարզ իրավունքները: Հոգեւորականը, ով ցանկանում է ֆինանսական որեւէ կազմակերպությունից կամ բանկից վարկ կամ հիպոթեկ վերցնել, պարտավորված է տվյալ կառույցներ դիմել աշխատանքի վայրից տեղեկանքով, սակայն այդ տեղեկանքը տրվում է միայն ու միայն Կաթողիկոսի հրամանով: Մայր Աթոռում միայն Կաթողիկոսն է թույլ տալիս, որ հոգեւորականը ստանա աշխատանքի ու աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք... Իսկ երբ հոգեւորականը պարտքով ֆինանսական օգնություն է խնդրում Կաթողիկոսից, վերջինս վաշխառուի նման, պատասխանում է, որ սեփականությունդ գրավ պիտի դնես Մայր Աթոռում: Դրա վառ օրինակը Իրաքում ծառայող Հայր Նորայրն է, որի հայրական տունը մինչեւ օրս գրավադրված է Մայր Աթոռում՝ գումարի դիմաց: Սա Կաթողիկոսական-հայրական սերն է հոգեւորականի հանդեպ: Ավելին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին պատկանող Իզմիրլյան բժշկական կենտրոնում ստուգվելու կամ բուժվելու համար նույնիսկ հոգեւորականները վճարում են, բացառությամբ եպիսկոպոսների»: **[23]**

5.12. Լրատվամիջոցներում եւ սոցցանցերում հաճախ են հանդիպում դրամահավաքներ՝ տարբեր եկեղեցականների եւ նրանց ընտանիքների կարիքների ապահովման համար:

- Շիրակի թեմում ծառայող Սարգիս քահանա Սարդարյանի երեխայի բուժման համար կազմակերպվել է դրամահավաք: **[24]**
- Երվանդ քահանա Բաբայանի երեխայի բուժման համար կազմակերպվել է դրամահավաք: **[25]**
- Եզնիկ քահանա Մալխասյանի բուժման համար կազմակերպվել է դրամահավաք: **[26]**
- Բարսեղ քահանա Անդրյանի բուժման համար կազմակերպվել է դրամահավաք: **[27]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.13. ՀԱՍԵ փաստացի պետի կողմից 2000թ.-ին հաստատված (սակայն ԱԵԺ կողմից չվավերացված) «Նախաշավիղ» Կանոնադրությամբ Մայր Աթոռի ողջ ունեցվածքի միակ եւ բացարձակ տնօրինողը Կաթողիկոսն է.

> *«Ամենայն Հայոց Կաթողիկոսը տերն է ու միակ պատասխանատուն Մայր Աթոռի կալվածքների, անշարժ եւ շարժական բոլոր հարստությունների, Հայաստանից ներս եւ Հայաստանից դուրս, աշխարհի բոլոր երկրներում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրավասու միակ մատակարարողն է Հայաստանի եւ Արտասահմանի դրամատներում գտնվող Մայր Աթոռի բոլոր գումարների: Որեւէ կալվածական գործողություն, վճարում, գանձում եւ դրամական որեւէ գործառնություն կատարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ստորագրությամբ եւ կնիքով միայն»*

(Հոդված 13): **[28]**

5.14. Միեւնույն Կանոնադրությամբ նախատեսված «Վերստուգիչ հանձնաժողովի» պարտականությունն է վերահսկել Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական գործունեությունը եւ տարեկան տեղեկագիր ներկայացնել ԳՀԽ-ին: Միեւնույն ժամանակ հանձնաժողովի կազմը նշանակվում է Կաթողիկոսի կողմից (Հոդված 33): Փաստացի վերահսկող օղակն ինքը նշանակվում է վերահսկվողի կողմից:

5.15. Գործնականում Մայր Աթոռում ողջ ֆինանսական հաշվետվողականությունը ներքին է եւ վերընթաց. բոլոր տեղեկագրերն ուղղվում են Գերագույն հոգեւոր խորհրդին եւ Կաթողիկոսին, եւ ֆինանսական ակտերի շրջանառությունը հրապարակայնության որեւէ պահանջ չի պարունակում: ՀԱՍԵ մուտքերի ու ծախսերի ամբողջական եւ թափանցիկ հաշվետվողականության ինստիտուցիոնալ մեխանիզմ գոյություն չունի:

5.16. Ըստ «Ազգային-Եկեղեցական Ժողով գումարելու հատուկ կանոնադրության»՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տնտեսական վիճակն ԱԵԺ-ի՝ Եկեղեցու գերագույն մարմնի իրավասության առարկան է: **[29]**

5.17. ՀՀ օրենսդրությունը ՀԱՍԵ-ին տրամադրում է հարկային արտոնությունների ընդլայնված փաթեթ. ՀԱՍԵ կողմից ապրանքների ներմուծումը, մատակարարումը, աշխատանքների կատարումը, կրոնական պարագաների օտարումը, կրոնական ծիսակատարությունների կազմակերպման ծառայություններն ազատված են ԱԱՀ-ից, անհատույց ստացած ակտիվները, նվիրատվությունները, քաղաքացիներից ստացվող հասույթները հարկման ենթակա չեն, Մայր Աթոռին պատկանող շինություններն ու հողատարածքներն ազատված են գույքահարկից եւ այլն: Այսպիսով, Եկեղեցու հիմնական ֆինանսական հոսքերը (նվիրատվություններ, դրամաշնորհներ, ծիսական ծառայություններ, պարագաների վաճառք) դուրս են բերված հարկային հաշվառումից եւ հարկումից: **[30] [31] [32]**

ԱՄՓՈՓՈՒՄ

5.18. Եկեղեցու ֆինանսական մուտքերի ու ծախսերի ամբողջական հրապարակային հաշվետվողականության ինստիտուցիոնալ մեխանիզմ գոյություն չունի: Գործող «Նախաշավիղ» Կանոնադրությամբ առկա հաշվետվողականության մեխանիզմները հասանելի են բացառապես Կաթողիկոսին ու հրապարակային չեն: Միեւնույն ժամանակ ըստ այդ չվավերացված Կանոնադրության՝ Մայր Աթոռի ողջ ունեցվածքի միակ տնօրինող հանդիսանում է Կաթողիկոսը: Եկեղեցու շրջանառության գրեթե 90 տոկոսի նկատմամբ գոյություն չունի ո՛չ պետական, ո՛չ հանրային, ո՛չ էլ գործող ներեկեղեցական վերահսկողություն: ՀԱՍԵ տնտեսական վիճակի նկատմամբ իրավասություն ունեցող եւ հաշվետվություն լսող գերագույն մարմնի՝ Ազգային-Եկեղեցական ժողովի նիստերը ՀԱՍԵ փաստացի պետի կողմից խափանվել են վերջին 27 տարիներին:

5.19. Եկեղեցուն կատարված նվիրատվությունների եւ այլ մուտքերի, ինչպես նաեւ այդ միջոցների ծախսերի մասին ամբողջական տեղեկություն ունի միայն ՀԱՍԵ փաստացի պետը, եւ ինքն էլ տնօրինում է դրանք իր հայեցողությամբ՝ առանց հաշվետվողականության: Եկեղեցում գոյություն չունի բարերարների եւ նվիրատվությունների ծագման ստուգման որեւէ ընթացակարգ: Դրա հետեւանքով եկեղեցիների ու մատուռների կառուցումն ու վերանորոգումը բազմիցս ֆինանսավորվել է քրեական հեղինակությունների եւ քրեական ենթամշակույթին հարող անձանց միջոցներով, իսկ որոշ դեպքերում նվիրատվության անվան տակ արձանագրվել են շորթման դեպքեր: Առկա են տվյալներ, որ առանձին դեպքերում օծումն ուղղակիորեն կապվել է ֆինանսավորման հետ՝ ընդհուպ օծման դիմաց գումարի փոխանցում (տե՛ս 13.3): Հավատավոր ժողովուրդը, ինչպես նաեւ Եկեղեցու

նվիրապետությունը զրկված է հնարավորությունից տեղեկանալ Եկեղեցուն տրամադրվող նվիրատվությունների եւ դրանց ծախսի ուղղությունների մասին:

5.20. Եկեղեցու ֆինանսական միջոցների մի մասը տասնամյակներ շարունակ պահվել են արտերկրում՝ ֆիզիկական անձի՝ ՀԱՍԵ փաստացի պետի անվամբ բացված հաշվին, եւ այդ հաշիվը երբեւէ չի արտացոլվել Եկեղեցու որեւէ պաշտոնական փաստաթղթում կամ հաշվետվությունում: Ստվերային գործունեության արդյունքում Եկեղեցին ՀԱՍԵ փաստացի պետի եւ նրա նեղ շրջապատի ձեռքին վեր է ածվել «սեւ արկղի», որի հսկայական մուտքերը եւ ելքերը տնօրինում է մեկ անձ՝ առանց հաշվետվողականության:

5.21. ՀԱՍԵ փաստացի պետը հրաժարվում է պետության առաջարկած ֆինանսական հաշվետվողականության ներդրման մեխանիզմներից: Նման մասշտաբի ստվերային գործունեության պայմաններում հաշվետվողականությունից շարունակաբար խուսափելը հարուցում է ողջամիտ կասկածներ, որ Եկեղեցուն կատարված նվիրատվությունները ներդրվում են անձնական բիզնեսի մեջ, իսկ հարկերից ազատ ենթակառուցվածքներն օգտագործվում են անձնական կամ բիզնես նպատակներով:

5.22. Հոգեւոր ծառայողների եկամուտները ստվերային են: Դրա հետեւանքով՝

- Կան հարստացող եւ աղքատության եզրին գտնվող հոգեւոր ծառայողներ, որոնց ապրուստը կախված է իրենց ծառայության վայրից եւ ՀԱՍԵ փաստացի պետի կամայական նշանակումներից: ՀԱՍԵ փաստացի պետն է կամայական կերպով որոշում, թե որ հոգեւորականը որ բնակավայրում որքան ժամանակ ծառայություն իրականացնի, ինչի հետեւանքով սակավ բնակչություն ունեցող համայնքներում ծառայող հոգեւորականներն առանց աշխատավարձի եւ թափանցիկ եկամուտների փաստի բերումով դատապարտված են աղքատության:
- Հոգեւոր ծառայողները ստվերային դաշտում գործելով չեն կարողանում օգտվել սոցիալական ծառայությունների եւ երաշխիքների պետական համակարգից, զրկված են կենսաթոշակային համակարգից լիարժեք օգտվելու հնարավորությունից:
- ՀԱՍԵ փաստացի պետի ձեռքում գոյացող ստվերային բյուջեն վեր է ածվել վաշխառության մեխանիզմի, երբ առողջական կամ սոցիալական ծանր կացության մեջ հայտնված հոգեւորականները ստիպված են լինում ֆինանսական միջոցներ հայթայթելու համար իրենց գույքը ՀԱՍԵ փաստացի պետի պահանջով գրավադրել Մայր Աթոռում:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Նիկոլ Փաշինյան (2024-05-22). «Պաշտոնապես առաջարկել ենք հարկային համակարգ ներդնել եւ հավաքագրված ամբողջ գումարը վերադարձնել Հայ Առաքելական եկեղեցուն». https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/459803906574780/
2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (2024-05-23). «Մերկապարանոց մեղադրանքներ են հնչեցվում Եկեղեցու կողմից հարկեր չվճարելու առնչությամբ». https://www.armenianchurch.org/hy/news/23-05-2024-2/11605
3. Նիկոլ Փաշինյան (2026-04-21). «Եկեղեցին չպետք է դուրս լինի համընդհանուր հայտարարագրից եւ պետք է հարկ վճարի». https://www.instagram.com/reel/DXZSXqNoNSK/
4. Mediahub (2024-05-31). «Մայր Աթոռը պատշաճ կատարում է իր հարկային պարտավորությունները. փաստեր ու թվեր՝ Արարատ Սրբազանից». https://mediahub.am/hy/post/300a682886c310a1
5. Հրապարակ (2026-05-30). «Մայր Աթոռին ներկայացվել են հարյուր միլիոնավոր դրամների հարկային պահանջներ». https://hraparak.am/am/post/2ecbeee218a5a747b2fdc5213dd2671a
6. Հրապարակ (2026-06-26). «Մայր Աթոռը՝ որպես "պարաֆինի հարկ", մեծ գումարներ է վճարել պետությանը». https://hraparak.am/am/post/c7beda2779c55289c328eff870c29e5b
7. Նիկոլ Փաշինյան (2026-02-11). Հարցազրույց Հանրային հեռուստաընկերությանը. https://www.armtimes.com/hy/article/331079 ; https://www.youtube.com/watch?v=zv0VwQVhHOY

8. Hetq.am (2008-04-21). «Ո՞վ է փոխարինելու գեներալ Մանվելին Էջմիածնում». https://hetq.am/hy/article/31194
9. Hetq.am (2016-01-13). «Սյունիքի նոր եկեղեցիները կամ Սուրիկ Խաչատրյանի «աստվածահաճո» գործը. նա որդու անունով մատուռ է կառուցել». https://hetq.am/hy/article/64990 ; Շիրակի թեմի «Յոթվերք» պաշտոնաթերթ (2014թ.). https://www.yotverk.am/datei/140931/s140901.htm
10. Aravot.am (2018-09-10). «Թե ինչպես է կաթողիկոսի եղբայրը «քցել» հայ գործարարին. Սուրեն Սարգսյանի հարցազրույցը Մարտիրոս Միրոյանի հետ». https://www.aravot.am/2018/09/10/979977/
11. Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիում (ICIJ) (2015-02-08). «Swiss Leaks». https://www.icij.org/investigations/swiss-leaks/explore-swiss-leaks-data/
12. Mamul.am (2018-10-23). «Օլիգարխ կաթողիկոսի բիզնեսներն ու ունեցվածքը. ապշեցնող կադրեր». https://my.mamul.am/am/post/83650
13. 168.am (2017-02-21). ««Գարեգին Բ-ի հարազատ եղբայրը եւ Արամ Աթեշյանն անտիկվար իրերի բիզնես ունեն». Սարգիս Հացպանյան». https://168.am/2017/02/21/757141.html
14. Mamul.am (18-08-13). «Գարեգին Բ-ի գյուղապետ եղբոր դատախազ տղայի հարստացումները ապօրինի՞ են». https://my.mamul.am/am/post/82059
15. E-register, «ՍՈՆԷ» ՍՊԸ, https://e-register.moj.am/hy/companies/51745696
16. E-register, «ԼԻ ԳԱԶ» ՍՊԸ, https://e-register.moj.am/hy/companies/39294213
17. E-register, «ԱՌԱՋԻՆ ԾԻԾԵՌՆԱԿ» ՍՊԸ, https://e-register.moj.am/hy/companies/37458113
18. E-register, «ԱՐՄԱ ԳՐՈՈՒ» ՍՊԸ, https://e-register.moj.am/hy/companies/55191230
19. Hetq.am (2016-05-04). «Ոսկեհատ համայնքում արտոնյալ եւ անապահով են միայն գյուղապետն ու նրա մերձավորները». https://hetq.am/hy/article/67780
20. Aravot.am (2007-12-15). «Քահանաներն աշխատավարձ չեն ստանում». https://www.aravot.am/2007/12/15/329477/
21. Hraparak.am (2014-05-05). «Մտավորականի բողոքը եկեղեցում տիրող անարդարությունների դեմ». https://hraparak.am/am/post/591fb0f5e3d84d0d37fd641d
22. Hraparak.am (2020-02-06). «Սարկավագներ՝ 60 հազար դրամ, Մայր Աթոռի քահանաներ՝ 1000 դոլար. որքան աշխատավարձ են ստանում հոգեւորականները». https://hraparak.am/am/post/41654b4ae65215198ff1c568f12062c5
23. Hraparak.am (2014-02-19). «Մայր Աթոռում կաթողիկոսի բարձր հրամանով տարիներ շարունակ ոտնահարվում են մարդու իրավունքները». https://hraparak.am/am/post/abe8efaad87c1563ffb6da2048a33165
24. Աննա Հովհաննիսյան (2026-04-18. դրամահավաքի հայտարարություն) - https://www.facebook.com/share/p/1FWnqfy7Mj/
25. Iravunk.com (2015-02-18). «Տեր Երվանդ քահանա Բաբայանին օգնություն է անհրաժեշտ». https://iravunk.com/?p=155161&l=am
26. Blognews.am (2014-01-22). «Նա քահանա է. Տեր Եզնիկ քահանա Մալխասյան». https://blognews.am/arm/news/124375/?fb_comment_id=631402836927400_73114476
27. Hraparak.am (2019-05-21). «Հոգեւորականի կյանքին վտանգ է սպառնում, նա օգնության կարիք ունի». https://hraparak.am/am/post/1030539099
28. «Կանոնադրություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նախաշավիղ», 2000թ.
29. «Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն», 1945թ. հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 1945, էջ 18. https://arar.sci.am/publication/260884
30. ՀՀ հարկային օրենսգիրք. https://www.arlis.am/hy/acts/219122/latest
31. «ՀՀ եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենք (2007). https://www.arlis.am/hy/acts/32513/latest
32. «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք. https://www.arlis.am/hy/acts/223204

06

ՀԱՍԵ փաստացի պետն ի հակադրություն ՀԱՍԵ Կանոնագրքի՝ իր ազգականներին ձեռնադրել է եպիսկոպոս, իր ծննդավայր գյուղից շուրջ երկու տասնյակ անձանց ձեռնադրել է հոգեւորականներ եւ նշանակել է բարձր եկեղեցական պաշտոնների, այդ թվում՝ թեմերի առաջնորդների՝ այդպիսով փաստացի յուրացնելով իշխանությունը ՀԱՍԵ-ում:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարչական համակարգում իշխանության կենտրոնացման, որոշումների կայացման փակ բնույթի եւ կադրային նշանակումների վերաբերյալ քննարկումներն ու քննադատությունները տարբեր ժամանակներում հնչել են ինչպես քաղաքական, այնպես էլ հասարակական եւ եկեղեցական շրջանակներում: Քննադատությունների առանցքում եղել են որոշումների թափանցիկության պակասը,

ինչպես նաեւ ազգակցական կապերի հնարավոր ազդեցության վերաբերյալ փաստագրումները:

6.2. Կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո ՀԱՍԵ փաստացի պետը ծառայությունից ազատեց Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի երկարամյա թեմակալ առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանին, ով թեմը ղեկավարել էր ավելի քան 25 տարի, եւ նրա փոխարեն նշանակեց իր հարազատ եղբորը՝ Եզրաս աբեղա Ներսիսյանին, ով այդ ժամանակ չուներ եպիսկոպոսի կամ անգամ վարդապետի կոչում, այլ աբեղա էր: Այնուհետեւ 2001թ.-ին ՀԱՍԵ փաստացի պետն անձամբ ձեռնադրեց Եզրաս Ներսիսյանին որպես եպիսկոպոս, իսկ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանին, ով դժգոհ էր կաթողիկոսի որոշումից, նույն տարում կարգալույծ հռչակեց «անկարգությունների եւ անհնազանդության» համար ու հեռացրեց Եկեղեցու նվիրապետությունից: **[1] [2]**

6.3. Մեկ այլ բարձրաստիճան պաշտոն Եկեղեցում զբաղեցնում է ՀԱՍԵ փաստացի պետի քրոջ որդին՝ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը: Վերջինս 2010թ.-ին ՀԱՍԵ փաստացի պետի կողմից ձեռնադրվել է եպիսկոպոս եւ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդի պաշտոնում, որը զբաղեցնում է մինչ այժմ: **[3]** Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի անվան հետ կապված են եղել մի շարք աղմկոտ իրադարձություններ եւ չարաշահումների մասին հաղորդումներ: Մասնավորապես, հաղորդումներ են առկա Արագածոտնի մարզի տարածքում եկեղեցիների հարեւանությամբ բիզնես գործունեություն ծավալելու, քաղաքացիներից տարածքներ խլելու, անձանց հավաքներին մասնակցելուն հարկադրելու հետ կապված: **[4] [5] [6]**

6.4. ՀԱՍԵ փաստացի պետն իր ծննդավայր գյուղից՝ Արմավիրի մարզի Ոսկեհատից շուրջ 20 անձի ձեռնադրել է որպես տարբեր աստիճանների հոգեւորականներ, եւ նրանց մեծ մասը ներկայումս Մայր Աթոռի համակարգում զբաղեցնում են բարձր պաշտոններ: Ստորեւ ներկայացված է ՀԱՍԵ փաստացի պետի համագյուղացի հոգեւորականների ցանկը.

1. Եզրաս արք. Ներսիսյան (կաթողիկոսի եղբայրը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ)
2. Արշակ արք. Խաչատրյան (Մայր Աթոռի Դիվանապետ)
3. Հովակիմ եպս. Մանուկյան (Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի թեմի առաջնորդ, կաթողիկոսի համադասարանցու որդի)
4. Մկրտիչ եպս. Պռոշյան (կաթողիկոսի քրոջ որդին, Արագածոտնի թեմի առաջնորդ)
5. Հակոբ քհն. Խաչատրյան (Արշակ արք-ի եղբայրը, քահանա Երեւանում)
6. Արարատ քհն. Պողոսյան (Մայր Աթոռի հրատարակչական, պաշտոնական մամուլի ինչպես նաեւ մատենադարանի տնօրեն)
7. Գաբրիել վրդ. Սարգսյան (Սուրբ Շողակաթ վանք, Մայր Աթոռի նախկին լուսարարապետ)
8. Գրիգոր աբդ. Մինասյան (Կաթողիկոսի հանձնակատար, Վեհարանի նյութական պատասխանատուն)
9. Շահան աբդ. Մելքոնյան (Խոր Վիրապ վանք)
10. Վարդ քհն. Գյոզալյան (ԱՄՆ Արեւելյան թեմ)
11. Հրաչյա քհն. Գյոզալյան (Վարդ քհն-ի եղբայրը, քահանա Երեւանում)
12. Մանասե քհն. Նադանյան (քահանա Յալթա քաղաքում)
13. Գաբրիել քհն. Վարդանյան (Կանադայի հայոց թեմ)
14. Օշին քհն. Հայրապետյան (Սաղմոսավանք)
15. Նարեկ սրկ. Մինասյան (Գրիգոր աբդ. Մինասյանի եղբայր, Վեհարանի հյուրընկալ)
16. Արմեն սրկ. Դիշլարյան (Վեհարանի սարկավագ)

17. Նահապետ քին. Կարապետյան (Մայր Աթոռ)
18. Քաջիկ սրկ. Եղոյան (Մայր Աթոռ)
19. Հրանտ սրկ. Ջանոյան (Վեհարանի սարկավագ)
20. Արշավիր քին. Ասատրյան (Տավուշի թեմ)

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.5. ՀԱՍԵ Կանոնագիրքն արգելում է եպիսկոպոսի (այդ թվում՝ կաթողիկոսի) կողմից իր ազգականին եպիսկոպոս ձեռնադրելը: Մասնավորապես՝ ՀԱՍԵ Կանոնագրքում ներառված «Առաքելական կանոններ»-ում սահմանված է.

> *«Եպիսկոպոսը չպէտք է եղբօրը կամ որդուն կամ ուրիշ ազգականին ի հաճոյս նրանց եպիսկոպոս ձեռնադրի, որին եւ կամենայ, որովհետեւ եպիսկոպոսութիւնը եւ Աստուծոյ եկեղեցին ժառանգաբար յանձնել մէկին իրաւացի չէ: Ով այդպէս կանի, ձեռնադրութիւնը կլինի անվաւեր, ինքն էլ կմերժուի եկեղեցուց»*: **[7]**

ԱՄՓՈՓՈՒՄ

6.6. ՀԱՍԵ փաստացի պետն ի հակադրություն ՀԱՍԵ Կանոնագրքի ավանդական դրույթների՝ իր ազգականներին ձեռնադրել է եպիսկոպոս եւ նշանակել է թեմերի առաջնորդներ: Ազգակցական կապերով եպիսկոպոս ձեռնադրումները հակականոնական են. թե՛ ձեռնադրողը, թե՛ ձեռնադրվողը ենթակա են մերժման Եկեղեցուց:

6.7. ՀԱՍԵ փաստացի պետն իր ծննդավայր գյուղից բազմաթիվ անձանց ձեռնադրել է որպես տարբեր աստիճանի հոգեւորականներ, նշանակել է բարձր եկեղեցական պաշտոններում եւ հատկացրել բարձր աշխատավարձեր՝ դրանով իսկ յուրացնելով Եկեղեցում իշխանությունը:

6.8. Հակականոնական ձեռնադրումների եւ նշանակումների միջոցով ՀԱՍԵ փաստացի պետը խափանել է Եկեղեցու խորհրդակցական կառավարման եւ որոշումների ընդունման ավանդական ձեւաչափը՝ հաստատելով կլանային կառավարման մեխանիզմներ:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին. «Կենսագրական՝ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյան»
2. Հետք. «10 տարի առաջ կարգալույծ արված թեմի առաջնորդը պատրաստվում է դատի տալ «Արմենիա TV»-ին». https://hetq.am/hy/article/6131
3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին. «Կենսագրական՝ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյան»
4. Epress.am (2013-08-29). «Գարեգին Բ-ի քրոջ որդին եկեղեցու տարածքում «օբյեկտ» է հիմնելու, պատմել է Օհանավանի բնակիչը». https://epress.am/2013/08/29/գարեգին-բ-ի-քրոջ-որդին-պատրաստվում-է-եկ.html
5. 168.am (2013-11-7). «Կաթողիկոսի քրոջ որդին հովանավորում է Արագածոտնի հոգեւոր թեմի առաջնորդի կամայականությունները». https://www.youtube.com/watch?v=AtWB1vMgPAI
6. Ազատություն (2025-10-16). «Արագածոտնի թեմի առաջնորդը կալանավորվեց». https://www.azatutyun.am/a/aragatsotni-temi-arajnordy-kalanavorvets/33561355.html
7. Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան, «Հայոց Եկեղեցական Իրավունքը», Վերահրատարակություն 2011թ.

07

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը եւ մի շարք բարձրաստիճան հոգեւորականներ վարում են բացահայտ քաղաքական գործունեություն, Եկեղեցու տարբեր կառույցներ եւ նրա Սուրբ Խորանը օգտագործում են քաղաքական քարոզչության համար: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը եւ նրա մերձավոր շրջապատը հոգեւոր ծառայողներին պարտադրել են կազմակերպել քաղաքական ակցիաներ կամ մասնակցել դրանց:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1. ՀԱՍԵ փաստացի պետը եւ բարձրագույն հոգեւորական դասը նախկինում մշտապես լոյալ դիրքորոշում են ցուցաբերել Հայաստանի նախկին քաղաքական իշխանության հանդեպ եւ իշխանության դիրքորոշմանը հակասող մոտեցմամբ երբեւէ չեն միջամտել քաղաքական գործընթացներին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը նախկինում կա՛մ չի միջամտել կնճռոտ հարցերին, կա՛մ որոշակի աջակցություն է ցուցաբերել իշխանությանը: Տվյալ ձեռագիրը դրսեւորվել է, օրինակ, 2008թ. Մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ, երբ ՀԱՍԵ փաստացի պետը եւ ընդհանուր Եկեղեցին դերակատարություն չունեցան ճգնաժամի մեղմման նպատակով: Ընդ որում՝ թեեւ 2008թ.-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ հաղորդվում էին բազմաթիվ էական խախտումների առկայության մասին եւ քաղաքացիների զգալի մասը բողոքում էր ընտրախախտումներից ու անարդար ընտրություններից, ՀԱՍԵ փաստացի պետն ընտրությունների անմիջապես հաջորդ օրը շնորհավորեց Սերժ Սարգսյանին հաղթանակի կապակցությամբ **[1]**, իսկ ընտրախախտումների դեմ բողոքի ակցիաների մասին նա ուներ հետեւյալ դիրքորոշումը. *«Այս երկիրը հեղափոխության կարիք չունի»*: **[2]** Հատկանշական է, որ Մարտի 1-ի իրադարձությունների նախորդ օրը՝ փետրվարի 29-ին, ՀԱՍԵ փաստացի պետի նախագահությամբ եկեղեցական ժողովի կողմից տարածվել էր ուղերձ, որում փաստացի քննադատվում էին ընդդիմության կազմակերպած հետընտրական հանրահավաքներն ու երթերը՝ դրանք որակվելով որպես «ոչ բարվոք ճանապարհ».

> *«Կոչ ենք բերում ընդդիմության ներկայացուցիչներին, ովքեր չեն ընդունում ընտրությունների արդյունքները, գործել օրենքի շրջանակներում, որպեսզի անխաթար մնա մեր երկրի կայունությունը, չվտանգվեն մեր ժողովրդի ձեռքբերումները եւ կյանքի անդորրը: Հանրահավաքներն ու երթերը բարվոք ճանապարհը չեն վիճարկելու կայացած ընտրությունների վերջնական արդյունքները»*: **[3]**

7.2. ՀԱՍԵ փաստացի պետի եւ մի շարք բարձրաստիճան հոգեւորականների դիրքորոշումը իշխանության հանդեպ կտրուկ վերափոխվեց 2020թ.-ի նոյեմբերի 9-ի հայտարարության ստորագրումից անմիջապես հետո: Ընդ որում, պատերազմի մեկնարկի երկրորդ օրը ՀԱՍԵ փաստացի պետն իր աջակցությունն էր հայտնել քաղաքական իշխանությանը.

> *«Ի դեմս Վարչապետի Նորին Սրբությունն իր զորակցությունն է հայտնել ՀՀ իշխանություններին՝ ընդգծելով միասնական ջանքերի եւ համախմբվածության կարեւորությունը հայրենի Արցախի պաշտպանության եւ սահմանների անառիկության պահպանման սրբազան գործում»*: **[4]**

Սակայն նոյեմբերի 9-ից անմիջապես հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայտարարություններում եւ կաթողիկոսի ուղերձներում ընդգծված դարձան քաղաքական

ճգնաժամ ուրվագծող ձեւակերպումները եւ քաղաքական օրակարգ ենթադրող բանաձեւումները:

7.3. ՀԱՍԵ փաստացի պետի նախագահությամբ Գերագույն հոգեւոր խորհրդի նիստի հայտարարությունում Կառավարության եւ ԱԺ շենքերի վրա ցուցարարների հարձակումներն ու ջարդարարությունը որակվել էր որպես «արդար ընդվզում»՝ դրանով խրախուսելով ձեւավորված բանդաների իրականացրած զանգվածային անկարգություններն ու բռնարարքները.

> *«Հրադադարի վերաբերյալ նոյեմբեր 10-ի եռակողմ հայտարարությունը, դրանից բխող հետեւանքները եւ առկա անորոշությունները, Արցախի մի հատվածի կորստի փաստը հանկարծակիի բերեցին հանրությանը՝ հանգեցնելով արդար ընդվզման...»*: **[5]**

Միեւնույն ժամանակ առաջին անգամ ՀԱՍԵ հայտարարությունում արձանագրվել էր քաղաքական պահանջ.

> *«Անցնող այս ժամանակահատվածում կայացված որոշումների, հակամարտության այսօրինակ հանգուցալուծման եւ ազգային համերաշխության վերականգնման համար, պետք է պատասխանատվություն կրեն բոլոր պատկան մարմինների իրավասու պաշտոնյաները՝ չբացառելով նաեւ հրաժարականների հավանականությունը»*:

7.4. Բեկումնային եզրագիծը դարձավ ՀԱՍԵ փաստացի պետի՝ 2020թ. դեկտեմբերի 8-ի ուղերձը, որտեղ նա ուղիղ հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանին ուղղված հրաժարականի պահանջի մասին.

> *«...Մենք հանդիպում ունեցանք նաեւ Հայաստանի Հանրապետության վարչապետ տիար Նիկոլ Փաշինյանի հետ: Թելադրված երկրի առջեւ ծառացած եւ ահագնացող ներհասարակական լարվածությամբ, արտաքին եւ ներքին լուրջ մարտահրավերներով եւ վարչապետի անձի նկատմամբ հանրային վստահության պակասով՝ հայրաբար հորդորեցինք հանձնառություն ստանձնել եւ վայր դնել վարչապետի լիազորությունները՝ կանխելու համար հասարակական կյանքում ցնցումները, նաեւ հնարավոր բախումներն ու ողբերգական հետեւանքները»*: **[6]**

7.5. Այս հայտարարությանը հաջորդեց ընդդիմադիր ուժերի ձեւավորած «Հայրենիքի փրկության շարժման» վարչապետի թեկնածու Վազգեն Մանուկյանի հետ ՀԱՍԵ փաստացի պետի հանդիպումը: Հատկանշական է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական հաղորդագրությունում կաթողիկոսի եւ Վազգեն Մանուկյանի համատեղ նկարի ներքո նշված էր *«վարչապետի միասնական թեկնածու Վազգեն Մանուկյան»*, թեեւ այդ շրջանում վարչապետի արտահերթ ընտրության պաշտոնական գործընթաց եւ վարչապետի պաշտոնական թեկնածու առկա չէր: **[7]**

7.6. Պետք է նկատել, որ ՀԱՍԵ փաստացի պետի եւ նրան հարող բարձրաստիճան հոգեւորականների՝ ներքաղաքական գործընթացներում ընդգրկվելն ու ակտիվ դերակատարությունը չի սահմանափակվել միայն հետպատերազմական շոկի փուլերում եւ միայն հայտարարություններով, այլ այդ դրսեւորումը ստացել է կանոնավոր, մշտական եւ ակտիվ բնույթ: Վարչապետին ուղղված հրաժարականի պահանջը փաստացի կաթողիկոսը բազմիցս վերահաստատել է 2021-2023թթ-ին՝ անգամ Նիկոլ Փաշինյանի հրաժարականից եւ 2021թ. հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրություններում հաղթանակից հետո՝ ընդգծելով, որ *«Մեր դիրքորոշումներում որեւէ փոփոխություն չկա»* եւ *«Մեր հորդորը ժամանակով չի սահմանափակվում»*: **[8]** **[9]** Ընդ որում՝ ՀԱՍԵ փաստացի պետն իր հրապարակային խոսքում հաստատել է, որ Եկեղեցին (կաթողիկոսը եւ իրեն հարող հոգեւորականները) որոշում է կայացրել ներգրավվել հետպատերազմական քաղաքական

զարգացումներում, իսկ նախկին քաղաքական հիմնախնդիրներին սկզբունքորեն չեն միջամտել. *«Եկեղեցին ինքն է որոշում, թե ինչպիսի պարագաներում, ինչպիսի իրավիճակներում իր ձայնը բարձրացնի, իր ձայնը հնչեցնի: Եկեղեցին նման իրավիճակներում* (Մարտի 1, ընտրությունների կեղծում եւ այլն – խմբ.) *փաստերին չի տիրապետում եւ գուշակություններով, կռահումներով եկեղեցին չի կարող անդրադարձներ ունենալ եւ խոսք հնչեցնել»*: **[10]**

7.7. Բարձրաստիճան հոգեւորականների եւ մասնավորապես՝ ՀԱՍԵ փաստացի պետի՝ ընդդիմադիր քաղաքական գործունեություն ծավալելու կուլմինացիոն փուլը մեկնարկեց 2024թ.-ին՝ «Տավուշը հանուն հայրենիքի»/«Սրբազան շարժման» ձեւաչափով: Եթե սկզբնական շրջանում նա հայտարարում էր, թե *«Մենք որեւէ կերպով հորդոր եւ կոչ չենք ուղղել, որ ժողովուրդը դուրս գա փողոց եւ համապատասխան գործողություններ իրականացնի»* **[10]**, ապա սահմանազատման գործընթացի դեմ ընդվզման հիմնավորմամբ Եկեղեցին՝ ի դեմս Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի, սկսեց դժգոհ քաղաքացիներին մոբիլիզացնել եւ փողոցային պայքար ծավալել: Ընդ որում, կարեւոր է ընդգծել, որ այդ գործընթացը, հենց Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի խոսքով, տեղի էր ունենում անմիջականորեն ՀԱՍԵ փաստացի պետի օրհնությամբ. *«Վեհափառ Հայրապետը օրհնել է շարժումը»*: **[11]** Կապված «Հայրապետի օրհնության» պրակտիկայի հետ պետք է նկատել, որ հոգեւորականները եւ անձամբ Բագրատ արք. Գալստանյանը բազմիցս մասնակցել են ընդդիմության հանրահավաքներին կրկին «Վեհափառի օրհնությամբ». Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ *«Վեհափառի օրհնությամբ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը կմասնակցի* (2022թ., - խմբ.) *նոյեմբերի 5-ին Ֆրանսիայի հրապարակում սպասվող «Դիմադրություն» շարժման հանրահավաքին»*, Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյան. *«Ես* (ընդդիմության հանրահավաքին – խմբ.) *բերելու եմ Ամենայն հայոց հայրապետի օրհնությունը, ողջույնը ու նաեւ խոսք եմ ասելու...»*: **[12] [13]**

7.8. Արձանագրված կարեւոր փաստ է, որ ՀԱՍԵ փաստացի պետը եւ բարձրաստիճան հոգեւորականները ոչ միայն իրենք են ներգրավվել քաղաքական գործընթացներում, այլ ըստ վկայությունների՝ հորդորել կամ պարտադրել են նաեւ իրենց ենթակա հոգեւորականներին մասնակցել ընդդիմության քաղաքական ակցիաներին: Այս մասին վկայել է Արամ քահանա Ասատրյանը. *«2021 թվականի ընդդիմության գրեթե բոլոր ցույցերին ես մասնակցել եմ, բայց ոչ իմ ցանկությամբ, այլ՝ վերադասի* (կաթողիկոսի քրոջ որդու – խմբ.)»: **[14]** Ըստ վկայությունների՝ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը (կաթողիկոսի քրոջ որդին) 2021թ.-ի արտահերթ ընտրությունների նախաշեմին թեմի հոգեւորականներին ուղղորդել է չքվեարկել իշխող ուժի օգտին եւ մասնակցել ընդդիմադիր հավաքներին: **[15]** 2025թ.-ի հոկտեմբերին Պռոշյանի նկատմամբ հարուցվել է քրեական վարույթ՝ քաղաքացիներին հանրահավաքներին մասնակցելու հարկադրելու եւ ընտրական իրավունքին խոչընդոտելու մեղադրանքով, նա կալանավորվել է, իսկ 2026թ.-ի փետրվարին կալանքը փոխարինվել է տնային կալանքով: Առկա է նաեւ Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի եւ Աղան աբեղա Երնջակյանի հեռախոսազրույցի ձայնագրությունը, որտեղ աբեղան փաստում է, որ կաթողիկոսն իրեն պարտադրել է ընտանիքի հետ միասին մասնակցել իշխանության դեմ ցույցերին, իսկ հրաժարվելուց հետո աբեղային փորձել է պատժի ենթարկել (տե՛ս 4.9): **[16]**

7.9. 44-օրյա պատերազմի ավարտին բարձրաստիճան հոգեւորականների հակաիշխանական հրապարակային քայլերից առաջինը Մայր Աթոռի դիվանապետ Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանինն էր, ով նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից անմիջապես հետո՝ նոյեմբերի 11-ին, հանդես եկավ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը պահանջող հայտարարությամբ: **[17]**

7.10. Հոգեւորականների քաղաքական դերակատարության որակապես նոր փուլ նշանավորվեց 2022թ-ի փետրվարին, երբ ընդդիմության առաջնորդ, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն առաջարկեց ՀՀ նախագահի լիազորությունները վստահել բարձրաստիճան հոգեւորականներից մեկին: **[18]** Այս համատեքստում առավել ցայտուն դարձավ Շիրակի թեմի առաջնորդ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի դիրքորոշումը, ով հրապարակավ հայտարարեց, որ եկեղեցին կարող է քաղաքական իշխանություն ստանձնել. *«Եթե պետք է՝ քաղաքական իշխանություն էլ կարող ենք վերցնել: Ինչու՞ եք սարսափում այդ բանից»* **[19]**, իսկ հետագայում՝ տարբեր առիթներով, հանդես եկավ ՀՀ-ում ռազմական հեղաշրջում իրականացնելու կոչերով.

> *«Ուրեմն իմ էս վերջին 6 տարվա գործունեությունից պարզ չի՞ որ ես ինչ եմ ասում, քանի անգամ ասեցի բացեիբաց, ռազմական հեղաշրջում ա պետք, պատերազմի օրերին ասի, եւ նախագահներին ասեցի՝ Քոչարյանին եւ Սերժին...»* **[20]**,

«...Ես էդ ժամանակ ասել եմ, որ պետք է ռազմական հեղաշրջում, եւ դրանից հետո էլ եմ ասել, որ պետք է ռազմական հեղաշրջում» **[21]**:

7.11. Բարձրաստիճան հոգեւորականի՝ ընդդիմադիր քաղաքական գործչի դերում հանդես գալու առավել ընդգծված դրվագը Տավուշի թեմի առաջնորդ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանինն էր: 2024թ-ի մայիսին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման դեմ Կիրանցում սկսված նստացույցը Գալստանյանը փոխակերպեց «Սրբազան պայքար» քաղաքական շարժման եւ ընդդիմադիր քաղաքական ուժերի մասնակցությամբ քայլերթով շարժվեց Երեւան: Հանրապետության հրապարակում սահմանազատման դադարեցման պահանջը Գալստանյանի կողմից փոխակերպվեց վարչապետի հրաժարականի պահանջով: **[22]** Տեւական փողոցային պայքարի ակցիաներից հետո Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանն առաջադրվեց որպես ՀՀ վարչապետի թեկնածու՝ ըստ իրեն՝ «սառեցնելով հոգեւոր ծառայությունը» **[23]** (Պետք է նկատել, որ հոգեւոր ծառայությունը ոչ թե դադարեցվել է, կամ հոգեւորականը կարգալույծ է հռչակվել, այլ հոգեւոր ծառայությունը «սառեցվել է», ինչը ո՛չ ՀԱՍԵ, ո՛չ ավանդական այլ եկեղեցիների որեւէ կանոնակարգով նախատեսված չէ, քանի որ եպիսկոպոսական աստիճանն առաքյալներից ժառանգված իշխանություն է նշանակում: Բացի այդ, հայտնի է նախկինում «կուսակցական գործունեությամբ ու քարոզչությամբ» զբաղվելու համար կաթողիկոսի կողմից հոգեւորականին կարգալույծ անելու նախադեպի մասին, ինչը Գալստանյանի դեպքում չի կիրառվել **[24]**): Գործող հոգեւորականի կողմից վարչապետի պաշտոնի հավակնությունն աննախադեպ էր ՀԱՍԵ պատմության մեջ: Ընդ որում, այդ ընթացքում Գալստանյանը բազմիցս նշել է, որ գործում է կաթողիկոսի օրհնությամբ: **[25]**

7.12. Բագրատ արք. Գալստանյանի քաղաքական գործունեության գագաթնակետը դարձավ 2024թ.-ի հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի շենքի դիմացի բողոքի ակցիան, երբ արքեպիսկոպոսի հրամանով մի խումբ ընդդիմադիր պատգամավորներ փորձեցին ճեղքել ոստիկանության պատը, ինչին հաջորդեց ցուցարարների կողմից ԱԺ տարածք մուտք գործելու փորձը: Այդ ամենն ավարտվեց ցուցարարների կողմից իրավապահ մարմինների ներկայացուցիչների եւ ԱԺ շենքի վրա հարձակման փորձով, ինչը կանխարգելելու նպատակով իրավապահները ստիպված էին կանխարգելիչ միջոցներ կիրառել: Միջադեպի հետեւանքով իրավապահների եւ ցուցարարների շրջանում եղան 100-ից ավել տուժածներ: **[26]** Մեկ տարի անց իրավապահ համակարգը հրապարակեց հայտարարություն եւ կից փաստեր ձայնագրությունների եւ այլ նյութերի տեսքով, ըստ որոնց՝ «Սրբազան պայքար» անվանումով շարժման մասնակիցները եւ ղեկավարները պլանավորել էին Հայաստանում իրականացնել ահաբեկչական եւ իշխանությունը զավթելուն ուղղված գործողություններ: **[27]** Տվյալ գործով Բագրատ Գալստանյանը եւ այլ անձինք ձերբակալվեցին:

7.13. Ըստ վկայությունների՝ ՀԱՍԵ եպիսկոպոսների մեծ մասը դեմ է եղել Գալստանյանի այդտեսակ գործունեությանը: Մասնավորապես, Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը հարցազրույցում հաստատել է, որ այդ հարցով կայացած եպիսկոպոսների ժողովում եպիսկոպոսների ճնշող մեծամասնությունը դեմ է եղել Գալստանյանի քաղաքական գործունեությանը, քանի որ դա հակականոնական է.

> *«24 եպիսկոպոս է մասնակցել քննարկմանը, եւ 24-ից 20-ը դեմ են եղել, որ Բագրատ սրբազանը քաղաքական շարժում սկսի, որովհետեւ դա հակականոնական է: Այո, ծառայությունը սառեցվեց, բայց մարդը զգեստով ներկայացավ իբրեւ առաջնորդ եւ շատ-շատերը նույնացնելով նրան Հայ եկեղեցու հետ, գնացին միացան: Բայց որ եկեղեցականը չպետք է նման բան աներ, դա փաստվում է եկեղեցու կանոններով»*: **[28]**

7.14. Քաղաքական դրդապատճառներով պայմանավորված՝ արձանագրվել են դեպքեր, երբ հոգեւորականները հրաժարվել են կատարել ծիսակատարություններ կամ քաղաքական հայացքների համար արգելել են քաղաքացիներին մուտք գործել եկեղեցի:

- Սաղմոսավանքի քահանա Օշին Հայրապետյանը պսակադրության պատրաստվող զույգին հորդորել է չունենալ իշխող կուսակցությանն առնչվող կնքահայր **[29]**:
- Նիժնի Նովգորոդի հայկական համայնքի քահանա Սեբեոս Ղալաչյանը հրաժարվել է մկրտել երեխային՝ իշխող ուժի պատգամավոր կնքահայր ունենալու պատճառով: **[30]**
- Մարմաշենի հոգեւոր հովիվ Փառեն քահանա Պետրոսյանը հրապարակային գրառմամբ հայտարարել է, որ «նիկոլական գաղափարների հիվանդություններով տառապողներին» արգելելու է մուտք գործել եկեղեցի եւ դուրս է շպրտելու. *«Իմ հովվության տարածքում գործող որեւէ եկեղեցի կամ սրբավայր, որն իմ ենթակայության տակ է, որեւէ նմանատիպ անձի նկատեցի եկեղեցի մտնելիս կամ լսեցի սխալ արտահայտություններ թույլ տալիս, ապա կտրականապես արգելելու եմ եւ թույլ չեմ տալու մտնել եկեղեցի կամ տարածք, դուրս եմ շպրտելու շատ կոպիտ ձեւով»*: **[31]**
- Հոգեւորականների կողմից ատելության խոսքի տարածման այլ դեպքեր թվարկված են 8.4. կետում:

Այս եւ նմանատիպ այլ դեպքերը եկեղեցական կանոնակարգի հետ խիստ հակասության մեջ մտնող դրվագներ են, որոնք Մայր Աթոռի կողմից պաշտոնական գնահատականի չեն արժանացել:

7.15. ՀԱՍԵ փաստացի պետի ազդեցությամբ Եկեղեցու՝ ներքաղաքական գործընթացներին միջամտելու վերաբերյալ արձանագրում է կատարել նաեւ ԵԽԽՎ դիտորդական առաքելությունը, ըստ որի՝ *«Պատվիրակությունն արձանագրել է քաղաքականության մեջ Հայ առաքելական եկեղեցու աննախադեպ ներգրավվածությունը»*: **[32]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.16. Հայաստանի Հանրապետությունում պետություն–եկեղեցի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով, «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով: ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը («Պետությունը եւ կրոնական կազմակերպությունները») սահմանում է.

> *«1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: 2. Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից»*:

«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը:

7.17. Հայ եկեղեցու կանոնագիրքը հակականոնական է համարում հոգեւորականների կողմից աշխարհիկ իշխանություն ստանձնելը: ՀԱՍԵ Կանոնագրքում ներառված «Առաքելական կանոններ»-ի 81-րդ կանոնով սահմանված է.

> *«81 (75). Ասացինք, որ վայել չէ եպիսկոպոսին կամ քահանային ժողովրդական կառավարութեան գործերում խառնուել, այլ եկեղեցական կարգերը ժրաջանութեամբ կատարել: Կամ պիտի դադարեն, կամ կարգալոյծ լինեն, որովհետեւ երկուց տերանց ծառայել չի կարելի (Մատթ. Զ:24)»*:

Նաեւ ներկայում ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցված «Նախաշավիղ» կանոնադրությունը չունի որեւէ դրույթ, որտեղ թույլատրվում է եկեղեցականներին զբաղվել հոգեւոր ծառայությունից բացի այլ տեսակի գործունեությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

7.18. 2008թ.-ի ընտրախախտումների եւ մարտի 1-ի բռնությունների պայմաններում Եկեղեցին ոչ միայն լռեց, այլեւ դատապարտեց բողոքի ակցիաներն ու շնորհավորեց իշխանության հաղթանակը: 2020թ.-ի դեկտեմբերին՝ առաջին անգամ Հայաստանի անկախության պատմության մեջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես եկավ քաղաքական վերջնագրով՝ ընտրված վարչապետի հրաժարականի պահանջով: Այս տարբերությունը բացատրվել է հենց ՀԱՍԵ փաստացի պետի կողմից. *«Եկեղեցին ինքն է որոշում, թե ինչպիսի պարագաներում իր ձայնը հնչեցնի»*: Ինքնախոստովանությունն արձանագրում է, որ Եկեղեցու ձայնը հնչեցվում է քաղաքական նպատակահարմարության չափանիշով:

7.19. ՀԱՍԵ փաստացի պետը եւ մի շարք բարձրաստիճան հոգեւորականներ ընկնում են Առաքելական 81-րդ կանոնի ուղղակի պատժի ներքո: Կանոնը՝ *«վայել չէ եպիսկոպոսին կամ քահանային ժողովրդական կառավարութեան գործերում խառնուել... Կամ պիտի դադարեն, կամ կարգալոյծ լինեն»*, այլընտրանք չի թողնում: Ոչ ոք չի դադարել, եւ ոչ մեկի նկատմամբ կանոնական հետեւանք չի կիրառվել, քանի որ կանոնը կիրառելու պարտավորությունը կրում է հենց ՀԱՍԵ փաստացի պետը, ով առաջինն է այն խախտել:

7.20. Եկեղեցու քաղաքականացումը եպիսկոպոսաց դասի կամքի արդյունք չէ, այլ մեկ անձի կամ փոքր խմբի որոշում: Եպիսկոպոսների ժողովում 24-ից 20-ը դեմ են արտահայտվել Բագրատ արք. Գալստանյանի քաղաքական գործունեությանը՝ որպես հակականոնական: ՀԱՍԵ փաստացի պետը շրջանցել է եպիսկոպոսների ճնշող մեծամասնության դիրքորոշումը եւ իր օրինությամբ արտոնել այդ գործունեությունը՝ ընդհուպ գործող հոգեւորականի՝ վարչապետի պաշտոնի հավակնությունը: Կանոնական կոլեգիալության եւ անխախտ ու անսասան միաբանության սկզբունքները փոխարինվել են անձնական կամքով:

7.21. ՀԱՍԵ փաստացի պետի հակականոնական գործունեության հետեւանքով Եկեղեցում հոգեւոր ենթակայությունը վերածվել է քաղաքական մոբիլիզացիայի գործիքի: Փաստագրված են դեպքեր, երբ հոգեւորականներին վերադասի կողմից պարտադրվել է մասնակցել ընդդիմադիր ակցիաներին, իսկ հրաժարվողները ենթարկվել են պատժի՝ ընդհուպ կարգալուծության: Ձեռնադրության ուխտով ստանձնված հնազանդությունը շահագործվել է քաղաքական նպատակով, ինչը հոգեւոր իշխանության չարաշահման ծանրագույն ձեւն է:

7.22. ՀԱՍԵ փաստացի պետի պառակտիչ քաղաքական գործունեության արդյունքում արձանագրված են բազում դեպքեր, երբ հոգեւոր սպասավորները քաղաքական պատկանելության հիմքով արգելել են քաղաքացիներին մուտք գործել եկեղեցի, սպառնացել են Եկեղեցուց վտարումով, հրաժարվել են մկրտել երեխային կամ պսակել զույգին: Եկեղեցական ծեսերի՝ քաղաքական պայմանով սահմանափակելը հակասում է Ավետարանին, Եկեղեցու հիմնարար ուսմունքին եւ Կանոնագրքին: Մայր Աթոռն այս դեպքերին որեւէ պաշտոնական գնահատական չի տվել, ինչը դրանք դարձնում է լռելյայն հաստատված պրակտիկա:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ կառավարություն (2008-02-20). «Սերժ Սարգսյանին շնորհավորել եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից իր հայրապետական օրհնությունն է հղել Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը». https://www.gov.am/am/news/item/5001/
2. WikiLeaks (2008-11-7). «AMBASSADOR'S INTRODUCTORY CALL ON ARMENIAN CATHOLICOS». https://wikileaks.org/plusd/cables/08YEREVAN887_a.html
3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (2008-02-29). «Հայ Եկեղեցու առաջնորդների ուղերձը ժողովրդին». https://www.armenianchurch.org/hy/news/981
4. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (2020-09-27). «Ամենայն հայոց կաթողիկոսը հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի Հանրապետության Վարչապետի հետ»
5. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (2020-11-16). «Գերագույն հոգեւոր խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ»
6. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (2020-12-08). «Ամենայն հայոց կաթողիկոսի ուղերձը Հայաստանում ներքաղաքական իրավիճակի կապակցությամբ»
7. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (2020-12-13). «Ամենայն հայոց կաթողիկոսը հանդիպում ունեցավ Վազգեն Մանուկյանի հետ»
8. Արմենպրես (2021-01-28). «Մեր դիրքորոշումներում որեւէ փոփոխություն չկա. Գարեգին Բ-ն՝ վարչապետի հրաժարականը պահանջելու մասին». https://armenpress.am/hy/article/1041674
9. News.am (2023-04-20). ««Մեր հայրական հորդորը ժամանակով չի սահմանափակվում». Գարեգին Բ-ն՝ Փաշինյանի հրաժարականը պահանջելու մասին». https://news.am/hy/video/755831
10. Aravot.am (2021-01-28). «Ինչո՞ւ եկեղեցին լռեց Մարտի 1-ի ժամանակ ու բողոքում է հիմա. Կաթողիկոսը պարզաբանում է». https://www.aravot.am/2021/01/28/1167768/
11. Tert.am (2024-05-08). «Վեհափառ Հայրապետը օրհնել է շարժումը. Բագրատ Սրբազանը՝ ի պատասխան Փաշինյանի հայտարարության». https://tert.am/am/news/2024/05/08/bagrat-srbazan/4120846
12. News.am (2022-11-03). «Վեհափառի օրհնությամբ Բագրատ Սրբազանը կմասնակցի նոյեմբերի 5-ի հանրահավաքին». https://news.am/hy/news/728521
13. Սպուտնիկ Արմենիա (2022-11-04). «Եկեղեցին իրավունք չունի լուռ մնալու. ինչու է Բագրատ Սրբազանը մասնակցելու հանրահավաքին».

    https://arm.sputniknews.ru/20221104/ekeghecin-iravunq-chuni-lur-mnalu-inchu-e-bagrat-srbazany-masnakcelu-hanrahavaqin-50869367.html
14. Հանրային հեռուստաընկերություն (2025-09-16). «Հարցազրույց Տեր Արամ քահանա Ասատրյանի հետ». https://www.youtube.com/watch?v=HKrFXkiBwt0
15. Ազատություն (2025-10). «Արագածոտնի թեմի առաջնորդը 2 ամսով կալանավորվեց՝ հոգեւորականների ցուցմունքի հիման վրա». https://youtu.be/XGAzt5mdgZk
16. Ձայնագրություն (2025-10-17). «Նաթան արքեպիսկոպոսի եւ Աղան աբեղայի ձայնագրությունը». https://www.youtube.com/watch?v=dXkEeMewSso
17. Asekose.am (2020-11-11). «Նիկոլ Փաշինյանը պետք է հեռանա. Արշակ եպիսկոպոս Խաչատրյան».

    http://asekose.am/am/post/nikol-pasinyane-petq-e-herana-arsak-episkopos-xacatryan
18. 1in TV / YouTube (2022-02-17). «Թող ՀՀ նախագահ լինի սրբազաններից մեկը. Ռոբերտ Քոչարյան». https://youtu.be/5VLn4JmS0p4
19. Civilnet. «Եթե պետք է, քաղաքական իշխանություն էլ կարող ենք վերցնել. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյան». https://youtube.com/shorts/4GKNu0ihNDA
20. GalaTV (2024-02-03). «Իշխանությունը փոխելու երեք տարբերակ կա, երեքն էլ անհնար է..միակ փրկությունը՝ հասկանալ, որ հիվանդ ենք». https://www.youtube.com/watch?v=_0tLstt2J7Q&t=1155s
21. Oragir News (2023-09-26). «Ռազմական հեղաշրջում պետք է արվի... Աջապահյան». https://youtu.be/M3lKtB4EpNc ; ՀՀ Գլխավոր դատախազություն. https://www.facebook.com/GenProcArmenia/posts/748916434664732/ ; Hetq.am (2025-06-28). «Միքայել Աջապահյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հիմքերից մեկը 2025թ. հունիսի 21-ին իշխանությունը զավթելուն ուղղված հրապարակային կոչն է». https://hetq.am/hy/article/175254
22. News.am (2024-05-09). «Փաշինյան, 1 ժամ ունես հրաժարական ներկայացնելու. Բագրատ Սրբազան». https://youtu.be/NMkNnDTLQTc
23. Ազատություն (2024-05-26). «Շարժման վարչապետի թեկնածուն Բագրատ սրբազանն է. նա սառեցնում է հոգեւոր ծառայությունը». https://www.azatutyun.am/a/pm-candidate-bagrat-galstanyan-/32964303.html
24. Արմենպրես (2021-12-27). «Կարգալույծ է հռչակվել Տ. Ղազար քահանա Պետրոսյանը». https://armenpress.am/hy/article/1071819
25. 1in.am (2024-05-08). «Այո՛, Վեհափառ Հայրապետը օրհնել է մեր շարժումը. Բագրատ Սրբազան». https://youtu.be/Ge2uijqnn7o
26. News.am. (2024-06-13). «Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով բուժօգնության է դիմել 101 անձ. 85-ը դուրս է գրվել. ԱՆ». https://news.am/hy/news/828879
27. Հանրային ռադիո (2025-06-25). ««Սրբազան պայքար» անվանումով շարժման մասնակիցները եւ ղեկավարները պլանավորել էին ՀՀ-ում իրականացնել ահաբեկչական եւ իշխանությունը զավթելուն ուղղված գործողություններ. ՔԿ». https://hy.armradio.am/archives/664751

28. Հանրային հեռուստաընկերություն (2025-12-02). «Հարցազրույց Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի հետ». https://www.youtube.com/live/aK4dIM6O4yg
29. Aysor.am (23-02-26). «Ասել եմ, ասում եմ՝ ՔՊ-ականներն ինձ համար հայրենավաճառ են. Տեր Օշին». https://www.aysor.am/am/news/2026/02/23/տեր+Օշին/2416878
30. Հրապարակ (2025-07-18) «Սեբեոս քահանա Ղալաչյանը թույլ չի տվել, որ ՔՊ-ականը մկրտության քավոր կանգնի». https://hraparak.am/am/post/baceafcbd56c440828d01ece8c16c9b1 ; Asekose.am (2025-07-18). «Քահանան բացատրել է՝ ինչու թույլ չի տվել ՔՊ–ական պատգամավորին կնքահայր լինել». https://youtu.be/Wt4BMcDBXgU
31. 168.am (2025-05-31). «Ամենայն խստությամբ հսկելու եւ հետեւելու եմ ամեն մեկի մուտքը եկեղեցիներ. Մարմաշենի վանահայր». https://168.am/2025/05/31/2223290.html
32. ԵԽԽՎ (PACE). Բանաձեւ թիվ 2633 (2026) «Ժողովրդավարական ինստիտուտների գործառնությունը Հայաստանում» (ընդունված՝ 2026թ. հունվարի նստաշրջան, ընդունված տեքստեր՝ https://pace.coe.int/en/pages/session-202601), ինչպես նաեւ նախընտրական պատվիրակության միջանկյալ հայտարարությունը (2026-05-13, Երեւան).
https://pace.coe.int/en/news/10295/armenia-s-elections-must-not-be-endangered-by-foreign-interference-and-a-level-playing-field-for-all-contestants-is-essential-says-pace-pre-electoral-delegation-in-yerevan

08 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը հոգեւորականների ներառմամբ ստեղծել է սոցիալական ցանցերի կեղծ եւ իրական օգտատերերի ցանց, որոնց միջոցով ատելություն եւ անհանդուրժողականություն է քարոզում եւ ապատեղեկատվություն տարածում:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Առկա են հրապարակումներ եւ վկայություններ, ըստ որոնց, ՀԱՍԵ փաստացի պետի նախաձեռնությամբ եւ որոշ բարձրագույն հոգեւորականների համակարգմամբ 2024թ.-ից եկեղեցական միջավայրում ձեւավորվել է հոգեւորականների փակ (տելեգրամյան) խումբ՝ սոցիալական ցանցերում ՀՀ իշխանության դեմ համակարգված քարոզչություն եւ ապատեղեկատվություն իրականացնելու նպատակով: **[1]**

> *«Քահանաների ընտրությունը կատարվել է անձամբ Կտրիճ Ներսիսյանի կողմից: Խմբի մեջ ընդգրկվել են արդեն իրենց վստահելիությունը հակակառավարական գործունեությամբ փաստած քահանաներ, ինչպիսիք են օրինակ Սյունյաց թեմի քահանաներ Տ. Ահարոն Մելքումյանը, Տ. Պարգեւ Ձեյնալյանը, Կոտայքի թեմի Տ. Սմբատ Սարգսյանը եւ այլն»*,

- ասված է թեմայի շուրջ լրատվական հրապարակման մեջ: Խմբի անդամները պարբերաբար հանդիպումներ են ունեցել սկզբում Մայր Աթոռում, այնուհետեւ Արարատյան Հայրապետական թեմում եւ այլ վայրերում:

> *«Այս ամբողջ գործընթացում առաջ են գալիս նույն անունները՝ Մուշեղ եպիսկոպոս Բաբայան, Տեր Համբարձում Դանիելյան: Նրանք ակտիվ ներգրավված են քաղաքական ներշնչմամբ իրականացվող համացանցային հարձակումների համակարգման մեջ՝ ֆեյք հաշիվների, անանուն էջերի եւ մանիպուլյացիոն մեթոդների կիրառմամբ»*,

- նշված է նյութում:

8.2. Ըստ թեմայի շուրջ հրապարակման՝ որպես տելեգրամյան խմբի անդամ Հայաստանյան բոլոր թեմերից ընտրված է եղել երկուական քահանա՝

- Արարատյան թեմ – Պետրոս ավագ քահանա Մալյան, Բարդուղիմեոս քահանա Հակոբյան
- Արագածոտնի թեմ – Մուշե քահանա Վահանյան, Փառեն քահանա Առաքելյան
- Մասյացոտնի թեմ – Ղազար քահանա Թորոսյան, Պողոս քահանա Միքայելյան
- Գուգարաց թեմ – Վահան քահանա Ազարյան, Միքայել քահանա Շաղոյան

- Արմավիրի թեմ – Ներսես քահանա Ռուշանյան, Ահարոն քահանա Գրիգորյան
- Գեղարքունյաց թեմ – Ստեփանոս քահանա Իգնաթեւոսյան, Սիմեոն քահանա Հովհաննիսյան
- Տավուշի թեմ – Արամ քահանա Միրզոյան, Աբել քահանա Քարտաշյան
- Վայոց ձորի թեմ – Ներսես քահանա Աշուղբաբյան, Արամ քահանա Կարապետյան
- Շիրակի թեմ – Նշան քահանա Պանֆյորով, Նարեկ քահանա Անտոնյան
- Կոտայքի թեմ – Սահակ քահանա Սահակյան, Սմբատ քահանա Սարգսյան
- Սյունյաց թեմ – Ահարոն քահանա Մելքումյան, Պարգեւ քահանա Զեյնալյան
- Արթիկի թեմ – Վիգեն քահանա Ղազարյան, Լեւոն քահանա Հովհաննիսյան

Խմբի առաջին հավաքը տեղի է ունեցել 2025թ. հուլիսի սկզբին՝ Մայր Աթոռում՝ ՀԱՍԵ փաստացի պետի գլխավորությամբ: Երկրորդ հավաքը տեղի է ունեցել 2025թ. հուլիսի վերջին՝ Երեւանի Սբ. Սարգիս եկեղեցում, իսկ երրորդ հավաքը՝ 2025թ. օգոստոսին՝ Մասյացոտնի թեմի Մասիս քաղաքում գործող Սբ. Թադեւոս եկեղեցում:

8.3. Հոգեւորականների ներգրավմամբ փակ խմբի ստեղծումը եւ դրա գործունեությունը հաստատել է նաեւ այդ խմբում ներգրավված Բարդուղիմեոս քահանա Հակոբյանը, ով պատմել է նման ժողովների մասին, ինչպես նաեւ հաստատել է, որ այդ խմբի հանձնարարությունը եղել է 2026թ.-ի ընտրություններին ընդառաջ տեղեկատվական աշխատանքներ իրականացնելը, որպեսզի *«Նիկոլը չընտրվի»*: Բարդուղիմեոս քահանա Հակոբյանը մասնավորապես ասել է.

> *«Ինձ համար անընդունելի էր, երբ որ կոչ էր հնչում՝ «մենք պետք է զբաղվենք, պատրաստվենք 2026թ.-ի ընտրություններին, պետք է թողնենք շատ ու շատ գործառույթներ եւ զբաղվենք, որ Նիկոլը հանկարծ չընտրվի»: Ինձ համար անընդունելի էին այդ գաղափարները, եւ երբ ես վերադարձա ժողովից, իմ առաջնորդ Նավասարդ Սրբազանին իմ բողոքը հղեցի, որ ես չեմ ցանկանում մնալ այնտեղ, որտեղ ինձ ուղարկել են քարոզչություն անելու համար: Սրբազանն ինձ հորդորեց, որ մնամ»*: **[2]**

8.4. Վերոնշյալ ցուցակում ներառված հոգեւորականների մի մասն իրենց պատկանող սոցցանցային էջերում, ինչպես նաեւ տարբեր հրապարակային ելույթներում պարբերաբար տարածել են ատելության խոսք եւ թշնամանք սերմանող ձեւակերպումներ ու բնորոշումներ:

- Ահարոն քահանա Մելքումյան. *«Եթե քահանա էլ գնա դրանց թաղում անի, նզովքի է վերածվել: Ով գնացել է եկեղեցու դեմ, եկեղեցու դուռ է փակել կամ եկեղեցականի վրա է հարձակվել, նրանց ննջեցյալին քահանան գնաց, աղոթք արեց, նզովք է դառնալու: Իրենք անթաղ պիտի մեռնեն, որովհետեւ դրանք հայ չեն, հայը իր ինքնության դեմ դուրս չի գա»*: **[3]**
- Ահարոն քահանա Մելքումյան. *«Որեւէ հայ դավաճան մինչեւ այսօր իր մահով չի մահացել, Հուդան՝ վկա: Սա սատանա է, հայի թշնամուն է ծառայում: Սրանք թշնամի են, եւ պարզ է, որ այդ թշնամին պետք է հարձակվի այն կառույցի վրա, որը մեզ պահպանել է, սրանք նզովյալներ են: Սրանք հոգեւոր բորոտներ են. եկեղեցու վրա հարձակվում է սատանան, իսկ սա սատանայի ծառան է, իր ավերն է անում»*: **[4]**
- Պետրոս ավագ քահանա Մայյան. *«2018 թվականին տեղի ունեցած ադրբեջանաթուրքական հեղափոխությունից հետո եկեղեցու դեմ իրականցվող հարձակումները վերափոխվեցին կազմակերպված արշավանքի: Լիբերալ ֆաշիստներն արդեն ապօրինաբար զավթել էին իշխանությունը եւ տիրապետում էին պետական լծակներին՝ հակաեկեղեցականությունը պետական մակարդակով իրականացնելու համար»*: **[5]**

- Ահարոն քահանա Մելքումյան. *«Բազմիցս ասել եմ իմ հարցազրույցներում, որ նրանք, որպես ամուսիններ որեւէ տեղ գրանցված չեն, հետեւաբար իրենց միությունը պոռնկական հարաբերություններ են եղել, զավակները, որ ծնել են պոռնկական հարաբերության արդյունք են, անառակության անկողնուց ծնված»*: **[6]**
- Քաղաքական հայացքներով պայմանավորված այլ հոգեւորականների կողմից ծիսակատարությունների խափանման, քաղաքացիների մուտքը եկեղեցի արգելելու դեպքեր թվարկված են նաեւ 7.14. ենթաբաժնում:

ԱՄՓՈՓՈՒՄ

8.5. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը հոգեւորականների ներառմամբ ստեղծել է սոցիալական ցանցերի կեղծ եւ իրական օգտատերերի ցանց, որոնց միջոցով ատելություն եւ անհանդուրժողականություն է քարոզում եւ ապատեղեկատվություն տարածում: Հոգեւոր ծառայություն իրականացնելու փոխարեն վերադասի պարտադրմամբ ՀԱՍԵ հոգեւորականները ներգրավվել են քաղաքական քարոզչություն եւ հակաքարոզչություն իրականացնելու աշխատանքներում:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Zarkerak.am (2025-09-09). «Կտրիճ Ներսիսյանը դեռեւս 2024-ին "ֆեյքերեցների" գունդ է ձեւավորել». https://zarkerak.am/show/136724
2. FreeNews.am (2026-01-12). «Չէի ուզում փակագծերը բացել, բայց ասեմ՝ դա շրջադարձ էր. Տեր Բարդուղիմեոս քահանա Հակոբյան». https://www.youtube.com/watch?v=gdoJzYxr6io
3. News.am (2025-10-15). «Որ քահանան գնաց նրանց ննջեցյալին աղոթք արեց, նզովք է դառնալու. իրենք անթաղ պիտի մեռնեն. Տեր Ահարոն քահանա Մելքումյան». https://news.am/hy/news/909929
4. 168.am (2025-06-02). «Սրանք հոգեւոր բորոտներ են. եկեղեցու վրա հարձակվում է սատանան, իսկ սա սատանայի ծառան է, իր ավերն է անում. Տեր Ահարոն քահանա Մելքումյան». https://168.am/2025/06/02/2224042.html
5. Տ. Պետրոս ավագ քհն. Վանեցի (2024-01-03). Ֆեյսբուքյան գրառում. https://www.facebook.com/photo/?fbid=4111336622426771
6. Yerkir.am (2026-02-27). «Բայց դուք ե՞րբ էիք ամուսնացած եղել, որ հիմա էլ բաժանվում եք. Տեր Ահարոն քահանա». https://yerkir.am/hy/article/2026/02/27/307779

09 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը եւ նրա ընտանիքի անդամները ՀԱՍԵ-ն օգտագործում են Հայաստանի Հանրապետությունում արտաքին ազդեցությունների տարածման համար:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. ՀԱՍԵ փաստացի պետի եղբոր՝ Եզրաս արք. Ներսիսյանի շուրջ 2025թ. վերջին ի հայտ են եկել ազգային անվտանգության բնույթի հարցադրումներ: 2025թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը հայտնեց, որ Եզրաս արքեպիսկոպոսը 1986–1988թթ-ին հավաքագրվել եւ համագործակցել է ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի (ՊԱԿ-ԿԳԲ) հետ՝ «Կարո» ծածկանունով, իսկ 2026թ. մարտին ԱԱԾ տնօրենը հրապարակավ վերահաստատեց այս տեղեկությունը՝ նշելով, որ առկա են տվյալներ նաեւ օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ նրա ներկայիս կապերի մասին, որոնք կարող են սպառնալիք ներկայացնել ՀՀ շահերի համար: **[1]** **[2]** Օտար երկրի հատուկ ծառայությունում հավաքագրված լինելու հանգամանքը հատուկ նշանակություն է ստանում

այն համատեքստում, որ Եզրաս արքեպիսկոպոսը ղեկավարում է Ռուսաստանի ամենամեծ հայկական թեմը, ՀԱՍԵ փաստացի պետի եղբայրն է եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ:

9.2. Եզրաս արք. Ներսիսյանը 2002թ.-ից հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր՝ կրոնական միավորումների հետ փոխգործակցության խորհրդի անդամ: Եզրաս արք. Ներսիսյանն իր գործունեության ընթացքում բազմիցս ստացել է ՌԴ պետական պարգեւներ. «Հայրենիքի առջեւ ունեցած վաստակի համար» II աստիճանի շքանշանի մեդալ (2001), ՌԴ Արդարադատության նախարարության մեդալ (2002), «Բարեկամության» շքանշան (2009), «Պատվո» շքանշան (2019), Ալեքսանդր Նեւսկու շքանշան (2025), ինչպես նաեւ Ռուս ուղղափառ եկեղեցու Մոսկվայի Ս. Դանիելի շքանշանի III (1995) եւ II (2009) աստիճանները: **[3]**

9.3. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Ռուսաստանի Դաշնությունում գործող թեմերի կառույցները 2025-2026թթ-ին վերածվել են ՀՀ իշխանության դեմ ուղղված հանրային-քաղաքական գործողությունների կազմակերպչական գործիքի, ընդ որում, այդ գործողություններն իրականացվել են ուղղակիորեն եկեղեցական տարածքներում եւ թեմական մարմինների պաշտոնական մասնակցությամբ: 2025թ. դեկտեմբերին հրապարակային տեղեկություն է շրջանառվել այն մասին, որ Ռուսաստանում գործող որոշ կառույցներ ՀԱՍԵ փաստացի պետի հնարավոր հեռացման դեպքում քննարկում են նրան Ռուսաստանի Դաշնություն տեղափոխելու սցենարը: Ըստ այդ սցենարի՝ Ռուսաստանում կմիավորվեն մի կողմից Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի, իսկ մյուս կողմից Հարավային Ռուսաստանի հայոց թեմերը, եւ կստեղծվի, այսպես կոչված՝ «վտարանդի» կաթողիկոսական աթոռ: **[4]**

9.4. 2025թ. դեկտեմբերին Մոսկվայի հայկական եկեղեցու առաջնորդարանում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի թեմական խորհրդի նախաձեռնությամբ գումարված ժողովում մասնակցել են թեմի հոգեւորականները, թեմական խորհրդի անդամները, ինչպես նաեւ, ըստ ընդունված փաստաթղթի, *«Վլադիվոստոկից մինչեւ Կալինինգրադ, Միջին Ասիայից մինչեւ Բելառուս եւ Մոլդովա»* ընկած տարածքի ծխական խորհուրդների ատենապետերն ու ներկայացուցիչները: Ժողովի ավարտին ընդունված համատեղ հայտարարությունն ամբողջությամբ քաղաքական բովանդակություն ունի: **[5]** Օտար պետությունում գործող Հայ եկեղեցական վարչական կենտրոնում գումարված հոգեւորականների ժողովը հանդես է եկել ՀՀ գործող իշխանության լեգիտիմությունը վիճարկող կոլեկտիվ քաղաքական ակտով:

9.5. 2025թ. նոյեմբերին Մոսկվայում՝ ՀՀ դեսպանատան, եւ Սանկտ Պետերբուրգում՝ ՀՀ գլխավոր հյուպատոսության դիմաց անցկացվել է «Մենք Էջմիածնի հետ ենք» խորագրով ակցիա, որին, ըստ ռուսական լրատվամիջոցների, միացել են ՀԱՍԵ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի հոգեւորականները: Ակցիայի մասնակիցները ՀՀ իշխանությունների քաղաքականությունը որակել են «հակակրոնական» եւ «եկեղեցազավթիչ» ու պահանջել ազատ արձակել կալանավորված բարձրաստիճան հոգեւորականներին եւ գործարար Սամվել Կարապետյանին: **[6]** **[7]** Համանման ակցիա անցկացվել է 2026թ. փետրվարին՝ կրկին Մոսկվայում՝ ի պաշտպանություն անձամբ ՀԱՍԵ փաստացի պետի: **[8]** Հատկանշական է ակցիաների ժամանակագրական կապվածությունը ՀՀ բարձրագույն ղեկավարության այցերին. 2026թ. ապրիլի 1-ին՝ ՀՀ վարչապետի՝ Ռուսաստան կատարած այցի օրը, Մոսկվայում՝ ՀՀ դեսպանատան դիմաց, կազմակերպվել է բողոքի ակցիա, որի ընթացքում ցուցարարները հրապարակավ այրել են ՀՀ վարչապետի դիմանկարը եւ հայտարարել, թե Հայաստանի իշխանությունները «ոչնչացնում են Հայաստանը»: Ըստ հրապարակումների՝ ակցիային միացել են նաեւ հոգեւորականներ: **[9]** **[10]**

9.6. ՀԱՍԵ փաստացի պետը եւ նրա եղբայր՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը, Եկեղեցին որպես արտաքին ազդեցության ծավալման գործիք լայն կերպով օգտագործեցին 2026թ.-ի խորհրդարանական ընտրությունների նախընտրական շրջանում՝ ակնհայտորեն քարոզելով ընդդիմադիր քաղաքական ուժի ղեկավար Սամվել Կարապետյանի օգտին եւ Հայաստանի իշխանության դեմ հայտարարություններ ու ակցիաներ կազմակերպելով:

9.7. 2026թ-ի մայիսի 10-ին, երբ արդեն մեկնարկել էր նախընտրական քարոզարշավը, ՀԱՍԵ փաստացի պետը հանդիպեց ընդդիմադիր քաղաքական ուժի առաջնորդ Սամվել Կարապետյանին: Այդ հանդիպմանը, որը տեղի էր ունենում Ս. Կարապետյանի տանը, ՀԱՍԵ փաստացի պետը Ս. Կարապետյանին «բերեց Սուրբ Էջմիածնի օրհնությունը».

> *«Նորին Սրբությունը մեծանուն հայորդուն բերեց Սուրբ Էջմիածնի օրհնությունը եւ բարեմաղթեց տոկունությամբ ու հավատով դիմագրավելու առկա դժվարություններն ու փորձությունները»*: **[11]**

Նա նախընտրական շրջանում հանդիպումներ է ունեցել նաեւ երեք նախկին նախագահների հետ, ինչը հրապարակավ հաստատել է 2026թ.-ի հունիսի 2-ի ասուլիսում: **[12]** Մայիսի 24-ին ՀԱՍԵ փաստացի պետը հանդես է եկել իշխանության դեմ ուղղված հայտարարությամբ.

> *«Ցավով ենք անդրադառնում, որ Հայոց Եկեղեցու սպասավորները այսօր եւս Հայաստանում իշխանությունների կողմից անհիմն մեղադրանքներով ենթարկվում են հետապնդումների, ինչպես նաեւ ազատազրկման»*: **[13]**

9.8. Եզրաս արք. Ներսիսյանը հանդես է եկել նախընտրական բնույթի քարոզչական հայտարարություններով, որոնցում խիստ քննադատության է արժանացրել իշխանությանը եւ իր խոսքում կոչ է արել քվեարկել հանուն «Ուժեղ Հայաստանի»: **[14]** Մասնավորապես՝ նա հայտարարել է, որ ՔՊ-ին ձայն տալը հավասարազոր է մեղք գործելուն. *«Անձն, իր քվեն տալով ՔՊ-ի հակասահմանադրական կետ պարունակող հակաեկեղեցական ծրագրին, ակամա մեղք է գործում եւ իրեն դուրս դնում Առաքելական մեր սուրբ Եկեղեցուց»*: **[15]** Մայիսի 22-ի հայտարարությունում նա ընտրություններին վերագրում էր ճակատագրական նշանակություն.

> *«Հունիսի 7-ին մայր հայրենիքում տեղի են ունենալու վճռորոշ ընտրություններ, որով կանխորոշվելու է մեր հայրենիքի ու հայոց պետականության լինել-չլինելու հարցը: Ուստի, մեր սրբազան պարտքն է անվերապահորեն մասնակցել ընտրություններին, որ փրկենք մեր ինքնության հիմնասյուները, մեր հայրենիքն ու պետականությունը կործանումից: Անտարբերությամբ չմեղանչենք, որպեսզի հետագայում... 2026-ի ընտրություններին մեր իսկ անտարբերության պատճառով մեր հայրենիքում չզրկվենք հայկական անձնագրից, ինչպես արցախահայերը՝ Արցախում»*: **[16]**

Եզրաս արք. Ներսիսյանը պարբերաբար հանդես է եկել ռուսական լրատվադաշտում՝ ՀՀ ներքաղաքական գործընթացները գնահատող հայտարարություններով: **[17] [18] [19]**

9.9. ՀԱՍԵ փաստացի պետի եւ նրա եղբոր ներազդմամբ որոշ հոգեւորականներ եւս հանդես են եկել նախընտրական քարոզչությամբ: Արտաշես սարկավագ Աջապահյանը հայտարարել է, թե իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը ձայն տալով՝ հավատացյալները դուրս կմնան Հայ եկեղեցուց, կհակառակվեն Աստծուն. *«Նիկոլ Փաշինյանին ընտրելը նշանակում է դեմ դուրս գալ Աստծուն, եկեղեցուն»*: **[20]** 2026թ. մայիսի վերջին նորօծ Ռուբեն (Զարգարյան), Իսահակ (Պողոսյան) եւ Զաքարիա (Բաղումյան) եպիսկոպոսներն իրենց ձեռնադրությունից օրեր անց ընդդիմադիր մեդիահարթակով հանդես են եկել *«Գնա՛ ընտրության, հանուն Հայոց պետականության զորացման, ազգային*

եկեղեցու անսասանության...» կոչով տեսաուղերձներով՝ անուղղակի հուշելով, թե ում օգտին պետք է կատարել ընտրությունը: **[21] [22] [23]**

9.10. Նախընտրական շրջանում հոգեւորականների՝ Ռուսաստանից եւ Բելառուսից Հայաստան տեղափոխման վերաբերյալ առկա են վկայություններ եւ փաստական տվյալներ: Ըստ Հայր Աղան Երնջակյանի հաղորդման՝ նախընտրական շրջանում հոգեւորականներ Ռուսաստանից տեղափոխվել են Հայաստան՝ ընտրություններին մասնակցելու համար: **[24]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.11. ՀՀ Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածով կրոնական կազմակերպություններին արգելվում է կազմակերպել կամ իրականացնել նախընտրական քարոզչություն եւ տարածել քարոզչական նյութեր: Ընդ որում, նախընտրական քարոզչություն է համարվում նաեւ ընտրողներին որոշակի քաղաքական ուժի օգտին կամ դեմ քվեարկելուն համոզելուն ուղղված գործողությունը: **[25]** Հետեւաբար, պաշտոնական նախընտրական շրջանում թեմակալ առաջնորդների եւ այլ հոգեւորականների՝ որոշակի ուժի հասցեով հնչեցված ընտրական կոչերը կրում են արգելված նախընտրական քարոզչության հատկանիշներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

9.12. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինստիտուտները՝ թեմական կառույցները, եկեղեցական տարածքները, ծխական ցանցը, մեդիառեսուրսներն ու Կաթողիկոսի աթոռի հեղինակությունը, ՀԱՍԵ փաստացի պետի եւ նրա ընտանիքի անդամների ջանքերով փոխակերպվել են Հայաստանի Հանրապետությունում արտաքին ազդեցության ներազդման գործիքների: Եկեղեցական բարձրաստիճան մարմինների որոշումներով, եկեղեցական ենթակառուցվածքով, եկեղեցու պաշտոնական հարթակներով եւ եկեղեցու անունից իրականացված գործունեության միջոցով Հայաստան է ներմուծվում օտար ազդեցության քաղաքական բովանդակությունը՝ ուղղված ՀՀ սահմանադրական իշխանության եւ ինքնիշխանության դեմ:

9.13. 2026թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական շրջանում Եկեղեցու օղակները գործել են որպես նախընտրական ազդեցության մեխանիզմներ՝ ընդդիմադիր քաղաքական ուժի օգտին: Այս դերակատարությունն իրականացվել է ամբողջ ուղղահայացով՝ ՀԱՍԵ փաստացի պետը քարոզարշավի մեկնարկից հետո ընդդիմադիր ուժի առաջնորդին «բերել է Սուրբ Էջմիածնի օրհնությունը» եւ հանդիպումներ ունեցել երեք նախկին նախագահների հետ, նրա եղբայրն ուղիղ ընտրական կոչ է հնչեցրել քվեարկել ընդդիմադիր ուժի օգտին՝ ընտրություններին վերագրելով «պետականության լինել-չլինելու» նշանակություն, նորօծ եպիսկոպոսները տեսաուղերձներով հանդես են եկել ընդդիմադիր մեդիահարթակներով, իսկ ցածր օղակում հնչել են արդեն բացահայտ պատժամիջոցային ձեւակերպումներ՝ «Նիկոլ Փաշինյանին ընտրելը նշանակում է դեմ դուրս գալ Աստծուն, եկեղեցուն»: Ընտրողի կրոնական զգացմունքները վերածվել են ընտրական վարքագծի վրա ազդելու գործիքի:

9.14. ՀԱՍԵ փաստացի պետի եղբայրը՝ ՀԱՍԵ ամենամեծ թեմի առաջնորդը եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամը, 2002թ.-ից ինստիտուցիոնալ կերպով ընդգրկված է Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր գործող պետական մարմնի կազմում, եւ հենց այդ ծառայության համար 2025թ. պարգեւատրվել է ՌԴ պետական բարձր շքանշանով: Օտար պետության նախագահական կառույցում մշտական անդամակցությունը՝ զուգակցված այդ պետության հատուկ ծառայության հետ

խորհրդային շրջանում համագործակցելու հաստատված փաստի հետ, ՀԱՍԵ նվիրապետության բարձրագույն օղակը դարձնում է արտաքին ազդեցության ուղղակի հաղորդիչ:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Radar.am (2025-12-19). «Գարեգին Բ-ի եղբայրը հավաքագրվել ու համագործակցել է ՊԱԿ-ի հետ». https://radar.am/hy/news/social-2732226103/
2. Armenpress (2026-03-20). «ԱԱԾ տնօրենը հայտարարել է, որ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը եղել է ԽՍՀՄ ՊԱԿ գործակալ». https://armenpress.am/hy/article/1245233
3. Wikipedia, Եզրաս արք. Ներսիսյան, կենսագրություն. https://ru.wikipedia.org/wiki/Езрас_(Нерсисян)
4. Armtimes.com (2025-12-18). «Գարեգին Բ-ն կարող է տեղափոխվել ՌԴ. նրա եղբայր Եզրասը Մոսկվայում հոգեւորականների ժողով է հրավիրել». https://armtimes.com/hy/article/327914
5. Առավոտ (2025-12-09). «Իշխանությունների այս գործողությունները քայքայում են ազգային միասնությունը, թշնամանք սերմանում հայ ժողովրդի մեջ. Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ». https://www.aravot.am/2025/12/09/1527621/
6. ВЗГЛЯД (2025-11-15). «Армянские священники вышли на акцию протеста у посольства Армении в Москве». https://vz.ru/news/2025/11/15/1374011.html
7. Առավոտ (2025-11-15). «Участники акции, прошедшей у посольства Армении в Москве, потребовали освободить арестованных священнослужителей и предпринимателя Самвела Карапетяна». https://ru.aravot.am/2025/11/15/461924/
8. Газета.Ru (2026-02-05). «В Москве прошла акция в поддержку Армянской церкви и католикоса Гарегина II». https://www.gazeta.ru/amp/social/news/2026/02/05/27788119.shtml
9. Armenia Today (2026-04-01). «В Москве прошла акция против Пашиняна на фоне его визита в Россию». https://armeniatoday.am/politics-ru/1053474/
10. Коммерсантъ. «Митинг у посольства Армении в Москве в поддержку ААЦ». https://www.kommersant.ru/doc/8553092
11. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (2026-05-10). «Ամենայն հայոց կաթողիկոսի հանդիպումը Սամվել Կարապետյանի հետ». https://www.facebook.com/infoservicesofmothersee/posts/pfbid0SAwizCDdNM88ghUr1zWxmYaMJsXJRYjEyocCL2A4pcdx4XxfxsgB1PzBgdiQV9h3l
12. Գարեգին Բ (2026-06-02). Ասուլիս խմբագիրների հետ. https://www.youtube.com/watch?v=eG4PMGa3XfY
13. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (2026-05-24). «Եպիսկոպոսական ձեռնադրություն». https://www.armenianchurch.org/hy/news/episkoposakan-dzernadrutyun-24-05-2026/12203
14. Եզրաս արք. Ներսիսյան (2026-04-09). տեսաուղերձ. https://www.facebook.com/share/v/18jZuSTCrK/
15. Եզրաս արք. Ներսիսյան (2026-04-14). տեսաուղերձ. https://t.me/armchurchmoscow/9111
16. Եզրաս արք. Ներսիսյան (2026-05-22). Հայտարարություն. https://t.me/armchurchmoscow/9325
17. Sputnik Армения (2025-06-18). «Давление на Карапетяна связано с поддержкой Церкви — архиепископ Езрас Нерсисян». https://am.sputniknews.ru/20250618/davlenie-na-karapetyana-svyazano-s-podderzhkoy-tserkvi---arkhiepiskop-ezras-nersisyan-90300743.html
18. РИА Новости (2025-11-17). «Архиепископ Езрас назвал политические репрессии в Армении мстительностью». https://ria.ru/20251117/armeniya-2055554761.html
19. Երկրամաս. «Архиепископ Езрас Нерсисян: пришел час Церкви Армении возвысить голос». https://yerkramas.org/article/200016/arxiepiskop-ezras-nersisyan-prishel-chas-cerkvi-armenii-vozvysit-golos
20. Pastinfo.am (2026-06-03). «Փաշինյանին ընտրելով դեմ են դուրս գալու Աստծուն, եկեղեցուն, քանի որ նա հարձակվել է եկեղեցու վրա. Արտաշես սարկավագ Աջապահյան». https://pastinfo.am/hy/news/2026/06/03/23658999/1970411
21. AntiFake (2026-05-27). «Ռուբեն եպս. Զարգարյան. Գնա՛ ընտրության». https://youtube.com/shorts/lJTo6ZVDtZ0
22. AntiFake (2026-05-27). «Իսահակ եպս. Պողոսյան. Գնա՛ ընտրության». https://youtube.com/shorts/rxk5g0fo0RU
23. AntiFake (2026-05-27). «Զաքարիա եպս. Բաղումյան. Գնա՛ ընտրության». https://youtube.com/shorts/Nqc81eF3GPc
24. Հայր Աղան Երնջակյան (2026). Հաղորդում. https://www.facebook.com/story.php?story_fbid=26487810964224782&id=100002677162871
25. ՀՀ Ընտրական օրենսգիրք (սահմանադրական օրենք), հոդված 23՝ «Նախընտրական քարոզչության իրավունքը». կրոնական, բարեգործական եւ միջազգային կազմակերպությունների կողմից նախընտրական քարոզչության արգելքը. https://www.arlis.am/hy/acts/105967/latest

10

ՀԱՍԵ փաստացի պետն իր գահակալության 27 տարիներին, ի հակադրություն Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու կանոնադրության պահանջների՝ խափանել է Եկեղեցու գերագույն մարմնի՝ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը՝ Եկեղեցին դնելով միահեծան կառավարման հիմքի վրա:

10.1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գերագույն կանոնադիր մարմինը՝ Ազգային-Եկեղեցական ժողովը (ԱԵԺ), վերջին անգամ գումարվել է 1999թ. հոկտեմբերի 27-ին՝ 445 պատգամավորի մասնակցությամբ, եւ դրա արդյունքը եղել է ՀԱՍԵ փաստացի պետի ընտրությունը որպես կաթողիկոս: **[1]** Այդ օրվանից ի վեր՝ 27 տարի շարունակ, ՀԱՍԵ գերագույն կանոնադիր մարմինը չի գումարվել: Այսինքն՝ ԱԵԺ վերջին անգամ գործել է հենց ՀԱՍԵ փաստացի պետին ընտրելու համար եւ դրանից հետո՝ նրա ողջ գահակալության ընթացքում, բազմիցս հետաձգվել է եւ երբեք չի անցկացվել:

10.2. ԱԵԺ գումարելու անհրաժեշտության մասին պաշտոնապես արձանագրված առաջին հիշատակումն առկա է 2014թ.-ին Եկեղեցական-Ներկայացուցչական ժողովում ընդունված ԵՆԺ Կանոնադրության մեջ, որտեղ նշված է, որ տվյալ Կանոնադրությունը ենթակա է վերահաստատման Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից. *«Սույն կանոնադրությունը ենթակա է վերահաստատման առաջիկա ԱԵԺ-ի կողմից»* (Հոդված 19): **[2]**

10.3. Հաջորդ պաշտոնական հիշատակումն արվել է 2017թ.-ին, երբ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի ընթացքում քննարկվել ու ընդունվել է ԱԵԺ գումարելու նոր կանոնադրությունը եւ ամրագրվել է դրա հաստատման նպատակով Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու անհրաժեշտությունը.

> *«Ներկայացված նախագծի՝ հոդված առ հոդված երկօրյա համակողմանի քննարկումներից եւ առաջարկված լրացումներից հետո ժողովի մասնակիցները քվեարկությամբ ընդունեցին ներկայացված փաստաթուղթը, որը վերջնական հաստատում կստանա առաջիկա Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից»*: **[3]**

Քանի որ 2017թ.-ից հետո եւս ԱԵԺ չի գումարվել, այդ փաստաթուղթը, ինչպես նաեւ բազում այլ կանոնադրական փաստաթղթեր, մնացել են անվավեր: Այսպիսով, կանոնադրական բարեփոխումը դրվել է կախվածության մեջ այն ժողովից, որի գումարումը վերահսկում է ՀԱՍԵ փաստացի պետը՝ ստեղծելով փակ կանոնադրական շրջան:

10.4. 2017թ.-ի Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի արդյունքում ընդունված ԱԵԺ կանոնադրությամբ նախատեսվում է, որ Ազգային-Եկեղեցական ժողով պետք է անցկացվի առնվազն 7 տարին մեկ. *«Ազգային-Եկեղեցական Ժողովի նիստը հրավիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ առնվազն յոթ տարին մեկ անգամ»*: **[4]** Դրա ընդունումից 9 տարի անց ԱԵԺ դեռեւս չի գումարվել:

10.5. ԱԵԺ գումարելու ժամկետ եւ օրակարգ պաշտոնապես հաստատվել է 2018թ. նոյեմբերին կայացած Գերագույն հոգեւոր խորհրդի նիստի արդյունքներով: Ըստ հաղորդագրության՝ ԳՀԽ նիստում որոշվել է ԱԵԺ գումարել հաջորդ՝ 2019թ.-ի ընթացքում.

> *«Քննարկումների արդյունքում որոշվեց առաջիկա տարի գումարել Ազգային-Եկեղեցական ժողով «Հայոց Եկեղեցին 21-րդ դարում. ներկա եւ ապագա» խորագրով: Քննության առնվեցին ժողովի օրակարգում ընդգրկվելիք հարցերը»*: **[5]**

10.6. Վերոնշյալ որոշումից չորս ամիս անց՝ 2019թ. մարտին, ՀԱՍԵ փաստացի պետի նախագահությամբ անցկացված Գերագույն հոգեւոր խորհրդի նիստի ընթացքում որոշում է կայացվել հետաձգել ժողովի հրավիրումը՝ ԱԵԺ-ն տեղափոխելով 2020թ.-ի նոյեմբեր: Հետաձգման հիմքում նշվել է երկու պատճառ. *«Նկատի ունենալով Ազգային-Եկեղեցական ժողովի նախապատրաստական աշխատանքների ծավալը եւ ժամանակատարությունը, ինչպես նաեւ Մայր Տաճարի վերանորոգման ընթացքը»*: **[6]**

10.7. 2020թ.-ի նոյեմբերին նախատեսված ԱԵԺ-ն եւս չի գումարվել: Մայր Աթոռն ԱԵԺ գումարումը հերթական անգամ հետաձգելն այս անգամ պատճառաբանել է համավարակով եւ

պատերազմով. *«Ցավոք, այն հետաձգվեց համավարակի եւ արցախյան պատերազմի պատճառներով: Հուսով ենք, որ առաջիկային Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի կունենա ԱԵԺ»*: **[7]** 2020թ.-ից մինչեւ սույն զեկույցի կազմման օրը, ԱԵԺ գումարելու որեւէ նոր ամսաթիվ չի հայտարարվել:

10.8. Հայոց Եկեղեցու պատմության մեջ Ազգային-Եկեղեցական ժողովները գումարվել են ոչ միայն կաթողիկոսի մահվան եւ նոր կաթողիկոս ընտրելու հանգամանքով պայմանավորված, այլ գումարվել է նաեւ Ազգային-Եկեղեցական, կանոնական, հաշվետվությունների ներկայացման եւ այլ հարցերի քննարկման ու որոշումների կայացման շուրջ: Նմանատիպ Ազգային-Եկեղեցական ժողով հրավիրվել է Վազգեն Ա Վեհափառի կողմից 1962թ-ի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 5-ը՝ 141 պատգամավորի մասնակցությամբ, որոնցից 46-ը հոգեւորական, 95-ն աշխարհական: **[8]**

Սույն ժողովի օրակարգը եղել է հետեւյալը.

- Կաթողիկոսի յոթամյա գործունեության զեկույցը,
- Մայր Աթոռի տնտեսական հաշվետվությունը,
- Հայ Եկեղեցու Կանոնագրքի մշակման հարց,
- Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության,
- Ընտրություն Գերագույն Հոգեւոր խորհրդի եւ Վերստուգիչ հանձնաժողովի,
- Ս. Էջմիածնի առաջիկա շինարարության ծրագիր: **[9]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.9. Ազգային-Եկեղեցական ժողովը (ԱԵԺ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գերագույն կանոնադիր մարմինն է: Այս կարգավիճակն ամրագրված է 1945թ-ի Ազգային-Եկեղեցական ժողովի ընդունած եւ վավերացրած «Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության» առաջին իսկ դրույթով. *«Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Գերագույն կանոնադիր մարմինը Ազգային-Եկեղեցական ժողովն է»*: **[10]** Ըստ նույն կանոնադրության՝ ԱԵԺ-ի բացառիկ իրավասությանն են ենթակա Եկեղեցու կյանքի կազմակերպման բոլոր հիմնարար հարցերը՝

> *«Ա) Ընտրություն Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք–Կաթողիկոսի. Բ) Ընտրություն Ս. Էջմիածնի Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամների. Գ) Հաստատություն Ազգային-Եկեղեցական Սահմանադրության: Դ) Քննություն եւ վճռահատություն եկեղեցական եւ այլ կանոնական եւ ընդհանուր հարցերի. Ե) Կարգավորում եկեղեցական տնտեսական վիճակի»*: **[10]**

Այսինքն՝ Կաթողիկոսի ընտրությունը, Գերագույն հոգեւոր խորհրդի ձեւավորումը, Սահմանադրության (Կանոնադրության) ընդունումը, կանոնական վեճերի լուծումը եւ Եկեղեցու տնտեսական վիճակի կարգավորումը՝ բոլորը պատկանում են այս բարձրագույն մարմնի իրավասությանը:

10.10. ԱԵԺ-ն ներկայացուցչական մարմին է, որտեղ եկեղեցական նվիրապետությանը զուգահեռ ներկայացված է նաեւ հավատավոր ժողովուրդը: Կանոնադրության համաձայն՝ ժողովի անդամ են Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի եւ Կ. Պոլսո պատրիարքները, Հայոց եկեղեցու բոլոր առաջնորդներն ու եպիսկոպոսները, չորս նվիրապետական Աթոռների միաբանությունների չորսական ներկայացուցիչները, ինչպես նաեւ՝ *«ժողովրդից ընտրված երեսուն տարին լրացած իրավասու ծխականները»*՝ յուրաքանչյուր թեմից՝ մինչեւ 25,000 հավատացյալի հաշվով մեկ պատգամավոր: **[10]** Հետեւաբար, ԱԵԺ-ի չգումարումը զրկում է ոչ միայն

եպիսկոպոսությանը, այլեւ Եկեղեցու հոտին՝ Եկեղեցու կառավարմանը մասնակցելու կանոնական հնարավորությունից:

10.11. Գործող Կանոնադրությունն ԱԵԺ գումարելու պարտավորությունը սահմանում է բացառապես մեկ անձի համար. *«Ազգային-Եկեղեցական ժողովը հրավիրում է Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք Կաթողիկոսը»*: Բացառություն է Կաթողիկոսի մահը: Այսինքն՝ Կաթողիկոսի կենդանության օրոք ԱԵԺ գումարելու այլ մեխանիզմ գոյություն չունի, եւ Եկեղեցու գերագույն մարմնի գումարում հրավիրել-չհրավիրելը բացառապես Կաթողիկոսի իրավասության եւ պարտավորության խնդիր է:

ԱՄՓՈՓՈՒՄ

10.12. ՀԱՍԵ փաստացի պետն իր գահակալության 27 տարիներին, ի հակադրություն Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու կանոնադրության պահանջների եւ տարբեր ժողովներում ու փաստաթղթերում ամրագրված պարտավորությունների, չի հրավիրել եւ բազմիցս հետաձգել կամ խափանել է Եկեղեցու գերագույն մարմնի՝ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը՝ Եկեղեցին դնելով միահեծան կառավարման հիմքի վրա:

10.13. Ազգային-Եկեղեցական ժողով չհրավիրելու եւ պարբերաբար խափանելու արդյունքում ՀԱՍԵ փաստացի պետը Եկեղեցու կառավարմանը մասնակցելու կանոնական հնարավորությունից զրկել է ոչ միայն Եկեղեցու նվիրապետությանը, այլ նաեւ հավատավոր ժողովրդին: 1999թ.-ից ի վեր ՀԱՍԵ փաստացի պետի միանձնյա որոշումներով ընդունված բոլոր կանոնադրական փաստաթղթերը չեն ստացել Եկեղեցու գերագույն կանոնադիր մարմնի վավերացումը:

10.14. ԱԵԺ չհրավիրելու եւ պարբերաբար հետաձգելու պաշտոնական պատրվակներից եւ ոչ մեկը տարիներ ի վեր այլեւս գործող չէ. պատերազմն ավարտվել է 2020թ.-ին, համավարակի ալիքն ավարտվել է 2021թ.-ին, Մայր Տաճարի վերանորոգումն ավարտվել է 2024թ.-ին: [11] Չնայած տարբեր ժամանակներում որպես պատճառաբանություն բերված խոչընդոտների վերացմանը, ԱԵԺ գումարում այդպես էլ չի հրավիրվել:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մայր Աթոռ. «Ամենայն Հայոց Կաթողիկոս. Կենսագրություն» - https://www.armenianchurch.org/hy/Կենսագրություն
2. «Կանոնադրություն Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի», 2014թ.
3. Մայր Աթոռ (2017-06-08). «Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովն ավարտեց իր աշխատանքը». https://www.armenianchurch.org/hy/news/3494
4. «Ազգային-Եկեղեցական ժողովի կանոնադրություն»/Նախագիծ. 2017թ.
5. Մայր Աթոռ (2018-11-02). «Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ավարտվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը». https://www.armenianchurch.org/hy/news/10756
6. Մայր Աթոռ (2019-03-15). «Գերագույն հոգեւոր խորհուրդն ավարտեց իր աշխատանքները». https://www.armenianchurch.org/hy/news/4030
7. Մայր Աթոռ (2025-12-11). «Հայտարարություն. Ի պատասխան լրատվամիջոցների հարցումների». https://www.armenianchurch.org/hy/news/haytararutyun-11-12-2025/12096
8. «Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը եւ նրա պատմական նշանակությունը» (1962-11-11), հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 1962թ. - https://arar.sci.am/dlibra/publication/264017/edition/241808/content
9. «Արձանագրություն Ազգային-Եկեղեցական ժողովի» (1962-11-11), հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 1962թ. - https://arar.sci.am/dlibra/publication/264018/edition/241809/content
10. «Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն», 1945թ. հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 1945, էջ 18 - https://arar.sci.am/publication/260884
11. Արմենպրես (2024-09-29). «Էջմիածնի Մայր տաճարը շուրջ 12 տարվա հիմնանորոգումից հետո վերաօծվեց եւ դռները բացեց հանրության առջեւ». https://armenpress.am/hy/article/1200999

11 **Սահմանված պարբերականությամբ չեն գումարվել Եպիսկոպոսաց, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովները, ինչի հետեւանքով Գերագույն հոգեւոր խորհուրդը գործել է ոչ օրինական կազմով, կարեւոր կանոնադրական փաստաթղթերը մեծ մասամբ մնացել են անվավեր:**

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1. ՀՀ անկախության տարիներին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողով գումարվել է երկու անգամ՝ 2013 եւ 2014 թվականներին՝ հիմնականում Ցեղասպանության 100-ամյա տարելիցի եւ 1,5 միլիոն նահատակների սրբադասման հարցերով: **[1]** Դրանց մասնակցել է համապատասխանաբար 62 եւ 58 եպիսկոպոս: **[2]** **[3]** Եպիսկոպոսների մասնակցությամբ տարբեր տարիներին կազմակերպվել են այլ հավաքներ, եպիսկոպոսների անունից կամ նրանց ստորագրությամբ տարածվել են հայտարարություններ, սակայն դրանք եղել են հիմնականում հայաստանյան եպիսկոպոսաց հավաքներ եւ կանոնական իմաստով չեն եղել Եպիսկոպոսաց ժողովներ, այսինքն՝ չեն համապատասխանել բոլոր ավանդական եկեղեցիներում առկա եպիսկոպոսաց դասի սինոդալականության սկզբունքին: **[4]** **[5]** **[6]** **[7]** **[8]**

11.2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Եկեղեցական-ներկայացուցչական ժողով գումարվել է 6 անգամ՝ 1997, 2003, 2009, 2012, 2014 եւ 2017 թվականներին: **[9]** Չնայած երկու տարին մեկ ժողով գումարելու կանոնադրական պահանջին՝ 2017թ-ից ի վեր ԵՆԺ չի գումարվել:

11.3. Վերջին անգամ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների ընտրություն չորս տարի ժամկետով կատարվել է 2017թ-ի հունիսի 6-8-ը Մայր Աթոռում հրավիրված Եկեղեցական-ներկայացուցչական Ժողովի կողմից: **[10]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.4. Եպիսկոպոսաց ժողովը (ԵԺ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետական աթոռների եպիսկոպոսաց դասի համախմբումն է: Այն Կաթողիկոսին առընթեր վարչական-կանոնական մարմին է, որը քննարկում է թեմերից ներկայացված կրոնական, կարգապահական, վարչական եւ այլ հարցեր: Վերջին երկու ԵԺ-ին՝ 2013 եւ 2014թթ., այն բաղկացած էր Հայ Եկեղեցու բոլոր եպիսկոպոսներից եւ ավանդության համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսը դրա նախագահն էր, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը՝ փոխնախագահը, իսկ Երուսաղեմի եւ Կ.Պոլսի Հայոց պատրիարքները՝ ատենապետները: Որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ եւ ներկայացվում Կաթողիկոսին՝ ի հաստատում ու ի գործադրություն: ՀԱՍԵ փաստացի պետի կողմից 2000թ-ին հաստատված (սակայն ԱԵԺ կողմից չվավերացված) «Նախաշավիղ» Կանոնադրությամբ՝ Եպիսկոպոսաց ժողովը նիստի է հրավիրվում նվազագույնը երեք ամիսը մեկ (Հոդված 25): **[11]**

11.5. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Եկեղեցական-ներկայացուցչական ժողովը (ԵՆԺ) Ազգային-Եկեղեցական ժողովի (ԱԵԺ) կողմից հաստատված մարմին է, որ գումարվում է ԱԵԺ-ների միջեւ ընկած ժամանակահատվածում: ԵՆԺ-ը լիազորված է ԱԵԺ-ի կողմից, Եկեղեցու առաքելության շարունակությունն ապահովող եւ գործունեությանն առնչվող կարեւոր հարցեր քննարկելու ու դրանց վերաբերյալ որոշումներ ընդունելու համար:

ՀԱՍԵ փաստացի պետի կողմից վավերացված, սակայն ԱԵԺ կողմից չվավերացված Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի 2014թ-ի կանոնադրության համաձայն՝ ԵՆԺ-ն գումարվում է երկու տարին մեկ անգամ (Հոդված 8): [12] Միեւնույն կանոնադրության համաձայն՝ ԵՆԺ իրավասության ներքո են՝ ՀԱՍԵ Կանոնադրության գլուխների հաստատումը, ԱԵԺ-ի կողմից վերապահված վարչական-կառուցվածքային, ֆինանսական եւ տնտեսական բոլոր հարցերի քննարկումը եւ լուծումը, Եկեղեցու կյանքի արդյունավետ կազմակերպմանն առնչվող հարցերի քննարկումը եւ ըստ անհրաժեշտության դրանց կանոնադրական լուծում տալը եւ այլն:

11.6. 1945թ-ի Ազգային-Եկեղեցական ժողովի ընդունած եւ վավերացրած «Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության» Հոդված 7-ի Բ ենթակետով սահմանված է, որ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների ընտրությունն ԱԵԺ իրավասության ենթակա խնդիր է: [13]

ՀԱՍԵ փաստացի պետի կողմից վավերացված, սակայն ԱԵԺ կողմից չվավերացված Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի 2014թ-ի կանոնադրության համաձայն՝ ԵՆԺ-ն ընտրում է Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների 2/3-ին (Հոդված 3), մինչդեռ 2017թ-ից հետո ԵՆԺ չի հրավիրվել: [12]

ՀԱՍԵ փաստացի պետի կողմից 2000թ-ին հաստատված (սակայն ԱԵԺ կողմից չվավերացված) «Նախաշավիղ» Կանոնադրությամբ՝ ԳՀԽ անդամների մի մասն ընտրվում է Եպիսկոպոսաց ժողովի կողմից, մյուս մասը նշանակվում է Կաթողիկոսի կողմից (Հոդված 31), մինչդեռ մինչեւ 2013թ-ը Եպիսկոպոսաց ժողով չի հրավիրվել: [11]

11.7. ԱԵԺ կողմից չվավերացված Գերագույն հոգեւոր խորհրդի կանոնադրության համաձայն խորհրդի անդամներն ընտրվում են 4 տարի ժամկետով (Հոդված 3): [14]

ԱՄՓՈՓՈՒՄ

11.8. ՀԱՍԵ փաստացի պետի կողմից դրսեւորված անձակենտրոն եւ միահեծան կառավարմամբ պայմանավորված սահմանված կանոնական պարբերականությամբ չեն գումարվել Եպիսկոպոսաց, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովները, ինչի հետեւանքով Գերագույն հոգեւոր խորհուրդը գործել է կարգազանց կազմով, կարեւոր կանոնադրական փաստաթղթերը մնացել են անվավեր, Եկեղեցին գործել է կանոնական քաոսի պայմաններում:

11.9. Գերագույն հոգեւոր խորհուրդը ՀԱՍԵ փաստացի պետի գահակալության գրեթե ողջ շրջանում գործել է կարգազանց կազմով, եւ դրա անդամների փոփոխություններն արվել են միանձնյա որոշումներով: ՀԱՍԵ փաստացի պետն ի սկզբանե խախտել է գործող ԱԵԺ 1945թ-ի Կանոնադրության դրույթը՝ կապված ԳՀԽ անդամների ընտրության հետ եւ ԱԵԺ-ն անդամներ չի ընտրել, որովհետեւ այն չի գումարվել 1999թ-ից ի վեր: Այնուհետեւ ՀԱՍԵ փաստացի պետը խախտել է իր իսկ կողմից հաստատված «Նախաշավիղ» Կանոնադրությամբ սահմանված ԳՀԽ անդամների ընտրության դրույթը, քանի որ մինչեւ 2013թ. Եպիսկոպոսաց ժողով չի գումարել եւ ԳՀԽ անդամներ չեն ընտրվել: Այնուհետեւ ՀԱՍԵ փաստացի պետը խախտել է նաեւ ԵՆԺ Կանոնադրությունը եւ 2017թ.-ից հետո չի հրավիրել ժողով, եւ ԳՀԽ անդամներ չեն ընտրվել օրինավոր ճանապարհով, այլ նշանակվել են միմիայն փաստացի կաթողիկոսի հայեցողությամբ: Սա նշանակում է, որ ներկայիս գործող ԳՀԽ կազմը եւս ապօրինի է:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մայր Աթոռ. «Եպիսկոպոսաց ժողով». https://www.armenianchurch.org/hy/Եպիսկոպոսաց ժողով
2. Մայր Աթոռ (2013-09-24). «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքը սկսեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը». https://www.armenianchurch.org/hy/news/2460
3. Մայր Աթոռ (2014-11-11). «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սկսվեց Հայ Առաքելական Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը». https://www.armenianchurch.org/hy/news/2742
4. Մայր Աթոռ (2018-06-08). «Եպիսկոպոսաց ժողովը հանդես եկավ հայտարարությամբ». https://www.armenianchurch.org/hy/news/10667
5. Մայր Աթոռ (2021-10-30). «Հայաստանյան եպիսկոպոսաց եւ թեմական առաջնորդների ժողովը հանդես եկավ հայտարարությամբ». https://www.armenianchurch.org/hy/news/10073
6. Մայր Աթոռ (2023-10-04). «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսաց հավաք». https://www.armenianchurch.org/hy/news/10935
7. Մայր Աթոռ (2025-11-26). «Հայաստանյան եպիսկոպոսաց եւ թեմական առաջնորդների ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում». https://www.armenianchurch.org/hy/news/haytararutyun26-11-2025/12080
8. Մայր Աթոռ (2026-02-20). «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ամենայն Հայոց Կաթողիկոսության Եպիսկոպոսաց հավաքը հանդես եկավ հայտարարությամբ». https://www.armenianchurch.org/hy/news/haytararutyun-19-02-2026/12141
9. Մայր Աթոռ. «Եկեղեցական-ներկայացուցչական ժողով». https://www.armenianchurch.org/hy/Ներկայացուցչական
10. Մայր Աթոռ (2017-06-08). «Եկեղեցական-ներկայացուցչական 6-րդ ժողովն ավարտեց իր աշխատանքը». https://www.armenianchurch.org/hy/news/3494
11. «Կանոնադրություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նախաշավիղ», 2000թ.
12. «Կանոնադրություն Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի», 2014թ.
13. «Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն», 1945թ. հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 1945, էջ 18 — https://arar.sci.am/publication/260884
14. «Գերագույն հոգեւոր խորհրդի կանոնադրություն», 2017թ.

12 **Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը պարբերաբար խափանել է ՀԱՍԵ միասնական Սահմանադրության ընդունումը, ինչի հետեւանքով Եկեղեցին գործել է անձիշխանության պայմաններում՝ առանց իրավազոր կանոնական հիմքերի:**

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12.1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միասնական Սահմանադրության (Կանոնադրության) ընդունման պահանջն ամրագրված է ՀԱՍԵ մի շարք կանոնական փաստաթղթերում՝ որպես առաջնային եւ կարեւոր հիմնախնդիր, մինչդեռ տարբեր պատճառաբանությունների ներկայացմամբ մինչ այժմ ամբողջական Սահմանադրության ընդունումը չի իրականացվել:

12.2. ՀԱՍԵ Սահմանադրության կազմման աշխատանքները մեկնարկել են նախորդ դարի կեսերից եւ հիմնական մշակումներն իրականացվել են Վազգեն Ա կաթողիկոսի եւ Գարեգին Ա կաթողիկոսի գահակալության տարիներին: Վազգեն Ա-ի կողմից ՀԱՍԵ նոր Սահմանադրություն կազմելու առթիվ հղած հայրապետական կոնդակում ասված է.

> *«...շուրջ 20 տարիների ընթացքում յանձնաժողովներ կազմեցինք ծանօթ եւ ձեռնհաս բարձրաստիճան հոգեւորականներից, որոնք կազմեցին եկեղեցական սահմանադրութեան նախագծեր իրարից ոչ շատ տարբերուող, խարսխուած մեր Եկեղեցւոյ կանոնաց եւ աւանդութեանց հիմքերի վրայ, ժողովական եւ ժողովրդավարական սկզբունքների ոգով, որոնք բնորոշ են Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատմականօրէն նուիրագործուած կարգ ու կանոնի եւ հայ հաւատացեալ ժողովրդի հոգեբանութեանը»*: **[1]**

1999թ. փետրվարին Գարեգին Ա Կաթողիկոսի հանձնարարությամբ Կանոնադրական հանձնաժողովը ներկայացնում է «Հայոց Եկեղեցու Սահմանադրություն» նախագծի

տարբերակը, որը նախատեսվում էր վերջնականապես հաստատել Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից: [2]

12.3. 1999թ. հոկտեմբերի 27-28-ին գումարված Ազգային-Եկեղեցական ժողովի օրակարգում բացի նոր կաթողիկոսի ընտրությունից, քննարկվել է եւս մեկ հարց՝ ՀԱՍԵ Սահմանադրության ընդունումը, որի շուրջ կայացվել է որոշում եւ հանձնառություն է սահմանվել նորընտիր կաթողիկոսի համար: Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպման եւ Եկեղեցու Սահմանադրության մշակման հանձնախմբի ատենապետ Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը ժողովի ընթացքում առաջարկում է,

> *«որ նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2000թ. հունիս ամսվա մեջ Ներկայացուցչական ժողով հրավիրի՝ բոլոր եպիսկոպոսների եւ թեմական խորհուրդներից մեկական ներկայացուցչի մասնակցությամբ, եւ լիազորի ներկայացուցչական ժողովին, որ այն Նորին Սրբության նախագահությամբ հանգամանորեն նկատի առնի Եպիսկոպոսաց ժողովից բերված հարցերը եւ ներկայացված կանոնադրության* (Սահմանադրության - խմբ.) *վերջին նախագիծը, եւ այն վավերացնելուց հետո ուղարկի բոլոր թեմերին առ ի գործադրություն»*: [3]

Վաչե Սրբազանի վերոնշյալ առաջարկն ԱԵԺ քվեարկությամբ հաստատվում է եւ որոշվում է նորընտիր կաթողիկոսի նախագահությամբ՝ ոչ ուշ քան 2000թ-ի հոկտեմբերը գումարել Եպիսկոպոսաց եւ թեմական խորհուրդներից լիազորված պատվիրակների համատեղ ժողով՝ քննության առնելու Հայ Եկեղեցու Սահմանադրության նախագիծը: [4] Թեեւ այս ժողովի գումարումն ԱԵԺ կողմից ՀԱՍԵ փաստացի պետին հանձնարարված էր կատարել 2000թ-ին, բայց այն գումարվեց միայն 2003թ-ին, որի օրակարգում, սակայն, Սահմանադրության նախագծի քննարկումը տեղ չգտավ: [5] [6]

12.4. 2000-ականներից սկսած ՀԱՍԵ փաստացի պետը սկսել է տարանջատել միասնական Սահմանադրության մշակման եւ վավերացման գործընթացը եւ Սահմանադրության տարբեր գլուխները տարբեր ժամանակահատվածներում ներդրել է Եկեղեցում գործածման՝ առանց Ազգային-Եկեղեցական ժողովի վավերացման: 2009 եւ 2014թթ-ին Մայր Աթոռում գումարված Եկեղեցական-ներկայացուցչական ժողովների ընթացքում հաստատվել են Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի, Գերագույն հոգեւոր խորհրդի առանձին կանոնադրությունները, որոնք ՀԱՍԵ փաստացի պետի որոշմամբ եւ առանց ԱԵԺ վավերացման դրվել են գործարկման մեջ:

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.5. ՀԱՍԵ ամբողջական Սահմանադրության ընդունման հանձնառությունն ամրագրված է 1999թ-ի Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից՝ ԵՆԺ հրավիրելու եւ Սահմանադրության՝ այդ պահին եղած վերջին նախագիծը վավերացնելուց հետո բոլոր թեմերին առ ի գործադրություն ուղարկելու ձեւով (տե՛ս 12.3.):

12.6. ՀԱՍԵ ամբողջական Սահմանադրության ընդունման հանձնառությունն ամրագրված է նաեւ ՀԱՍԵ փաստացի պետի կողմից 2000թ-ին հաստատված (սակայն ԱԵԺ կողմից չվավերացված) «Նախաշավիղ» Կանոնադրությամբ.

> *«Մոտ ապագային կազմվելու է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կանոնադրությունը (Սահմանադրություն), որը հանդիսանալու է հիմնական օրենքը նրա նվիրապետական ամբողջական կառույցի: Դրանից հետո սույն կանոնադրությունը ընդգրկվելու է հիմնական օրենքի մեջ որպես նրա բաղկացուցիչ մաս»*: [7]

ԱՄՓՈՓՈՒՄ

12.7. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետը չի հրավիրել ՀԱՍԵ Գերագույն մարմնի՝ ԱԵԺ-ի հանձնարարած ժողովը, շերտավորել եւ մասնատել է միասնական Սահմանադրության (Կանոնադրության) նախագիծը, տարիների ընթացքում թերի վավերացման է ենթարկել Սահմանադրության առանձին գլուխները, ինչի հետեւանքով Եկեղեցին գործել է կանոնադրական բացի, նորմատիվ-կանոնական ակտերի ֆրագմենտացիայի պայմաններում:

12.8. ՀԱՍԵ փաստացի պետը պարբերաբար խափանել է Եկեղեցու ամբողջական Սահմանադրության (Կանոնադրության) ընդունումը, ինչի հետեւանքով Եկեղեցին գործել է անձիշխանության պայմաններում՝ առանց իրավազոր կանոնական լիարժեք հիմքերի:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. «Հայրապետական կոնդակ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նոր սահմանադրություն կազմելու առիթով», Ս. Էջմիածին, 1994, ապրիլ 22, հմր. 2037
2. Hratch Tchilingirian, Armenian International Magazine, 1999 հուլիս, «The End of a Journey: Catholicos Karekin I», https://oxbridgepartners.com/hratch/index.php/publications/articles/85-the-end-of-a-journey-catholicos-karekin-i
3. Տ. Պարթեւ աբդ. Բարսեղյան. «Ի. դարի Ազգային-Եկեղեցական ժողովները եւ Հայ Եկեղեցու Սահմանադրության մշակման գործընթացը», 2014թ. - https://arar.sci.am/Content/254736/file_0.pdf
4. «Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը» 1999թ., հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, https://arar.sci.am/dlibra/publication/271990/edition/249287/content
5. «Թեմական-ներկայացուցչական խորհրդակցական հավաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում» 2003թ., հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, https://arar.sci.am/dlibra/publication/273535/edition/250781/content
6. «Եպիսկոպոսաց հավաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում» 2003թ., հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, https://arar.sci.am/dlibra/publication/273534/edition/250780/content
7. «Կանոնադրություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նախաշավիղ», 2000թ.

13 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փաստացի պետի կողմից իրականացված կանոնադրական ճնշումները, կամայական նշանակումները, գույքային միջամտությունները պառակտումներ են առաջացրել Սփյուռքի թեմերում եւ օտարել են թեմերի հավատավոր ժողովրդին Մայր Եկեղեցուց:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13.1. ՀԱՍԵ փաստացի պետի կողմից սփյուռքի թեմերի նկատմամբ վարած կադրային քաղաքականությունն ու վարչարարությունը, գույքային սեփականության նկատմամբ իրականացված միջամտությունները տասնամյակներ շարունակ եղել են հակասությունների եւ դժգոհությունների առարկա: Սփյուռքի թեմերի եւ Մայր Աթոռի միջեւ ծագած եւ խորացած խզումներն ունեն կրկնվող, օրինաչափ բնույթ եւ երբեմն հանգեցրել են նաեւ ընդունող պետությունների օրենսդրության հետ կոնֆլիկտների:

13.2. 2019թ. սեպտեմբերին Բի-Բի-Սի-ի ռուսական ծառայությունը հրապարակեց հետաքննություն, որում ներկայացվում է ՀԱՍԵ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի եւ տեղական հայ համայնքների միջեւ ձեւավորված հակամարտությունների շարքը ՌԴ բազմաթիվ քաղաքներում: Ըստ հրապարակման՝ դրվագները կրկնում են նույն սցենարը. տեղական համայնքն իր միջոցներով կառուցում է եկեղեցի, ապա ՀԱՍԵ փաստացի պետի

եղբոր կողմից ղեկավարվող թեմից ստանում է պահանջ՝ եկեղեցու եւ հարակից տարածքի սեփականության իրավունքը վերաձեւակերպել թեմի անվամբ, ընդունել ուղարկված ծխական կանոնադրությունը եւ թեմի ֆոնդին փոխանցել որոշակի գումար՝ մի քանի միլիոն ռուբլու նվիրատվության տեսքով: [1]

13.3. Իժեւսկում ամբողջությամբ հայկական համայնքի միջոցներով 2009-2012թ.-ին կառուցվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ինչից հետո համայնքը դիմել է Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ, ՀԱՍԵ փաստացի պետի եղբայր Եզրաս արք. Ներսիսյանին՝ եկեղեցին օծելու խնդրանքով: Թեմի առաջնորդը նորակառույց եկեղեցին օծելու դիմաց պահանջել է եկեղեցին եւ դրա շրջակա տարածքներն ամբողջությամբ փոխանցել թեմի սեփականությանը եւ ընդունել թեմական կանոնադրություն: Այս պայմանները համայնքն ապահովում է, սակայն եկեղեցին շարունակում է մնալ չօծված: Թեմի առաջնորդն առաջ է քաշում նոր պահանջներ՝ Մոսկվայից ուղարկված հոգեւորականին վճարել աշխատավարձ (ծիսական ծառայությունների դիմաց ստացված եկամտից զատ), ինչպես նաեւ պահանջում է 20 հազար դոլար կամ 1,2 մլն ռուբլի կաշառք եկեղեցին օծելու համար: [1] [2] Այս պահանջների բերումով կառուցվելուց հետո շուրջ 12 տարի Իժեւսկի եկեղեցին շարունակել է չօծված եւ չգործող մնալ, իսկ համայնքի ներկայացուցիչները ստիպված են եղել իրենց ծիսական արարողությունները կատարել Մոսկվայում կամ Ռուս ուղղափառ եկեղեցու սպասավորների միջոցով: Եկեղեցին օծվել եւ բացվել է միայն 2024թ.-ին՝ համայնքի երկարատեւ ջանքերի արդյունքում: [3]

13.4. Իժեւսկում նկարագրված սցենարի նմանությամբ ըստ Բի-Բի-Սի-ի ռուսական ծառայության հրապարակման՝ նույնաբովանդակ դեպքեր են գրանցվել նաեւ Նովոկուզնեցկում, Նովոսիբիրսկում, Կիրովի, Կեմերովոյի, Սվերդլովսկի մարզերում, Ալթայի Հանրապետությունում, ինչպես նաեւ ավելի վաղ՝ Ռիգայի ծխում: [1] Միեւնույն խնդրի մասին ՈԴ հայկական 12 համայնքների ներկայացուցիչները բարձրաձայնել են նաեւ 2019թ-ի ամռանը՝ ՀՀ վարչապետի սփյուռքի հարցերով գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի՝ Մոսկվա կատարած այցի ժամանակ: [4]

13.5. Նովոսիբիրսկում ծխական խորհուրդը ցրվել է թեմի որոշմամբ, եւ այդ որոշումը դատարանում վիճարկելու փորձն ավարտվել է հայցի մերժմամբ՝ դատարանը թեմական իշխանության գործողությունները ճանաչել է օրինական: Կիրովի մարզում, ըստ եկեղեցու շինարարության հիմնական հովանավորի, ծխական խորհուրդը միեւնույն ճանապարհով կորցրել է վերահսկողությունն իր իսկ միջոցներով կառուցված եկեղեցու նկատմամբ: [1]

13.6. Միմյանցից անկախ՝ Ալթայի Հանրապետությունում եւ Կեմերովոյի մարզում հայկական համայնքները խաչքարերի օծման համար ստիպված են եղել դիմել Ռուս ուղղափառ եկեղեցու հոգեւորականներին: Ըստ համայնքային կազմակերպությունների ղեկավարների՝ նման քայլի դիմել են այն բանից հետո, երբ ՀԱՍԵ-ն խաչքարի օծումը պայմանավորել է հողատարածքի՝ թեմին փոխանցելով: Ռուս ուղղափառ եկեղեցու հոգեւորականների կողմից են օծվել նաեւ Թաթարստանում եւ Վոլոգդայի մարզում տեղադրված խաչքարերը: [1]

13.7. Մոսկվայի հայկական թանգարանը, ըստ վկայությունների, փակվել է Եզրաս արք. Ներսիսյանի ներազդմամբ: Մոսկվայի հայկական տաճարային համալիրի կառուցման բարերարներից Ռուբեն Գրիգորյանը 2015թ.-ին տաճարային համալիրի տարածքում հովանավորել եւ ստեղծել է «Մոսկվայի հայկական թանգարան եւ ազգերի մշակույթ» ինտերակտիվ թանգարանը: Բացումից կարճ ժամանակ անց Եզրաս արք. Ներսիսյանը որոշել է ստեղծել սեփական թանգարան եւ բարերարին ու նրա թանգարանին զրկել է տարածքից: Ըստ Գրիգորյանի՝ Եզրաս արքեպիսկոպոսը թանգարանի մուտքին տեղակայել է իր պահակախումբը եւ փակել այն՝ առանց որեւէ պատճառաբանության: Ըստ Գրիգորյանի՝ հակամարտության հիմքում ընկած է եկեղեցական ողջ գույքի փաստաթղթային

կենտրոնացումը մեկ անձի ձեռքում. *«Ամեն ինչին այսօր տիրում եւ տնօրինում է կաթողիկոսը»*, ինչի հետեւանքով, նրա գնահատմամբ, հայկական սփյուռքը զրկվել է իր հավաքական տարածքից: Համայնքի հետ խզման հետեւանքների մասին վկայել է նաեւ Ռուսաստանի հայերի միության համահիմնադիր Դավիթ Տոնոյանը, ըստ որի՝ *«Ռուսաստանի մայրաքաղաքի հայ երիտասարդության շրջանում ՀԱՍԵ նվիրապետների նկատմամբ վերաբերմունքը բացարձակապես բացասական է»*, իսկ հոգեւորականությունը *«որեւէ շփում չունի հայ երիտասարդության հետ»*: **[1] [5] [6]**

13.8. 2026թ. ՀԱՍԵ Բուլղարիայի թեմի թեմական խորհրդի նախագահ Անդրանիկ Շաքարյանը բաց նամակով դիմել է ՀՀ վարչապետին՝ ներկայացնելով Մայր Աթոռի հետ ավելի քան տասնհինգ տարվա հակամարտության մանրամասները: **[7]** Ըստ նամակի՝ 2013–2014թթ. թեմին փորձել են պարտադրել Էջմիածնում մշակված կանոնադրություն, պատվիրակների ընտրությունները կրկնվել են մինչեւ ցանկալի արդյունքի ստացումը, ժողովի մանրամասն արձանագրությունը բացակայել է, իսկ այդ հանգամանքների քննության փոխարեն պատասխանատու առաջնորդական փոխանորդը ձեռնադրվել է եպիսկոպոս եւ նշանակվել այլ թեմում: 2018–2019թթ. թեմի ընդունած եւ Բուլղարիայի իրավասու դատարանում գրանցված նոր կանոնադրությունը Մայր Աթոռը չի ընդունել: Հեղինակները պնդում են, որ դրանից հետո թեմը ենթարկվել է վարչական պատժամիջոցների՝ մի շարք համայնքներ մնացել են առանց հոգեւորականի, իսկ Սոֆիայի նորակառույց մայր տաճարը երկար ժամանակ չի օծվել: Էջմիածնում մշակված կանոնադրությունը, ըստ նամակի, հակասել է ընդունող պետության օրենսդրությանը եւ չի կարողացել գրանցում ստանալ: Այսինքն՝ ներեկեղեցական ակտի պարտադրումը բախվել է ոչ միայն թեմի դիրքորոշմանը, այլեւ այն երկրի իրավական համակարգին, որի իրավասության ներքո գործում է թեմը: **[8] [9]**

13.9. Ֆրանսիայի թեմի հիմնադիր ծխերից Նիսի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու համայնքի եւ Մայր Աթոռի միջեւ հակամարտությունը ծագել է միասնական («տիպային») կանոնադրության պարտադրման հողի վրա: 2007թ.-ին ծխի ընդհանուր ժողովը քվեարկությամբ մերժել է ՀԱՍԵ փաստացի պետի կողմից պարտադրված միասնական կանոնադրությունը, որով եկեղեցական գույքի ու ֆինանսների տնօրինումը փոխանցվում էր եկեղեցական իշխանությանը: Ծխի դիրքորոշման համաձայն, որը հիմնված էր տվյալ երկրի օրենսդրության վրա՝ կանոնադրության առարկան աշխարհիկ վարչական ոլորտն է, մինչդեռ Եկեղեցու կանոնները պետք է վերաբերեն բացառապես կրոնական ոլորտին: Ծխի գործունեությունը կարգավորվում էր Ֆրանսիայի 1901թ. եւ 1905թ. օրենքներով: Կանոնադրությունն ընդունելուց հրաժարվելու պատճառով 2012թ.-ին ՀԱՍԵ փաստացի պետը, ֆրանսիական դատարանում պարտություն կրելուց հետո, ապասրբացրել է Սուրբ Մարիամ մատուռը, զրկել ողջ եկեղեցական համայնքն Առաքելականությունից եւ ծուխը դուրս է հանել Ֆրանսիայի թեմի կազմից՝ փաստացի ամբողջ հայկական հավատավոր համայնքը միտումնավոր դուրս դնելով Հայ եկեղեցուց: **[10] [11]**

13.10. 2011թ.-ին ՀԱՍԵ փաստացի պետն ապօրինի կերպով կարգալույծ է հռչակում Շվեյցարիայի Ժնեւ քաղաքի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ Աբել քահանա Մանուկյանին եւ նրա փոխարեն նշանակում Մեսրոպ վարդապետ Պարսամյանին: Փաստացի կաթողիկոսը նպատակ ուներ վերակազմակերպել Շվեյցարիայի ՀԱԵ եկեղեցական համայնքը, ինչին կտրականապես դեմ էր տեղի հայ համայնքը, որը ցանկանում էր պահպանել եկեղեցական համայնքի կարգավիճակը եւ թեմ չձեւավորել: Ժնեւի եկեղեցու 90 հոգանոց խորհրդի 88 անդամները դեմ էին քվեարկել թեմական կառույցների ձեւավորմանը: Չնայած այս հանգամանքին, ՀԱՍԵ փաստացի պետը երկարամյա եկեղեցական համայնքին զուգահեռ ձեւավորում է նոր՝ Ժնեւի եւ Լեմանի շրջանի ծուխը եւ հեռացնում է ավանդական համայնքի կողմից հարգված եւ ընդունված հոգեւոր հովվին: **[12]**

13.11. 2013թ. հուլիսին՝ Եկեղեցում 45 տարվա ծառայությունից հետո, ՀԱՍԵ փաստացի պետի ճնշմամբ հրաժարական է ներկայացրել Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակ եւ Ֆրանսիայի թեմի առաջնորդ Նորվան արք. Զաքարյանը՝ ուղիղ մեղադրանքներ հասցեագրելով ՀԱՍԵ փաստացի պետին: Հրաժարականի անմիջական պատճառը Նիսի ծխի նախկին քահանա Վաչե Հայրապետյանի հարցով ներկայացված վերջնագիրն էր. ֆրանսիական դատարանը վերջինիս կողմից բռնություն կատարելու հանգամանքով նրա նկատմամբ կայացրել էր պայմանական դատավճիռ, մինչդեռ ՀԱՍԵ փաստացի պետը պահանջում էր նրան վերականգնել ծառայության մեջ եւ ապահովել աշխատավարձով: 2013թ. հունիսին Փարիզի Շառլ դը Գոլ օդանավակայանում ՀԱՍԵ փաստացի պետը հրապարակավ սպառնացել է թեմի առաջնորդին. *«Եթե մինչեւ հուլիսի 1-ը չվերականգնեք նրան... ապա Դուք գործ չունեք Մայր Աթոռի հետ»*: Չնայած արքեպիսկոպոսի խնդրանքին՝ եկեղեցու փաստացի պետի ճնշմամբ պայմանավորված նա հրաժարական է ներկայացրել յոթամյա առաջնորդական շրջանի ավարտին համապատասխան: Հրաժարականը լայն արձագանք է ունեցել Ֆրանսիայի հայ համայնքում, որտեղ Զաքարյանը մեծ հեղինակություն ուներ, եւ հենց այս դեպքից հետո Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրհան արք. Մանուկյանը հրապարակել է ՀԱՍԵ փաստացի պետին ուղղված աննախադեպ քննադատական նամակը (տե՛ս 4.3.): **[13] [14]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13.12. 2009թ-ին Եկեղեցական-ներկայացուցչական ժողովն ընդունել եւ ՀԱՍԵ փաստացի պետի կողմից հաստատվել է (ԱԵԺ կողմից չի վավերացվել) «Ուղենիշ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական կանոնադրության» փաստաթուղթը, որով սփյուռքի բոլոր թեմերին առաջադրվել է իրենց պատմական եւ տեղական կանոնադրությունները համապատասխանեցնել միասնական օրինակին: Փաստաթուղթը ձեւականորեն «ուղենշային» է, քանի որ նախապես քննարկման համար ուղարկված է եղել բոլոր թեմական առաջնորդների ուշադրությանը, սակայն դրա հոդվածների ճնշող մեծամասնությունն աստղանիշով նշված է որպես բոլոր թեմերի կանոնադրություններում ընդգրկելու համար պարտադիր, իսկ մի շարք հոդվածներ հայտարարված են «փոփոխության ենթակա չեն» (հոդված 1.5, 2.1.2): Դրանով թեմը՝ որպես հավատացյալների ինքնակառավարվող համայնք, փոխակերպվում է Մայր Աթոռի վարչական ստորաբաժանման: Ուղենիշի առանցքային դրույթները վերաբերում են թեմի ինքնավարության էական կրճատմանը՝ կանոնադրական փոփոխությունների, որոշումների կայացման, խորհուրդների ընտրության, եկամուտների բաշխման (թեմը տարեկան հատկացնում է իր բյուջեի 4 տոկոսը Մայր Աթոռին) եւ գույքի տնօրինման եւ տիրապետման սկզբունքներին: Թեմերի համար ամենազգայուն դրույթներից են եղել՝ ընտրված ծխական եւ թեմական խորհուրդները կարող են լուծարվել առաջնորդի կամ Կաթողիկոսի որոշմամբ (5.9բ, 10.11բ, 1.10), եւ ծխի լուծարման դեպքում գույքն անցնում է թեմին, իսկ թեմի լուծարման դեպքում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին (7.2, 17.3): **[15]**

13.13. Ուղենիշի պարտադրումը սփյուռքի թեմերում մեծամասնության պարագայում բախվել է երեք հիմնարար հակասության:

- **Ավանդույթային.** սփյուռքի թեմերի կանոնադրությունները հարյուրամյակ շարունակ հենվել են հոգեւոր եւ վարչական կառավարման տարանջատման սկզբունքի վրա՝ աշխարհականները պատասխանատու են վարչական եւ ֆինանսական հարցերի, իսկ հոգեւորականները՝ հոգեւոր կյանքի եւ հովվական գործունեության համար, մինչդեռ Ուղենիշը հակառակում է այդ սկզբունքին՝ համայնքի ընտրած մարմինների որոշումները դնելով հոգեւոր վերադասի վավերացումից կախվածության մեջ:
- **Իրավական.** սփյուռքի թեմերն ու ծխերը գործում են որպես ընդունող պետության իրավունքով ստեղծված եւ գրանցված իրավաբանական անձինք, եւ Ուղենիշի հիման վրա

մշակված տեքստերը մի շարք երկրներում հակասել են տեղական օրենսդրությանը եւ չեն կարողացել գրանցում ստանալ:

- **Կանոնական.** Ուղենիշի ընդունման ընթացակարգն ինքնին բացառել է թեմերի ծխական ներկայացուցիչների իրական մասնակցությունը թեմական հարցերի կառավարմանը, այլ միայն որոշ թեմերի պարագայում առաջնորդ եպիսկոպոսների հայեցողությամբ ֆորմալ քննարկումներ են անցկացվել հոգեւոր դասի ներկայությամբ, որոնց դիտարկումները հետո չեն ընդունվել եկեղեցու փաստացի պետի կողմից: **[15]**

ԱՄՓՈՓՈՒՄ

13.14. ՀԱՍԵ փաստացի պետի կողմից Եկեղեցու կառավարումը յուրացնելու, գույքերի սեփականությունը վերաբաշխելու ձգտումը դարձել է Մայր Աթոռի եւ սփյուռքի միջեւ առճակատման եւ խզման հիմնական գործոնը: Սփյուռքի թեմերին եւ ծխերին պարտադրված «Ուղենշային» կանոնադրությունը վեճեր ու պառակտումներ է առաջացրել համայնքներում, դարձել մի շարք վաստակաշատ հոգեւորականների ծառայության ընդհատման, սփյուռքի ակտիվ ներկայացուցիչների օտարման պատճառ: Տարիներ շարունակ Ռուսաստանի, Բուլղարիայի եւ այլ երկրների տարբեր համայնքներում հավատավոր ժողովուրդը միտումնավոր կերպով զրկված է եղել հոգեւոր ծառայություններ ստանալու հնարավորությունից, ինչի պատճառը եղել են ՀԱՍԵ փաստացի պետի եւ տվյալ թեմերի ղեկավարների կամայական կադրային նշանակումները, ֆինանսական միջոցների շորթումները եւ խնդրահարույց կանոնադրական սկզբունքների պարտադրումը:

13.15. ՀԱՍԵ փաստացի պետի եղբայրը՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը, տասնամյակներ շարունակ ՀԱՍԵ ամենամեծ թեմում վարել է գույքի սեփականությունների վերաբաշխման, ծիսական ծառայությունների դիմաց Եկեղեցու հավատավոր ժողովրդից «նվիրատվության» տեսքով հսկայական ֆինանսական միջոցների շորթման գործունեություն: Արձանագրվել են դեպքեր, երբ հավատավոր ժողովուրդը ստիպված է եղել դիմել օտար եկեղեցիների սպասավորներին՝ հոգեւոր ծառայություններ եւ ծիսակատարություններ ստանալու համար, ինչն ըստ էության նշանակում է հայ քրիստոնյաների միտումնավոր օտարում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Би-би-си / Русская служба (2019-09-13). «"У нас украли веру": как Армянская апостольская церковь оказалась на грани раскола». https://www.bbc.com/russian/features-49582410
2. Mamul.am (2019-05-09). «Իժեւսկի հայկական եկեղեցին օծելու համար թեմի առաջնորդ Եզրաս Ներսիսյանը 20 հազար դոլար կաշառք է պահանջել». https://m.mamul.am/am/post/87099
3. News.am (2024-11-12). «Օծվել է Իժեւսկի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի շինարարությունը սկսվել էր 15 տարի առաջ». https://news.am/hy/news/852037
4. Armenlur.am (23-07-2019). «Армянские общины 12 городов недовольны главой Российской и Ново-Нахичеванской епархии ААЦ». https://armenlur.am/news/armjanskie_obshhiny_12_gorodov_nedovolny_glavoj_rossijskoj_i_novo_nakhichevanskoj_eparkhii_aac/2019-07-23-2054
5. Рубен Григорян (2017-03-17). «Почему архиепископ Езрас закрыл Армянский музей Москвы и культуры наций?». https://www.armmuseum.ru/news-blog/2017/3/17/-119875
6. Regnum (2016-09-11). «Рубен Григорян "Почему закрылся армянский музей Москвы?"». https://www.youtube.com/watch?v=6SzdyqCyupQ
7. ՀԱՍԵ Բուլղարիայի թեմ, թեմական խորհրդի նախագահ Անդրանիկ Շաքարյան (2026-07-01). «ՀԱՍԵ Բուլղարիայի թեմում շարունակվող ինստիտուցիոնալ ճգնաժամը եւ Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի ներկայացուցիչների գործողությունները»
8. Bivol.bg (2019-07-11). «Спорове за имоти и власт тресат арменската християнска общност в България». https://bivol.bg/спорове-за-имоти-и-власт-тресат-арменс.html
9. Труд (2019-10). «Епархийският съвет на Арменската църква свали доверието си от служебно назначен духовен водач». https://trud.bg/епархийският-съвет-на-арменската-цър/

10. Nouvel Hay Magazine (2018-05). «A Nice, l'église Sainte Marie communique».
https://www.nouvelhay.com/en/2018/05/a-nice-nous-avons-visite-la-chapelle-ste-marie-et-leglise-st-philippe-de-leglise-apostolique-armenienne/
11. Ecrittératures / Denis Donikian (2018-03-28). «Eglise Sainte-Marie de Nice : mise au point».
https://denisdonikian.wordpress.com/2018/03/28/eglise-sainte-marie-de-nice-mise-au-point/
12. Keghart.org (2011-06-23). «Press Release – Church Council of ArACS». https://keghart.org/press-release-church-council-of-aracs/; Armtimes.com (2011-06-29). «Ովքե՞ր են վեհափառի ֆավորիտները». https://armtimes.com/hy/article/26171
13. Abovyan Preaching Center (2013-07-16). «La lettre de démission de Mgr Norvan Zakarian au Catholicos Garèguine II».
https://abovyanpreachingcenter.wordpress.com/2013/07/16/la-lettre-demission-de-mgr-norvan-zakarian-au-catholicos-gareguine-ii/
HyeTert (2013-08-13). «Crisis in the Armenian Church: Archbishop Norvan Zakarian of France resigns».
https://hyetert.org/2013/08/13/crisis-in-the-armenian-church-archbishop-norvan-zakarian-of-france-resigns/
14. Armenpress (2013). «Primate of the Armenian Church Diocese of France resigns from his service». https://armenpress.am/eng/news/738647/
15. «Ուղենիշ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական կանոնադրության», հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 2009թ., էջ 38-47,
https://tert.nla.am/archive/HGG AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2009/2009(11).pdf

14 ՀԱՍԵ փաստացի պետի վերահսկմամբ տարիներ ի վեր եկեղեցապատկան կամ եկեղեցու տնօրինմանը հանձնված գույքն օգտագործվել է ոչ նպատակային՝ լքվել է կամ օգտագործվել է բիզնես նպատակներով:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14.1. Հայաստանի Հանրապետությունն անկախացումից հետո Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն անհատույց կերպով հանձնել է պատմամշակութային հուշարձան հանդիսացող զգալի թվով եկեղեցիներ, վանական համալիրներ եւ դրանց հարակից հողատարածքներ: **[1]** 2005թ. Կառավարության որոշմամբ նախկինում օգտագործման իրավունքով հանձնված վանքերի ու եկեղեցիների հողամասերը եւս փոխանցվել են անհատույց սեփականության իրավունքով: 2013թ. փետրվարին հաստատվել են Մայր Աթոռին սեփականության եւ անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող ու հողի հարկից եւ գույքահարկից ազատվող շենք-շինությունների ու հողամասերի մանրամասն ցանկերը: **[2]** Ըստ ԿԳՄՍ նախարարության՝ 2025թ. հունիսի դրությամբ Հայաստանում պետական ցուցակներում ներառված է շուրջ 1340 եկեղեցի եւ վանական համալիր հանդիսացող անշարժ հուշարձան, որոնցից ավելի քան 300-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սեփականությունն է: **[3]**

14.2. Առկա գույքագրման տվյալների համաձայն՝ ՀԱՍԵ-ին պատկանող կամ նրա տնօրինմանը հանձնված ավելի քան 100 միավոր անշարժ գույք Հայաստանի 9 մարզում եւ Երեւանում լքված է, չի օգտագործվում ըստ նշանակության կամ շահագործվում է առեւտրային նպատակով: Դրանք ընդգրկում են հողատարածք՝ ավելի քան 120 հա, որից 62 հա երկու արոտավայր է, իսկ մնացած շուրջ 60 հա-ը՝ հողամասեր եւ կառուցապատված տարածքներ, ինչպես նաեւ շինություններ՝ ավելի քան 43,000 քմ՝ ներառյալ մշակույթի պալատներ, կինոթատրոններ, մանկապարտեզներ, արտադրամասեր, բնակելի տներ եւ բնակարաններ: Եկեղեցին համայնքներից ձեռք է բերել կամ ստացել է երկու տասնյակից ավել հողամաս՝ ընդհանուր մոտ 12 հա մակերեսով, եկեղեցի կառուցելու պայմանով, սակայն դրանցից եւ ոչ մեկում եկեղեցի չի կառուցվել:

- Շիրակի մարզ – 12 հողամաս (Ալվար, Աղվորիկ, Ամասիա, Արդենիս, Արեգնադեմ, Բերդաշեն, Գառնառիճ, Զարիշատ, Զորակերտ, Ծաղկուտ, Հովտուն, Ողջի) գրանցված

2014-2018թթ.՝ ընդհանուր 1,41 հա, բոլորն անօգտագործելի. 13-րդը՝ Լուսաղբյուր գյուղում (0,2 հա), գյուղացիների կողմից օգտագործվում է որպես ֆուտբոլի խաղադաշտ.

- Գեղարքունիքի մարզ – Վարսեր (0,1 հա, 2008թ.), Ծովագյուղ (0,3 հա, 2007թ.) եւ Սեւանի քաղաքային զբոսայգու 2 հա-ը (2004թ.).
- Արարատի մարզ – Վեդի (2022թ.), Երասխ (2023թ.), Գեղանիստ (2023թ.), Արգավանդ (2010թ.).
- Երեւան – Նոր Նորք (Թոթովենցի փող. 2/1, 4,5 հա)՝ հատկացվել է 2006թ., այգին ոչ բարվոք վիճակում է, Շենգավիթ (Չեխովի եւ Հայկ Հովսեփյանի փողոցների խաչմերուկ)՝ 4 350 քմ, հատկացվել է 2005թ., լքված է, Ավան՝ հատկացվել է 2005թ., աշխատանք չի իրականացվել, Աջափնյակ (Շիրազի եւ Ջանիբեկյանի փողոցների խաչմերուկ)՝ 1 հա, հատկացվել է 2001թ., Դավթաշեն (1-ին եւ 2-րդ թաղամասերի միջեւ)՝ 1 հա, հատկացվել է 2004թ.: Թեմայի շուրջ Մայր Աթոռը FIP-ի հարցմանն ի պատասխան շինարարության սկսման ու ավարտի ժամկետների վերաբերյալ տեղեկություն չի տրամադրել: **[4]**
- Նույն տրամաբանությամբ չեն իրագործվել նաեւ այլ նպատակային հատկացումներ՝ Մասիսում սոցիալական կենտրոն կառուցելու համար 0,1 հա (2020թ.), Լուսաշողում հոգեւոր երիտասարդական ճամբարների համար 0,42 հա (2021թ.), Ջերմուկում Սբ. Հակոբ մատուռի վերականգնման համար 500 քմ (2007թ.), Սաղմոսավանում վանքի տարածքի ընդլայնման համար ՀՀ մշակույթի նախարարության տրամադրած 3,86 հա պատմամշակութային նշանակության հողը, որը փաստացի ծառայում է որպես խոտհարք:

14.3. Համայնքներն ու պետությունը ՀԱՍԵ-ին անհատույց հանձնել են բազմաթիվ հանրային նշանակության շենքեր եւ տարածքներ՝ ամեն դեպքում կոնկրետ հանրային նպատակի պայմանով, սակայն դրանց շահագործման պայմանը չի կատարվել.

- Սեւան, Շահումյան 22 հասցեում գտնվող նախկին քաղաքային մշակույթի տունը 2005թ-ին նվիրաբերվել է Եկեղեցուն երիտասարդների քրիստոնեական դաստիարակության եւ համակարգչային կենտրոն ստեղծելու նպատակով, սակայն մինչ օրս այն չի օգտագործվում որեւէ նպատակով: Ներկայում շենքը գտնվում է ոչ բարվոք վիճակում, շենքի տարածքը կարիք ունի հիմնանորոգման,
- Ապարան, Գայի փողոցի վրա գտնվող մշակույթի պալատի կիսակառույց շենքը եւ հողը 2007թ-ին նվիրաբերվել է Եկեղեցուն՝ Հայորդյաց տուն վերակառուցելու համար, աշխատանք չի կատարվել, շենքը քայքայվել եւ վնասվել է,
- Թալինի թիվ 1 մանկապարտեզը եւ հողը 2012թ-ին նվիրաբերվել է նպատակային շահագործելու պայմանով, գործել է միայն մինչեւ 2013թ., ներկայում շենքը չի օգտագործվում եւ քայքայվել է,
- Չարենցավանի քաղաքային կինոթատրոնի շենքը 2004թ-ից գտնվում է Եկեղեցու հաշվեկշռում եւ ամբողջ այդ ընթացքում չի օգտագործվել՝ մնալով լքված: 2025թ. Չարենցավանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը նախաձեռնել է շենքը համայնքին վերադարձնելու եւ որպես կինոթատրոն վերականգնելու գործընթաց,
- Արարատ, «Ավարայր» կինոթատրոնի շենքը՝ 916 քմ շինություն եւ հարակից հող, ՀՀ կառավարության 2010թ-ի որոշմամբ անհատույց հանձնված է Մայր Աթոռին՝ Հայորդյաց տուն վերակառուցելու համար, սակայն վերակառուցում չի իրականացվել, շենքը փաստացի վերածվել է աղբավայրի եւ գտնվում է անմխիթար վիճակում,
- Մայր Աթոռի տարածքում գտնվող պատմական շենքը, որը կառուցվել էր Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի հրահանգով իբրեւ վանական սեղանատուն 18-րդ դարում, այժմ գործածվում է որպես «Ագապէ» սրճարան-ռեստորան,

- Հաղարծին վանական համալիրից 150 մետր հեռավորության վրա, պետական սեփականություն հանդիսացող անտառային հողատարածքում կառուցված երկհարկանի քարաշեն շինությունը, որը նախատեսված էր եղել որպես ճեմարան օգտագործել, այդ նպատակին չի ծառայել. շինությունը վերանորոգվել, կահավորվել եւ 2018թ-ից մինչեւ 2025թ. փետրվարը շահագործվել է որպես «Վանատուն» հյուրանոց: Շինությունը չունի սեփականության վկայական, ուստի դրա էլեկտրամատակարարումն ու գազամատակարարումն իրականացվել է անմիջապես Հաղարծին վանական համալիրից: Ըստ հրապարակումների՝ շինության կառուցման եւ հյուրանոցի գործունեության մասին տեղյակ են եղել ՀԱՍԵ փաստացի պետը եւ այդ շրջանում Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը: **[5]**

14.4. 2013թ. Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի բնակիչ Սուսաննա Գաբրիելյանը կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիայի ժամանակ հայտնել է, որ համայնքի եկեղեցու պատմական տարածքում պատրաստվում են բիզնես-տարածք կառուցել՝ իրենից խլելով իր հողակտորը, ընդ որում՝ ՀԱՍԵ փաստացի պետի քրոջ որդու՝ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս. Պռոշյանի հովանավորությամբ եւ հոգեւոր հովիվ Եփրեմ Զարգարյանի միջոցով: Ըստ նրա վկայության՝ պրակտիկան համակարգային է. նշված անձինք բիզնես-տարածքներ ունեն մի քանի հարեւան գյուղերի եկեղեցիների բակերում, իսկ Մուղնիում «Սուրբ Գեւորգ եկեղեցու տարածքում դպրության տուն սարքեցին, 3 ամիս գործելուց հետո դարձրին բիզնես-կենտրոն՝ գաթայի, լավաշի հացատուն»: **[6]** Այս վկայությունը հաստատում է 5.10. ենթաբաժնում մեջբերված՝ Մուղնիի վանքի հարեւանությամբ լավաշի եւ գաթայի արտադրամասի մասին հրապարակումը:

14.5. Եկեղեցապատկան հուշարձանների նկատմամբ ՀԱՍԵ փաստացի պետի ունեցած վերաբերմունքն արձանագրված է իր կողմից հնչեցված խոսքում: 2011թ. հուլիսին «Չենք լռելու» երիտասարդական նախաձեռնության հրապարակման համաձայն՝ հուշարձանագետ Սամվել Կարապետյանը ՀԱՍԵ փաստացի պետին ներկայացրել է X դարի Սանահինի վանական համալիրի (ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում) անմխիթար վիճակը՝ տանիքներին աճած ծառերը, փլուզվող կառույցները, եւ առաջարկել նոր եկեղեցիների կառուցմանն ուղղվող միջոցներն ուղղել Սանահինի պահպանմանը: Ի պատասխան՝ ՀԱՍԵ փաստացի պետը հայտարարել է. «*Ես գործ չունեմ լեռներում գտնվող վանքերի եւ եկեղեցիների հետ*»: **[7]**

14.6. Ըստ հուշարձանագետ Սամվել Կարապետյանի վկայության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնաժողովի անդամները, Նորավանքի վանական համալիրը հաշվառելիս երբ *«հեռվից տեսել են համալիրի հարեւանությամբ կառուցված շինությունը, նույնիսկ չեն մոտեցել Նորավանքին»*.

> *«յուրաքանչյուր հուշարձան ունի պահպանվող տարածք, եւ եթե այդ տարածքում ժամանակակից շինություններ են հայտնվում, ապա պատմական հուշարձանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի չափանիշներով, չի կարող մտնել ցուցակի մեջ»*:

Կառուցապատման հետեւանքով համալիրը դուրս է մնացել ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտների ցանկում հայտնվելուց: **[8]** Այս դրվագը հուշարձանապատկան տարածքի առեւտրային շահագործման չափելի ինստիտուցիոնալ վնասն է. համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու հնարավորության կորուստը:

14.7. Եկեղեցապատկան գույքի ոչ նպատակային տնօրինման վերաբերյալ վկայություն է տվել նաեւ Տ. Տարոն քահանա Հունանյանը՝ անդրադառնալով Մայր Աթոռի եկեղեցում թաղման վայրի վաճառքի մասին շրջանառվող տեղեկություններին. «*Ամեն դեպքում դրա մասին շատերն են խոսում, եւ, բնականաբար, սա իրենց բիզնես մոտեցումն է, որը հարիր չէ եկեղեցականին*»: **[9]**

14.8. Առանձին քննարկման հարց է եկեղեցական սրբությունների՝ առանց Եկեղեցու իրավասու մարմինների որոշման օտարման պրակտիկան: Հայտնի է Սուրբ Գեղարդի մի մասնիկի նվիրաբերումը Ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարք Ալեքսի Երկրորդին՝ նրա ծննդյան 75-ամյակի կապակցությամբ: Ըստ հաղորդումների՝ նվիրաբերումը կատարվել է 2004թ.-ին, սակայն հանրությանը հայտնի է դարձել միայն 2018թ.-ին՝ ՀԱՍԵ փաստացի պետի հրաժարականը պահանջող ակցիաների ընթացքում: **[10]** Բացի այդ, առկա են հաղորդումներ այն մասին, որ ԱՄՆ հայոց Արեւելյան թեմում՝ Նյու Յորքում, կազմակերպվել են աճուրդներ, որոնց ընթացքում իրականացվել է մասունքների վաճառք.

> *«Գարեգին Բ-ն մասունքները վաճառելուց առաջ նախ պատվիրում է որոշ ոսկերիչների՝ ճշգրտությամբ կրկնօրինակել տվյալ հնաոճ իրը, օրինակ՝ մասնատուփը, որից հետո այն փոխարինում են օրիգինալով եւ դնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գանձարանում, իսկ օրիգինալը վաճառում են միլիոններով, կարծես ոչինչ էլ չի եղել... Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը ԱՄՆ հայոց Արեւելյան թեմում իր թեմակալ առաջնորդ եղած ժամանակ ներգրավված է եղել մասունքների եւ բացառիկ սրբությունների վաճառքի մեջ, եւ երբեմն էլ եղել է հենց կազմակերպիչը»*: **[11]**

Հայտնի է նաեւ ՀԱՍԵ փաստացի պետի «օրհնությամբ» եւ ստորագրությամբ թանկարժեք ալկոհոլային խմիչքի վաճառքի կազմակերպման դեպք, ինչը կտրականապես դեմ է Հայ Եկեղեցու ավանդույթներին եւ արժեքներին: **[12]**

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.9. ՀԱՍԵ Կանոնագրքում ներառված «Առաքելական կանոններ»-ը եպիսկոպոսին եկեղեցական գույքի նկատմամբ վերապահում են տնտեսի, ոչ թե տիրոջ կարգավիճակ, եւ գույքի օգտագործման նպատակը սահմանում են սպառիչ կերպով: Կանոն 38 (36).

> *«Եպիսկոպոսը պիտի հոգ տանի Եկեղեցու իրերի վրայ եւ կարգադրի ինչպէս Աստծուն հաճելի է. բայց չպիտի գողանայ կամ ազգականներին ընծայի, հապա միայն աղքատներին օգնի եւ այս բանը պատճառ բռնելով ինքն էլ մէջից մի բան չպոկի»*:

14.10. ՀՀ իրավական դաշտում եկեղեցապատկան հուշարձանների նկատմամբ գործում են հետեւյալ պարտադիր նորմերը: «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998, ՀՕ-261) հոդված 36-ով հուշարձանի սեփականատերը պարտավոր է «ապահովել հուշարձանի պահպանությունը եւ անվթարությունը», «սահմանված կարգով տալ հուշարձանի պահպանական պարտավորագիր լիազորված մարմնին» եւ «ապահովել հուշարձանի մատչելիությունն ուսումնասիրման եւ պահպանության վերահսկման համար»: Հոդված 38-ով սահմանված է, որ «Հուշարձանները գերազանցապես օգտագործվում են գիտական, կրթական, մշակութային եւ ճանաչողական նպատակներով», իսկ «Հուշարձանների օգտագործումը տնտեսական եւ այլ նպատակներով թույլատրվում է, եթե այդպիսի օգտագործումը համապատասխանում է հուշարձանի բնույթին»:

14.11. ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ անշարժ գույքի հարկից ազատվում են կրոնական ու պաշտամունքային շինությունները, ինչպես նաեւ Մայր Աթոռին սեփականության իրավունքով պատկանող՝ հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիները եւ «հոգեւոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական եւ ծիսական պարագաների արտադրության եւ իրացման համար օգտագործվող շինությունները»: **[13]** Արտոնության շրջանակը, հետեւաբար, սահմանված է ոչ թե սեփականատիրոջ, այլ գույքի փաստացի օգտագործման նպատակի միջոցով. եկեղեցապատկան շինության շահագործումը

հյուրանոցի, ռեստորանի, կինոթատրոնի կամ այլ առեւտրային նպատակով դուրս է արտոնության շրջանակից եւ ենթակա է հարկման ընդհանուր կարգով:

ԱՄՓՈՓՈՒՄ

14.12. ՀԱՍԵ փաստացի պետի գահակալության ընթացքում տարիներ ի վեր եկեղեցապատկան կամ եկեղեցու տնօրինմանը հանձնված գույքի զգալի մասն օգտագործվել է ոչ նպատակային՝ բիզնես նպատակներով կամ լքվել է: Հայաստանի 9 մարզում եւ Երեւանում ՀԱՍԵ-ին պատկանող կամ նրա տնօրինմանը հանձնված ավելի քան 100 միավոր անշարժ գույք՝ ավելի քան 120 հա հողատարածք եւ ավելի քան 43,000 քմ շինություն, լքված է, չի օգտագործվում ըստ նշանակության կամ շահագործվում է առեւտրային նպատակով:

14.13. Փաստագրված են դեպքեր, երբ եկեղեցու տնօրինմանը հանձնված անշարժ գույքն ուղղակիորեն շահագործվել է առեւտրային նպատակով: Նման օգտագործումը հակասում է հուշարձանների մասին ՀՀ օրենսդրությանը, ըստ որի տնտեսական նպատակով օգտագործումը թույլատրելի է միայն այնքանով, որքանով համապատասխանում է հուշարձանի բնույթին:

14.14. Համայնքներից եկեղեցի կառուցելու պայմանով ձեռք բերված առնվազն 24 հողամասերում եւ այգիներում՝ ընդհանուր մոտ 12 հա մակերեսով, եկեղեցի այդպես էլ չի կառուցվել, եւ դրանք տասնամյակներ շարունակ մնացել են լքված ու աղբոտված վիճակում: Համանման ճակատագիր են ունեցել սոցիալական կենտրոնի, երիտասարդական ճամբարի եւ վանքի ընդլայնման համար հատկացված տարածքները: Այս պրակտիկան նշանակում է, որ եկեղեցաշինության հայտարարված նպատակը փաստացի ծառայել է որպես համայնքային հողերի անհատույց ձեռքբերման եւ դրանց առեւտրայնացման միջոց:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ կառավարության որոշում N 616, 09.07.2001. «Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն վանքեր եւ եկեղեցիներ հանձնելու մասին». https://www.arlis.am/hy/acts/88332
2. ՀՀ կառավարության որոշում N 178-Ա, 28.02.2013. https://www.arlis.am/hy/acts/81997
3. Առավոտ (2025-06-18). ԿԳՄՍ նախարարության տվյալները եկեղեցի-հուշարձանների քանակի եւ վիճակի մասին. https://www.aravot.am/2025/06/18/1494679/
4. Fip.am (2019-01-23). Երեւանում եկեղեցաշինության համար հողատարածքների ուսումնասիրություն. https://fip.am/9367
5. Armtimes.com (2025-11-19). «Հաղարծնի վանական համալիրի հարեւանությամբ ճեմարանի փոխարեն գործել է հյուրանոց». https://www.armtimes.com/hy/article/326138
6. Epress.am (2013-08-29). «Գարեգին Բ-ի քրոջ որդին եկեղեցու տարածքում «օբյեկտ» է հիմնելու, պատմել է Օհանավանի բնակիչը». https://epress.am/2013/08/29/գարեգին-բ-ի-քրոջ-որդին-պատրաստվում-է-եկ.html
7. Hetq.am (2011-07-19). «Ես գործ չունեմ լեռներում գտնվող վանքերի եւ եկեղեցիների հետ». Կաթողիկոսի հայտարարությունը Սանահինի վիճակի վերաբերյալ («Չենք լռելու» նախաձեռնություն). https://hetq.am/hy/article/3044
8. News.am (2011-07-13). Սամվել Կարապետյան՝ Նորավանքի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում չընդգրկվելու մասին. https://news.am/arm/news/67794.html
9. Armtimes.com (2026-07-30). «Ամորձատում, սեռավարակ, հույն քավոր, գերեզմանի վաճառք. ինչ է կատարվում Մայր Աթոռում. Տեր Տարոնը՝ լուրերի մասին». https://armtimes.com/hy/article/340927
10. News.am (2026-01-24). «Գեղարդը տեղում է. նվիրաբերվել է Գեղարդի մանրակերտը, որի մեջ զետեղվել է կոթառից փշուր. Հայր Ասողիկ». https://news.am/hy/video/925222
11. Mamul.am (2018-10-24). «Գարեգին Բ-ն Խաժակ արք. Պարսամյանի հետ միլիոնավոր դոլարներ է դիզել մասունքների վաճառքից գոյացած գումարներով». https://m.mamul.am/am/post/83687
12. Armlur.am (2017-02-06). «Գարեգին Բ-ի օրհնած կոնյակը վաճառվում է 1500 դոլարով». https://armlur.am/648288/
13. ՀՀ հարկային օրենսգիրք. https://www.arlis.am/hy/acts/219122/latest

15 **ՀԱՍԵ փաստացի պետը գործունեության ողջ ընթացքում պատշաճ կերպով չի կատարել իր առաքելությունը թեմերի հավատավոր ժողովրդի հանդեպ, չի կատարել հովվապետական այցեր դեպի հայաստանյան եւ սփյուռքի որոշ թեմեր եւ դրանցում չի մատուցել Սուրբ Պատարագներ:**

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15.1. Հովվապետական այցը հոգեւոր առաջնորդի (Հովվապետի) հատուկ այցելությունն է որեւէ թեմ, համայնք, եկեղեցի, հաստատություն կամ հավատացյալների խումբ՝ նրանց հետ հանդիպելու, հոգեւոր հաղորդակցություն հաստատելու, հավատքի մեջ զորացնելու եւ հայրական հոգածություն ցուցաբերելու նպատակով: Այն պարզապես պաշտոնական այցելություն չէ, այլ հոգեւոր ծառայության եւ սիրո արտահայտություն, որի ընթացքում Հովվապետը ներկայանում է որպես Եկեղեցու հայր եւ առաջնորդ՝ լսելու ժողովրդի հոգսերը, քաջալերելու, փոխանցելու իր օրհնությունը եւ ամրապնդելու Եկեղեցու միասնությունը, իսկ Սփյուռքի թեմերի պարագային՝ ամրապնդելու նաեւ Հայաստան-Սփյուռք հարաբերությունները: Հովվապետական այցի ընթացքում սովորաբար իրականացվում են՝

- հավատացյալների հետ հանդիպումներ եւ զրույցներ,
- Սուրբ Պատարագի եւ ծիսական այլ արարողությունների հանդիսապետում,
- հոգեւոր պատգամի փոխանցում,
- եկեղեցական համայնքի գործունեությանը ծանոթացում,
- հոգեւորականների եւ ծառայողների հետ հանդիպումներ,
- տեղի պետական այրերի հետ հանդիպումներ եւ վարչական խնդիրների քննարկում,
- օրհնության եւ հայրական խնամքի դրսեւորում:

15.2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական կայքում զետեղված կենսագրության համաձայն՝ *«Գահակալությանը հաջորդած ամիսներից սկսվել են Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի Հովվապետական եւ Հայրապետական այցելությունները»*՝ Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի թեմեր: **[1]** Սակայն հենց Մայր Աթոռի հրապարակած տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող թեմերի պարագայում այս պնդումը փաստացի հիմնավորում չունի:

15.3. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 12 թեմերից ՀԱՍԵ փաստացի պետը հովվապետական այց կատարել է ընդամենը երկուսում՝ Շիրակի թեմ (2000թ.) եւ Գուգարաց թեմ (2004թ.), ընդ որում, վերջինս եղել է մեկօրյա եւ ընդհատվել է: Մնացած 10 թեմերում 27 տարիների ընթացքում հովվապետական այց երբեւէ չի իրականացվել: **[2]**

15.4. **Արարատյան Հայրապետական թեմ** (ներառում է քաղաքամայր Երեւանը, իսկ մինչեւ 2021թ.՝ նաեւ Արարատի մարզը): Անցնող 27 տարիների ընթացքում ՀԱՍԵ փաստացի պետն այս թեմում Սուրբ Պատարագ երբեք չի մատուցել, բացառությամբ տաղավար որոշ տոներին Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որը, սակայն, փաստացի գտնվում է Մայր Աթոռի եւ ոչ թե Արարատյան Հայրապետական թեմի վերահսկողության ներքո: Այդ տարիներին նա կատարել է մի քանի եկեղեցու օծում: Անցնող տարիներին ՀԱՍԵ փաստացի պետը Երեւանում մի շարք անգամ եղել է ԳԱԱ-ում եւ ԵՊՀ-ում, մասնակցել է պետական արարողակարգային միջոցառումների ու համերգների, ներկա է գտնվել մշակույթի եւ հանրային գործիչների մեծարման կամ հրաժեշտի արարողություններին, այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր եւ Եռաբլուր պանթեոն, ինչպես նաեւ նախկին

կառավարության օրոք մասնակցել է մի քանի շինությունների բացման կամ վերաբացման արարողություններին: Այս այցելություններից եւ ոչ մեկը հովվապետական այց չէ եւ չի փոխարինում դրան:

15.5. **Արմավիրի թեմ** (ներառում է Արմավիրի մարզը): 27 տարիների ընթացքում ՀԱՍԵ փաստացի պետը Մայր Աթոռի նստավայրին անմիջականորեն հարող՝ ամենամոտ թեմ հովվապետական այց չի կատարել եւ Սուրբ Պատարագ երբեք չի մատուցել: Օծել է Մեծամորի Սուրբ Ղազար եկեղեցին (22.10.2005), վերաօծել է Սարդարապատ գյուղի նորոգված Սուրբ Աստվածածին եկեղեցին (01.11.2010): Մայր Տաճարի նորոգության տարիներին մի քանի անգամ Ղեւոնդյանց տոնի Պատարագները մատուցվել են Վաղարշապատի Սուրբ Գայանե վանքում, որոնց ներկա է եղել ՀԱՍԵ փաստացի պետը: Թեմի տարածքում այցելել է Սարդարապատի հուշահամալիր, իսկ «Մեկ օր՝ մեկ թեմում» ծրագրի շրջանակներում մի քանի ժամ եղել է թեմի տարածքում (08.06.2012):

15.6. **Մասյացոտնի թեմ** (ներառում է Արարատի մարզը): Հիմնադրման օրվանից (2021թ. հունվար) մինչ օրս ՀԱՍԵ փաստացի պետն այդ թեմ չի այցելել: **[3]**

15.7. **Արթիկի թեմ** (ներառում է Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանը): Մինչ օրս ՀԱՍԵ փաստացի պետը չի այցելել այդ թեմ: Թեմի փաստացի տարածքում գործում է Հառիճավանքի ընծայարանը, որն անմիջապես Մայր Աթոռի ենթակայության տակ է եւ չի պատկանում Արթիկի թեմին: **[4]**

15.8. **Վայոց ձորի թեմ** (ներառում է Վայոց ձորի մարզը): Թեմի հիմնադրումից (2010թ.) մինչ օրս հովվապետական այց չի իրականացվել: Կատարվել է միայն Արկազի Սուրբ Խաչ վանքի վերաօծումը (11.09.2011): Իսկ երբ Վայոց ձորի տարածքը Սյունյաց թեմի կազմում էր, ՀԱՍԵ փաստացի պետն օծել է Վայքի Սուրբ Տրդատ եկեղեցին (06.08.2000), Մալիշկայի Սուրբ Աննա եկեղեցին (04.11.2000) եւ Ջերմուկի Սուրբ Գայանե եկեղեցին (17.11.2007):

15.9. **Սյունյաց թեմ** (ներառում է Սյունիքի մարզը): Այս թեմ ՀԱՍԵ փաստացի պետը հովվապետական այց չի կատարել: 2021թ. հունիսին՝ դեպի Լեռնային Ղարաբաղ Հայրապետական այցի շրջանակներում, այցելել է Շուռնուխ եւ Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Թեմի տարածքում օծել է Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին (01.12.2001), ինչպես նաեւ մասնակցել է Տաթեւի ճոպանուղու բացմանը (2010թ.):

15.10. **Կոտայքի թեմ** (ներառում է Կոտայքի մարզը): ՀԱՍԵ փաստացի պետն այս թեմ երբեք հովվապետական այց չի իրականացրել. մի քանի անգամ անձնական հյուրերին է ուղեկցել Բջնի եւ Ծաղկաձոր: Թեմում օծել է չորս եկեղեցի՝ Չարենցավանի Սուրբ Փրկիչ (21.07.2001), Թեղենիքի Սրբոց Նահատակաց (05.07.2003), Աբովյանի Սուրբ Հովհաննես (14.05.2013), Նոր Հաճնի Սուրբ Ամենափրկիչ (22.07.2015):

15.11. **Գեղարքունյաց թեմ** (ներառում է Գեղարքունիքի մարզը): Այս թեմ եւս հովվապետական այց չի իրականացվել: 2015թ. մայիսին օծել է Սեւան քաղաքի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին (բարերար), ինչպես նաեւ մի շարք անգամներ այցելել է իր կողմից 1990թ. Սեւանի թերակղզում բացված Վազգենյան դպրանոցը, որն անմիջապես Մայր Աթոռի ենթակայության տակ է եւ չի պատկանում Գեղարքունիքի թեմին:

15.12. **Տավուշի թեմ** (ներառում է Տավուշի մարզը): ՀԱՍԵ փաստացի պետն այս թեմ երբեք չի այցելել հովվապետական այցելությամբ: Թեմի տարածքում օծել է Բերդ քաղաքի Սուրբ Հովհաննես եկեղեցին (14.09.2014), հանդիսապետել է Հաղարծնի վանքի վերաբացմանը (2013թ.), կատարել է Դիլիջանում կառուցվող եկեղեցու հիմնարկեքը (18.10.2019): Իսկ երբ Տավուշի մարզը Գուգարաց թեմի կազմում էր, օծել է Ոսկեվանի վերակառուցված Սուրբ Գայանե եկեղեցին (04.11.2003) եւ Ակնաղբյուրի Սուրբ Վարդան Զորավար մատուռը (09.12.2007):

15.13. **Արագածոտնի թեմ** (ներառում է Արագածոտնի մարզը): Հովվապետական այց չի եղել: ՀԱՍԵ փաստացի պետի ձեռամբ վերաօծվել է Ապարանի Սուրբ Խաչ եկեղեցին (05.05.2002), օծվել են Չքնաղի Սուրբ Ստեփանոս եկեղեցին (20.06.2004), Ագարակ գյուղի Սուրբ Աստվածածին մատուռը (04.10.2008), Աշտարակի Սուրբ Մարիանե եկեղեցու նորակառույց Խորանը (20.02.2020):

15.14. **Գուգարաց թեմ** (ներառում է Լոռու մարզը): Սա այն երկու թեմերից մեկն է, որտեղ ՀԱՍԵ փաստացի պետը հովվապետական այց է կատարել՝ 2004թ. սեպտեմբերի 6-ին, մեկօրյա տեւողությամբ, ընդ որում այցն ընդհատվել է եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով: **[5]** Բացի այդ՝ թեմում օծել է Սպիտակ քաղաքի Սուրբ Հարություն եկեղեցին (23.12.1999), Ալավերդու Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին (2001թ.), Արեւաշող գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին (09.12.2004), Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին (25.10.2005), մասնակցել է Վանաձորի Հայորդյաց տան բացման հանդիսությանը (23.09.2010):

15.15. **Շիրակի թեմ** (ներառում է Շիրակի մարզը, 2012թ-ից՝ առանց Արթիկի տարածաշրջանի): 2000թ. հուլիսի 24-30-ը ՀԱՍԵ փաստացի պետը հովվապետական այց է կատարել Շիրակի թեմ՝ այցելելով մարզի քաղաքներ եւ գյուղական բնակավայրեր եւ կատարելով Գյումրիի Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնարկեքը: Սա միակ լիարժեք հովվապետական այցն է ՀՀ թեմեր՝ 27 տարիների ընթացքում: Հետագա տարիներին կատարվել են առանձին այցեր՝ Գյումրիի Սուրբ Հակոբ եկեղեցու օծում (29.08.2002) **[6]**, Գյումրիի Հայորդյաց տան բացման արարողությանը հանդիսապետություն (04.12.2014), Գյումրիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու վերաօծում (07.12.2024): **[7]**

15.16. ՀԱՍԵ փաստացի պետը գահակալության տարիներին ինքն է հիմնադրել չորս նոր թեմ՝ Վայոց ձորի եւ Տավուշի (2010թ.), Արթիկի (2012թ.) եւ Մասյացոտնի (2021թ.), սակայն այդ թեմերից եւ ոչ մեկում հիմնադրման օրվանից մինչ օրս հովվապետական այց չի իրականացրել: Այսինքն՝ թեմերի ձեւավորումը չի ուղեկցվել հովվապետական հոգածության որեւէ դրսեւորմամբ:

15.17. Փաստագրված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀԱՍԵ փաստացի պետի ներհանրապետական այցերի ճնշող մեծամասնությունը կապված է եղել ոչ թե հավատավոր ժողովրդի հետ հոգեւոր հաղորդակցության, այլ նորակառույց եկեղեցիների օծման արարողությունների հետ, որոնք գրեթե առանց բացառության իրականացվել են կոնկրետ բարերարների միջոցներով եւ նրանց ներկայությամբ: Հովվապետական այցի բովանդակությունը կազմող տարրերը՝ ծխական համայնքների հետ հանդիպումները, թեմի հոգեւորականների հետ խորհրդակցությունները, թեմերում Սուրբ Պատարագի մատուցումը, փաստացի բացակայել են:

15.18. ՀԱՍԵ փաստացի պետը երբեւէ հովվապետական այց չի կատարել Իրաքի հայոց թեմ (երբեւէ չի այցելել), Գերմանիայի հայոց թեմ, Հունահայոց թեմ, Կրասնոդարի եւ Հարավային Ռուսաստանի թեմ:

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.19. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոչումն ինքնին ամրագրում է հովվապետական պարտականությունը. նա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հովվապետն է, եւ հոտի նկատմամբ հովվական հոգածությունը ոչ թե նրա հայեցողական իրավունքն է, այլ ձեռնադրության եւ օծման ուխտով ստանձնված պարտավորությունը: Ընդ որում, Արարատյան Հայրապետական թեմի պարագայում ՀԱՍԵ փաստացի պետը հանդիսանում է նաեւ թեմի անմիջական թեմակալ առաջնորդը, որի փոխարեն օրըստօրյա կառավարումն

իրականացնում է առաջնորդական փոխանորդը: Հետեւաբար այդ թեմում 27 տարի Սուրբ Պատարագ չմատուցելը ոչ թե ընդհանուր Հովվապետի, այլ ուղղակիորեն թեմի եպիսկոպոսի հովվական պարտականության չկատարում է:

15.20. ՀԱՍԵ Կանոնագրքում ներառված «Առաքելական կանոններ»-ը հովվական հոգածությունից խուսափելը որակում են որպես կանոնական զանցանք եւ դրա համար նախատեսում են ուղղակի պատիժ: Կանոն 36 (34). *«Եթէ եպիսկոպոսը չընդունի իւր պաշտօնը եւ չհովուի իւր հօտը, թող մերժուի եկեղեցուց, մինչեւ որ կ'ընդունի, նոյնպէս էլ երէցը եւ սարկաւագը»*: Կանոն 58 (53).

> *«Եպիսկոպոսը կամ երէցը, եթէ անփոյթ է դէպի Եկեղեցու դասը եւ ժողովուրդը, բարեպաշտութիւն չի սովորեցնում, մերժուի. իսկ եթէ ծուլութեան եւ անփութութեան մէջ կը մնայ, կարգալոյծ լինի»*: **[8] [9]**

15.21. Հովվապետական այցը Հայոց Եկեղեցու շարունակական եւ փաստագրված ավանդույթ է. նախորդ կաթողիկոսների հովվապետական այցերը թեմեր պարբերաբար լուսաբանվել են Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում՝ որպես Եկեղեցու կյանքի կանոնավոր բաղկացուցիչ: **[10] [11]**

ԱՄՓՈՓՈՒՄ

15.22. ՀԱՍԵ փաստացի պետը 27-ամյա գահակալության ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գործող 12 թեմերից միայն երկուսում է կատարել հովվապետական այց՝ Շիրակի թեմում (2000թ.) եւ Գուգարաց թեմում (2004թ.), ընդ որում, վերջինս եղել է մեկօրյա եւ ընդհատվել է: Մնացած 10 թեմերի հավատավոր ժողովուրդը 27 տարիների ընթացքում երբեւէ չի ունեցել իր Հովվապետի հովվապետական այց: ՀԱՍԵ փաստացի պետն Արարատյան Հայրապետական թեմում, որի անմիջական թեմակալ առաջնորդն ինքն է, 27 տարիների ընթացքում Սուրբ Պատարագ երբեք չի մատուցել: Նույնը վերաբերում է Հայաստանի մյուս թեմերին: Հայրապետական Պատարագները մատուցվել են բացառապես նստավայրում՝ Մայր Աթոռում, եւ Մայր Աթոռին ուղղակիորեն ենթակա Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

15.23. ՀԱՍԵ փաստացի պետն ինքն է հիմնադրել չորս նոր թեմ՝ Վայոց ձորի, Տավուշի, Արթիկի եւ Մասյացոտնի, սակայն դրանցից եւ ոչ մեկում հիմնադրման օրվանից մինչ օրս հովվապետական այց չի իրականացրել: Թեմերի ձեւավորումն այսպիսով ունեցել է վարչական-կառավարչական, այլ ոչ թե հովվական բովանդակություն:

15.24. Հովվական հոգածությունից փաստացի հրաժարումը հակասում է ՀԱՍԵ Կանոնագրքի ուղղակի պահանջներին: Առաքելական կանոնները հովվական պարտականության չկատարումն ու ժողովրդի նկատմամբ անփութությունը որակում են որպես եկեղեցուց մերժման, իսկ շարունակական լինելու դեպքում՝ կարգալուծության հիմք: Ազգային-Եկեղեցական ժողովի չգումարումը, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովների խափանումը եւ հոտի՝ Եկեղեցու կառավարմանը մասնակցելու հնարավորությունից զրկվածությունը նույն երեւույթի տարբեր դրսեւորումներն են. Եկեղեցու փաստացի պետն օտարված է հավատավոր ժողովրդից:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, «Ամենայն Հայոց Կաթողիկոս – Կենսագրություն». https://www.armenianchurch.org/hy/Կենսագրություն

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, պաշտոնական կայքի լրատվական բաժին (1999-2026թթ. հրապարակումների ուսումնասիրություն). https://www.armenianchurch.org/hy/news
3. Մասյացոտնի թեմ, «Թեմի մասին». «Մասյացոտնի թեմը հիմնադրվել է 2021 թ. հունվարի 11–ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով». https://www.masyatsotn.org/home/tem
4. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, «Արթիկի թեմ». https://www.armenianchurch.org/hy/Արթիկի-թեմ ; Armtimes.com (2014-09-25). «Հայ առաքելական եկեղեցու թեմերը տրոհվում են՝ ավելի լավ կառավարելու համա՞ր». «կաթողիկոսի կոնդակով 2012-ին ստեղծվեց Արթիկի թեմ». https://armtimes.com/hy/article/54290
5. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, «Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Գուգարաց թեմ». https://www.armenianchurch.org/hy/news/գարեգին-բ-ամենայն-հայոց-կաթողիկոսը-հովվապետական-այցով-մեկնեց-գուգարաց-թեմ/317
6. Մայր Աթոռ, «Ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծվեց Գյումրիի նորակառույց Ս. Հակոբ եկեղեցին». https://www.armenianchurch.org/hy/news/ձեռամբ-գարեգին-բ-ամենայն-հայոց-կաթողիկոսի-օծվեց-գյումրիի-նորակառույց-ս-հակոբ-եկեղեցին/120
7. Hetq.am (2024-12-08). «Վերաօծվել է Գյումրիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին». https://hetq.am/hy/article/171399
8. Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան, «Հայոց Եկեղեցական Իրավունքը», Վերահրատարակություն 2011թ., «Առաքելական կանոններ» բաժին. https://digilib.aua.am/book/2952/3504/23851
9. Կանոնագիրք Հայոց (կազմող՝ Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոս, VIII դ.). գիտաքննական հրատարակություն՝ Վազգեն Հակոբյան, հ. Ա (Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964), հ. Բ (1971)
10. «Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի հովվապետական այցը Շիրակի թեմ», հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 1963թ.. https://arar.sci.am/dlibra/publication/264155/edition/241932/content
11. «Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի հովվապետական այցը Սյունյաց թեմ», հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 1989թ.. https://arar.sci.am/dlibra/publication/269449/edition/246858

16

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոտը ՀՀ տարածքում, նախկին խորհրդային պետություններում, ինչպես նաեւ Արեւմտյան որոշ երկրներում փաստացի զրկված է Եկեղեցու կառավարմանը մասնակցելու հնարավորությունից, թեմերը զրկված են ինքնավարությունից: Թեմերի զգալի մասում եւ ծխական համայնքներում պատշաճ կերպով չեն իրականացվում թեմի Ներկայացուցչական ժողովի պատգամավորների, Թեմական Խորհրդի անդամների եւ ատենապետության, ինչպես նաեւ՝ համայնքային ու ծխական մարմինների եւ նրանց առաջնորդների կամ հոգեւոր հովիվների ընտրություններ, ժողովներ ու նիստեր:

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16.1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ինչպես եւ՛ առաքելահաստատ առաջին համայնքները եւ՛ դրանցից բխող ավանդական բոլոր Ուղղափառ եւ Արեւելյան-Ուղղափառ եկեղեցիները, դարեր շարունակ կառավարվել են ներքեւից վերեւ ձգվող ընտրական շղթայով, բացառությամբ օտար լծի ներքո գտնված ժամանակաշրջաններում, երբ արտաքին միջամտություն եւ ուղղորդումներ էին տեղի ունենում օրինակ՝ պարսական շահերի, արաբական խալիֆների, բյուզանդական կայսրերի, օսմանյան սուլթանների, ռուսական ցարերի եւ սովետական կոմկուսի կողմից: Ազգային-Եկեղեցական ժողովն իր հոգեւորական եւ աշխարհական պատգամավորների ձայների մեծամասնությամբ ընտրում է եպիսկոպոսաց դասի ներկայացուցիչներից մեկին Ամենայն Հայոց Կաթողիկոս: Թեմի առաջնորդական պաշտոն ստացած եպիսկոպոս հայրերն իրենց հերթին ընտրվել են առաջադրված թեկնածու վարդապետների միջից՝ թեմական ժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ծխական համայնքի ժողովն իր հավատացյալ երիտասարդներից ընտրել եւ առաջարկել է քահանայության թեկնածուներ, որոնք թեմի առաջնորդի համաձայնությամբ ուսման են մեկնել հոգեւոր ճեմարան կամ դպրանոց: Համայնքներից շատերը, հատկապես քաղաքային միջավայրում, հաճախ իրենք են ընտրել, թե ո՞վ պետք է լինի հոգեւոր հովիվ կամ

սպասավոր սարկավագ՝ առաջնորդի կողմից ներկայացված թեկնածուներից: Այս շղթայում աշխարհիկ հավատացյալները, ոչ թե հյուրեր են, այլ մեծամասնություն. Եկեղեցու գերագույն մարմնի կազմի երկու երրորդն աշխարհական է: [1]

16.2. Այս կարգը ոչ թե պատմական հիշողություն է, այլ գործող պահանջ, որն ամրագրված է նաեւ ՀԱՍԵ փաստացի պետի հաստատած, սակայն Ազգային-եկեղեցական ժողովի կողմից չվավերացված երկու փաստաթղթերում՝ 2000թ. «Նախաշավիղ» Կանոնադրության եւ 2009թ. «Ուղենիշ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական կանոնադրության» մեջ: «Նախաշավիղ»-ի հոդված 60-ի համաձայն՝ «Յուրաքանչյուր թեմ ունի Թեմական Ներկայացուցչական Ժողով եւ Թեմական Խորհուրդ... Յուրաքանչյուր համայնք ունի իր համայնքային անդամական ժողովը եւ Ծխական Խորհուրդը»: [2] [3] Փաստաթղթերում սահմանված են նաեւ հստակ պարբերականություններ, թե երբ պետք է գումարվեն ժողովները տարբեր մարմինների համար:

16.3. Հայաստանյան թեմերում եւ հետխորհրդային երկրների թեմերում այս դրույթները որեւէ կերպ չեն ապահովվում: Ո՛չ Մայր Աթոռի պաշտոնական կայքը, ո՛չ հայաստանյան թեմերի առանձին էջերը որեւէ ընտրովի մարմնի՝ թեմական ժողովի, թեմական խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի կամ ծխական խորհրդի մասին տեղեկություն չեն հրապարակում: [4] Այդ մարմինների ընտրության կամ նիստերի վերաբերյալ հրապարակային արձանագրություններ չկան եւ ըստ էության այդ կանոնադրական ժողովները չեն գումարվում: «Ուղենիշ»-ի ընդունումից 17 տարի անց հայաստանյան որեւէ թեմ չի հրապարակել դրա պահանջներին համապատասխան ընդունված կանոնադրություն:

16.4. Թեմերի առաջնորդները չեն ընտրվում, այլ նշանակվում են Կաթողիկոսի անձնական որոշմամբ: Արարատյան Հայրապետական թեմը՝ Եկեղեցու ամենամեծ թեմը, պաշտոնական նկարագրությամբ «անմիջականորեն կառավարվում է առաջնորդական փոխանորդի կողմից, ում նշանակում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը»: [5] Մյուս թեմերի համար «Ուղենիշը» նախատեսում է առաջնորդի ընտրություն թեմական ժողովում, բայց կից ծանոթագրությամբ այն անմիջապես սահմանափակում է. «գործում են բացառապես առաջնորդի ընտրության ավանդույթ ունեցող թեմերում, այլապես առաջնորդը նշանակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից» (հոդվածներ 8.2, 8.3): [3] Այս պարագայում հայաստանյան եւ հետխորհրդային երկրների թեմերը դուրս են մնում թեմական առաջնորդի ընտրության հնարավորությունից:

16.5. Թեմերում խորհուրդների եւ ժողովների փաստացի անգործության հետեւանքներից մեկն այն է, որ Եկեղեցու գերագույն մարմնի՝ Ազգային-Եկեղեցական ժողովի կամ նաեւ դրա փոքր տարբերակի՝ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման համար էական մարտահրավեր է ստեղծում՝ կապված պատգամավորների լեգիտիմ ընտրության հետ: «Ուղենիշ»-ի հոդված 10.9-ը սահմանում է, որ եթե թեմական ժողովը չի գումարվում, թեմական խորհուրդը կարող է պատգամավորներ ընտրել այլ ժողովների համար, *«ի բաց առյալ Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների»*: [3] Այսինքն՝ ԱԵԺ-ի պատգամավոր կարող է ընտրել միայն թեմական ժողովը: Քանի որ այն կանոնավոր չի գումարվում, ԱԵԺ-ի կանոնական կազմն ուղղակի չի կարող ձեւավորվել կամ էլ պատգամավորները կարող են ընտրվել ֆիկտիվ թեմական ժողովների միջոցով: Բացի այս, էական մարտահրավեր է նաեւ հետեւորդների ուռճացված թվերով թեմերի խնդիրը, երբ 25,000 հետեւորդի թվով մեկ պատգամավոր ընտրելու պայմանով թեմերն ուռճացնում եւ ավելի մեծ թվով պատգամավորներ են գործուղում ժողովներին (ինչպես օրինակ Ռուսաստանի եւ որոշ այլ երկրների դեպքում):

16.6. Երկու փաստաթուղթն էլ վերստուգիչ հանձնաժողովը հայտարարում են միակ մարմինը, որը դուրս է հոգեւոր վերադասի նախագահությունից եւ որի անդամները պետք է ընտրվեն

Թեմական ներկայացուցչական ժողովի կողմից. առաջնորդը նախագահն է թեմական բոլոր կառույցների «ի բաց առյալ վերստուգիչ հանձնաժողովի» (Ուղենիշ, հոդվածներ 3.4, 8.8ա): [3] Այսինքն՝ սա եկեղեցական միջոցների նկատմամբ նախատեսված միակ անկախ հսկողությունն է, սակայն թեմական պատգամավորական ժողովների ոչ պատշաճ գումարման հետեւանքով վերահսկողության այս մեխանիզմը եւս չի գործում:

16.7. Ժողովների եւ խորհուրդների ոչ կանոնավոր աշխատանքի հետեւանքով պաշտպանված չեն նաեւ հենց հոգեւորականները: Ուղենիշի Հավելված 1-ը սահմանում է առաջնորդին պաշտոնանկ անելու կարգ՝ մեղադրանքը քննում է թեմական խորհուրդը, ապա թեմական ժողովը ստեղծում է հատուկ հանձնախումբ, եւ միայն դրանից հետո գործը ներկայացվում է Կաթողիկոսին: [3] Հայաստանում եւ հետխորհրդային երկրներում այս կարգն անհնար է կիրառել, որովհետեւ դրա օղակները կամ գոյություն չունեն կամ եղածները կրում են ձեւական բնույթ: Մասնավորապես՝ Մասյացոտնի թեմի առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը նախ պաշտոնանկ արվեց եւ ապա կարգալույծ հռչակվեց ՀԱՍԵ փաստացի պետի միանձնյա տնօրինությամբ, իսկ իր առաջնորդական պաշտոնում վերականգնվեց ոչ թե եկեղեցական մարմնի, այլ աշխարհիկ դատարանի որոշմամբ, որովհետեւ եկեղեցական ընթացակարգերը փաստացի խաթարված են (տե՛ս 4.8):

16.8. Համեմատությունը ցույց է տալիս, որ նույն Մայր Աթոռի ենթակայության ներքո գործող պատմական սփյուռքի եւ Արեւմտյան երկրների նորաստեղծ թեմերում այս համակարգը գործում է որոշակի արդյունավետությամբ, կախված տվյալ երկրում թեմերի գրանցման իրավական պրակտիկայից, մինչդեռ Հայաստանի եւ հետխորհրդային երկրների թեմերում ամբողջն առ այսօր խաթարված է.

- ԱՄՆ Արեւելյան թեմում թեմական ժողովը գումարվում է ամեն տարի եւ հենց ինքն է ընտրում Առաջնորդին. ներկա Առաջնորդն ընտրվել է 120-րդ թեմական ժողովում՝ 2022թ. մայիսին, իսկ վերջին թեմական ժողովը գումարվել է 2026թ-ի մայիսին: [7] [8] Ընդ որում, Արեւելյան թեմը հրապարակում է իր տարեկան զեկույցը, որտեղ ներկայացնում է նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետվությունները: [9]
- ԱՄՆ Արեւմտյան թեմում 2026թ. մայիսի 1-ին կայացել է 99-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը՝ 15 պաշտոնյայի ընտրությամբ եւ թեմի բյուջեի հաստատմամբ: [10]
- Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունում Ազգային Ընդհանուր Ժողովը գումարվում է չորս տարին մեկ, թեմական ժողովը՝ տարին առնվազն մեկ անգամ, թեմական խորհուրդն ընտրվում է երկու տարով: [11]
- Այսինքն՝ սփյուռքի որոշ թեմերում ժողովների հերթական համարները հասնում են 124-ի եւ 99-ի, մինչդեռ Հայաստանի 12 թեմերում այդպիսի ժողովի գումարման որեւէ դեպք հրապարակավ չի արձանագրվել:

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16.9. Աշխարհականների ընտրովի մասնակցությունը Հայ Եկեղեցու համար նորույթ չէ: Կոստանդնուպոլսի Պատրիարքության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պարագայում այն հենվում է հիմնականում 1860թ. Պոլսո Ազգային Սահմանադրության մոդելի վրա եւ մասամբ եկեղեցական ավանդության վրա, ինչն ի վերջո ամրագրված է 1945թ. Ազգային-Եկեղեցական ժողովի ընդունած կանոնադրությամբ, ըստ որի ԱԵԺ-ի կազմում ընդգրկվում են «ժողովրդից ընտրված երեսուն տարին լրացած իրավասու ծխականները»՝ յուրաքանչյուր թեմից՝ մինչեւ 25,000 հավատացյալի հաշվով մեկ պատգամավոր: [12] [13]

16.10. Երկու գործող փաստաթղթերում՝ «Նախաշավիղ» եւ «Ուղենիշ», թեմական եւ ծխական մարմինների ձեւավորումն ու պարբերական հավաքվելը սահմանված է որպես պարտականություն, ոչ թե հայեցողություն:

- Թեմական ժողովը («թեմի բարձրագույն մարմինը») – տարին առնվազն մեկ անգամ,
- Թեմական խորհուրդը – ընտրվում է 2-4 տարով, նիստ՝ տարին առնվազն չորս անգամ,
- Ծխական ընդհանուր ժողովը («ծուխի բարձրագույն մարմինը») – տարին առնվազն մեկ անգամ,
- Ծխական խորհուրդը – ընտրվում է, ժողով՝ երկու շաբաթը մեկ անգամ,
- Վերստուգիչ հանձնաժողովը – ընտրվում է 4 տարով եւ տարին առնվազն մեկ անգամ ստուգում է թեմի ֆինանսները:

(«Ուղենիշ», հոդվածներ 9.1, 9.2, 10.2, 10.4, 4.1, 4.4, 11.1-11.3. «Նախաշավիղ», հոդվածներ 71, 74, 75, 77-ժա, 85, 87, 95) **[2] [3]**

ԱՄՓՈՓՈՒՄ

16.11. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կառավարման կարգը ենթադրում է, որ հավատացյալ ժողովուրդն ինքն է ընտրում ծխական եւ թեմական մարմինները, եւ դրանց միջոցով մասնակցում Եկեղեցու կառավարմանը: Սակայն 1999թ-ից, այսինքն 27 տարի, Քրիստոնեության հիմք հանդիսացող այս կանոնական կարգը Հայաստանում եւ սփյուռքի մի շարք թեմերում ընդհանրապես չի գործում:

16.12. Թեմական եւ ծխական ընտրովի մարմինների կազմն ու պարբերականությունը մանրամասն սահմանված են ՀԱՍԵ փաստացի պետի հաստատած երկու ժամանակավոր փաստաթղթերով, որոնք առ այսօր սպասում են Ազգային-եկեղեցական ժողովի կողմից հաստատվելուն: Ըստ դրանց՝ թեմական ժողովը պետք է գումարվեր տարին մեկ անգամ, ծխական ժողովը՝ տարին մեկ անգամ, թեմական խորհուրդը՝ նիստ գումարեր տարին չորս անգամ, ծխական խորհուրդը՝ երկու շաբաթը մեկ, իսկ վերստուգիչ հանձնաժողովը՝ տարեկան ստուգեր թեմի ֆինանսները: Այս պահանջներից եւ ոչ մեկի պատշաճ կատարման հրապարակային ապացույց Հայաստանում առկա չէ: Խոսքը գործող կանոնների համակարգային ու շարունակական չկատարման մասին է:

16.13. Եկեղեցու խորհրդակցական կառավարման ամբողջական խաթարման հետեւանքով հավատավոր ժողովուրդը զրկված է Եկեղեցու կառավարմանը մասնակցելու իր կանոնական իրավունքից, հայաստանյան թեմերը եւ սփյուռքի որոշ թեմեր լիովին զրկված են ինքնավարությունից, իսկ Եկեղեցու կառավարումը վերածվել է վերեւից ներքեւ գործող նշանակովի ուղղահայացի, որի գագաթին կանգնած է մեկ անձ:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Hratch Tchilingirian, The Armenian Church: A Brief Introduction (2008). https://oxbridgepartners.com/hratch/images/pdf/TchilingirianHratch_ArmenianChurchIntroduction_2008.pdf
2. «Կանոնադրություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նախաշավիղ», 2000թ., Բաժին Ե՝ «Թեմական առաջնորդություններ», հոդվածներ 60-96
3. «Ուղենիշ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական կանոնադրության», հաստատված՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 2009թ. ԺԱ, էջ 38-47. https://tert.nla.am/archive/HGG AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2009/2009(11).pdf
4. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, «Թեմեր». https://www.armenianchurch.org/hy/թեմեր/
5. Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, Արարատյան Հայրապետական թեմ, «Պատմություն». https://www.gahana.am/pages/history
6. Մասյացոտնի թեմ, «Թեմական առաջնորդ». https://www.masyatsotn.org/home/arajnord

7. Armenian Church Diocese of America (Eastern). «The Diocesan Assembly, which meets annually»; «elected by clerical and lay representatives of the parishes at the Diocesan Assembly». https://www.stjohnsarmenianchurch.org/our-faith/eastern-diocese/ ; Թեմական կանոնադրություն (2023). https://armenianchurch.us/document/diocesan-bylaws/

8. Armenian Church Diocese of America (Eastern). «124th Diocesan Assembly Envisions a Church “Renewed in Hope”».
https://armenianchurch.us/124th-diocesan-assembly-envisions-a-church-renewed-in-hope/

9. Armenian Church Diocese of America (Eastern). «ANNUAL REPORT 2025».
https://armenianchurch.us/wp-content/uploads/2026/07/DEV-Annual-Report-to-Donors-2025-PDF-Small-260618.pdf

10. Western Diocese of the Armenian Church (2026-05-05). «99th Diocesan Assembly: Newly-Elected Members Of The Diocesan Council».
https://www.wdacna.com/en/news/3203/the-members-of-the-diocesan-council-elected-during-the-99th-diocesan-assembly-of-the-western-diocese

11. Armenian Church Catholicosate of Cilicia, «Hierarchy & Decision-Making».
https://www.armenianorthodoxchurch.org/en/the-armenian-church/hierarchy-decision-making

12. «Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն», 1945թ., հրապարակված՝ «Էջմիածին» ամսագիր, 1945, էջ 18. https://arar.sci.am/publication/260884

13. Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան, «Հայոց Եկեղեցական Իրավունքը», Վերահրատարակություն 2011թ., «Առաքելական կանոններ» բաժին. https://digilib.aua.am/book/2952/3504/23851 ; Կանոնագիրք Հայոց (կազմող՝ Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոս, VIII դ.)

ԲԱԺԻՆ 3

Առաջարկվող լուծումներ

Սույն բաժնում ներկայացվում են Բաժին 1-ում սեղմ ձեւակերպված եւ Բաժին 2-ում փաստագրված ճգնաժամի հաղթահարման ուղիները կանոնական տեսանկյունից: Առաջարկվող լուծումները կառուցված են եկեղեցու բարենորոգման եւ եկեղեցի-պետություն փոխհարաբերության կարգավորման ճանապարհային քարտեզի տեսքով՝ որպես ճգնաժամից դուրս գալու հաջորդական քայլերի շարք:

Բոլոր առաջարկներն արվում են կանոնական տեսանկյունից եւ հենվում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կանոնագրքի, Առաքելական կանոնների, 1945թ. «Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության» եւ ՀԱՍԵ բազմադարյա ավանդության վրա: Լուծումների նպատակը ոչ թե Եկեղեցու վարդապետության կամ Սրբազան Ավանդության որեւէ փոփոխությունն է, այլ բացառապես Եկեղեցու ինքնավարության վերականգնումը եւ վարչական-կանոնական կյանքի վերադարձը սեփական կանոնական հունին:

Լուծումների ելակետային սկզբունքները

Առաջարկվող ամբողջ հայեցակարգը հենվում է հետեւյալ վեց սկզբունքի վրա, որոնք ըստ եկեղեցու կանոնական իրավունքի, կարող են ուղենիշ հանդիսանալ բարենորոգման բոլոր փուլերի եւ բոլոր դերակատարների համար.

- **Կանոնականություն.** Բարենորոգման յուրաքանչյուր քայլ պետք է ունենա ՀԱՍԵ Կանոնագրքով, Առաքելական կանոններով եւ Եկեղեցու ավանդությամբ հիմնավորված հենք: Ճգնաժամի պատճառը հենց կանոնական կարգի խախտումը կամ գրեթե ամբողջական բացակայությունն է. հետեւաբար դրա հաղթահարումը չի կարող իրականացվել կանոնականությունից դուրս միջոցներով:
- **Խորհրդակցականություն.** Որոշումների կայացումը վերադարձվում է Եկեղեցու կանոնական ժողովներին՝ Ազգային-Եկեղեցական ժողովին, Եպիսկոպոսաց ժողովին, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովին, թեմական եւ ծխական մարմիններին, որոնք պետք է գումարվեն սահմանված ձեւաչափով եւ պարբերականությամբ: Բարենորոգման առանցքն անձիշխանության փոխարինումն է կանոնական-խորհրդակցական կառավարմամբ:
- **Ապաքաղաքականացում.** Եկեղեցին դադարում է լինել քաղաքական պայքարի, ընտրական ազդեցության եւ արտաքին ներգործության գործիք: Այս սկզբունքը հավասարապես պարտադիր է թե՛ իշխանության, թե՛ ընդդիմության նկատմամբ դիրքորոշման պարագայում եւ ժամանակի ու քաղաքական կառուցվածքի հետ կապված չէ:

- **Թափանցիկություն եւ հաշվետվողականություն.** Եկեղեցու ֆինանսական հոսքերը, գույքի տնօրինումը եւ կադրային որոշումները ենթակա են ինստիտուցիոնալ, պարբերական եւ հրապարակային հաշվետվողականության՝ առաջին հերթին հենց Եկեղեցու սեփական մարմինների եւ հավատավոր ժողովրդի առջեւ:
- **Բարեվարքություն եւ արժանապատվություն.** Հոգեւորականի բարեվարքության պահանջը կիրառվում է հավասարապես՝ նվիրապետության բոլոր աստիճաններում, իսկ ներեկեղեցական կարգապահական վարույթն ապահովում է հոգեւորականի պաշտպանության եւ բողոքարկման իրավունքը՝ բացառելով կարգալուծությունը որպես ահաբեկման գործիք:
- **Պետություն-Եկեղեցի տարանջատում.** Բարենորոգումն իրականացնում է Եկեղեցին՝ իր հոգեւորականաց դասի եւ հավատավոր ժողովրդի ուժերով: Պետությունը գործում է բացառապես իր սահմանադրական եւ օրենսդրական իրավասության շրջանակում՝ պահպանելով եկեղեցի-պետություն համագործակցության հատուկ օրենքների ձեւաչափը եւ չմիջամտելով Եկեղեցու ներքին վարդապետական եւ կանոնական ինքնուրույնությանը:

Բարենորոգման ճանապարհային քարտեզը

Քայլ առաջին. Բարենորոգման օրակարգի վերահստակեցում եւ հանրահռչակում

Բարենորոգման օրակարգի վերահստակեցումն ու հանրահռչակումը, դրա կանոնական հիմնավորումների ներկայացումը հոգեւորականաց դասին, հավատավոր ժողովրդին, թեմերին եւ Սփյուռքի համայնքներին:

- Բարենորոգման Համակարգող խմբի ձեւավորում՝ հոգեւորականների եւ աշխարհականների մասնակցությամբ, եւ դրա կազմի ընդլայնման ընթացակարգի հրապարակում,
- Սույն զեկույցի փաստագրման նյութերի հրապարակային հասանելիության ապահովում՝ որպես բարենորոգման անհրաժեշտության ապացուցողական հենք,
- Խմբի կողմից թեմերում եւ ծխական համայնքներում սույն զեկույցի ապացուցողական հենքի եւ բարենորոգման օրակարգի շուրջ քննարկումների կազմակերպում՝ հոգեւորականների եւ ծխականների մասնակցությամբ,
- Խմբի կողմից սփյուռքի թեմերի, մասնավորապես ինքնավար ընտրական ավանդույթ պահպանած թեմերի հետ խորհրդակցությունների կազմակերպում,
- Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի Պատրիարքությունների տեղեկացում եւ նրանց հետ խորհրդակցական ձեւաչափի կազմակերպում:

Քայլ երկրորդ. ՀԱՍԵ փաստացի պետի հեռացումը (հանգստի կոչումը)

Բաժին 2-ում փաստագրված են այն կանոնական հիմքերը, օրինազանցությունները, որոնք առանձին-առանձին եւ հատկապես համակցմամբ անհամատեղելի են դարձնում ՀԱՍԵ փաստացի պետի հետագա գահակալությունն Ամենայն Հայոց Կաթողիկոսի աթոռին.

- **կուսակրոնության ուխտի խախտումը եւ զավակ ունենալը** (Առաքելական կանոնների, Բարսեղ Մեծի կանոնների ուժով – 1-ին փաստագրում),
- **կուսակրոնության ուխտը խախտած բարձրաստիճան հոգեւորականներին պատասխանատվության չենթարկելը եւ ի հակառակ խրախուսելը** (Առաքելական կանոնների, Բարսեղ Մեծի կանոնների ուժով – 2-րդ եւ 3-րդ փաստագրումներ),
- **Եկեղեցու գերագույն մարմնի՝ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման 27-ամյա ձախողումը, Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման բազմամյա խափանումը եւ ընդհանուր Եկեղեցու խորհրդակցական կառավարման տապալումը** (Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու 1945թ. հատուկ կանոնադրության ուժով, Եկեղեցական-ներկայացուցչական ժողով գումարելու կանոնադրության ուժով – 10-րդ, 11-րդ, 12-րդ եւ 16-րդ փաստագրումներ),
- **Եկեղեցում կլանային կառավարման ձեւավորումը, ազգականներին եպիսկոպոս ձեռնադրելը եւ իշխանության յուրացումը** (Առաքելական կանոնների ուժով – 6-րդ փաստագրում),
- **քաղաքական գործունեությամբ զբաղվելը, օտար երկրների շահերին ծառայելը եւ աշխարհիկ իշխանության գործերին ՀՀ օրենսդրության եւ Եկեղեցու կանոնակարգի խախտմամբ միջամտելը** (Առաքելական կանոնների ուժով – 7-րդ, 8-րդ եւ 9-րդ փաստագրումներ),
- **Եկեղեցու նվիրապետության ներկայացուցիչներին կամայականորեն հալածելը, առանց կանոնական հենքի կարգալույծ հռչակելը** (Առաքելական կանոնների ուժով – 4-րդ փաստագրում),
- **կանոնադրական ճնշումների, կամայական կադրային նշանակումների, գույքային միջամտությունների հետեւանքով Սփյուռքի թեմերում պառակտումների հրահրումը եւ թեմերի օտարումը Մայր Եկեղեցուց** (13-րդ փաստագրում),
- **հովվապետական պարտականությունների չկատարումը** (Առաքելական կանոնների ուժով – 15-րդ փաստագրում),
- **Եկեղեցու գույքի, ֆինանսական միջոցների ու նվիրատվությունների անհաշվետու, կամայական շահագործումը, հնազանդ ենթակաների հարստացումը եւ անօրենություններին չհնազանդվող հոգեւորականներին ընչազրկության մատնումը** (Առաքելական կանոններ – 5-րդ եւ 14-րդ փաստագրումներ):

Քայլ երրորդ. Կաթողիկոսական տեղապահի ընտրություն

Աթոռի թափուր մնալու պայմաններում՝ սահմանված կարգով, այսինքն Եպիսկոպոսաց ժողովի կողմից Կաթողիկոսական տեղապահի ընտրություն, որի հիմնական առաքելությունը ոչ թե Եկեղեցու շարունակական կառավարումն է, այլ բարենորոգման հաջորդ երկու քայլերի՝ Եկեղեցու միասնական Կանոնադրության ընդունման եւ Կաթողիկոսի ընտրության պատշաճ նախապատրաստումը:

ՏԵՂԱՊԱՀԻ ՄԱՆԴԱՏԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԻ

- Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման ամբողջական նախապատրաստումը՝ ներառյալ թեմերում պատգամավորների կանոնական ընտրության ապահովումը,
- ՀԱՍԵ միասնական Կանոնադրության նախագծի վերջնականացումը,
- Եկեղեցու ֆինանսական եւ գույքային վիճակի լիարժեք գույքագրումն ու անկախ աուդիտը՝ որպես նոր Կաթողիկոսին փոխանցվող ելակետային վիճակի փաստագրում,

- Կարգալույծ հռչակված հոգեւորականների գործերի վերանայման ընթացակարգի գործարկումը,
- Թեմական եւ ծխական ընտրովի մարմինների ընտրությունների անցկացման ապահովումը՝ դրանց բնականոն գործունեության, ինչպես նաեւ ԱԵԺ համար պատգամավորների պատշաճ ընտրության նպատակով:

Տեղապահի ժամկետը պետք է լինի հստակ սահմանված եւ հնարավորինս կարճ: Տեղապահը չի կարող լինել Ամենայն Հայոց Կաթողիկոսի թեկնածու իր իսկ նախապատրաստած ընտրություններում. այս սահմանափակումը կանխում է տեղապահության վերածումն աթոռի յուրացման միջանկյալ փուլի: Տեղապահի ժամանակահատվածում չեն կատարվում եպիսկոպոսական ձեռնադրություններ, թեմական առաջնորդների նշանակումներ եւ կարգալուծություններ:

Քայլ չորրորդ. ՀԱՍԵ միասնական Կանոնադրության ընդունումը

Առաջիկա Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից ՀԱՍԵ միասնական Կանոնադրության ընդունում, որով վերջ է դրվում 1999թ-ից ի վեր առկա կանոնադրական ֆրագմենտացիային եւ անձիշխանության պայմաններում գործելու իրավիճակին:

Կանոնադրությամբ պարտադիր կարգավորման ենթակա նվազագույն բովանդակությունը.

Ա) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ԴՐԱՆՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ազգային-Եկեղեցական ժողով՝ որպես գերագույն կանոնադիր մարմին, պարտադիր պարբերականությամբ (առնվազն յոթ տարին մեկ), ինչպես նաեւ՝ սահմանված թվով թեմերի կամ եպիսկոպոսների պահանջով Կաթողիկոսից անկախ գումարման կառուցակարգով. սա բացառում է 10-րդ փաստագրումում արձանագրված այն իրավիճակի կրկնությունը, երբ գերագույն մարմնի գումարումը կախված է բացառապես մեկ անձի կամքից,
- Եպիսկոպոսաց ժողով եւ Եկեղեցական-ներկայացուցչական ժողով՝ պարտադիր պարբերականությամբ եւ գումարումը չապահովելու դեպքում կիրառվող կանոնական հետեւանքներով,
- Գերագույն հոգեւոր խորհուրդ՝ ԱԵԺ-ի կողմից ընտրովի կազմով, հստակ լիազորություններով եւ Կաթողիկոսի միանձնյա նշանակումների սահմանափակմամբ,
- Թեմական եւ ծխական ընտրովի մարմիններ՝ իրենց ընտրության եւ հաշվետվողականության պարտադիր կարգով:

Բ) ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ

- Կանոնական դատարան՝ որպես մշտապես գործող, նվիրապետությունից վարչականորեն անկախ ատյան, որի իրավասությունը տարածվում է նաեւ եպիսկոպոսների եւ Կաթողիկոսի վրա,
- Վերստուգիչ մարմին՝ ընտրովի կազմով եւ պարտադիր տարեկան հրապարակային հաշվետվությամբ:

Գ) ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՒ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Հոգեւորականի բարեվարքության պահանջների եւ դրանց խախտման հետեւանքների ամրագրում,
- Ֆինանսական թափանցիկության եւ հաշվետվողականության պարտադիր չափորոշիչներ,

- Ազգակցական ձեռնադրությունների եւ նշանակումների արգելք,
- Քաղաքական գործունեության արգելք եւ դրա խախտման կանոնական հետեւանքներ:

Դ) ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1999թ-ից ի վեր ընդունված եւ ԱԵԺ կողմից չվավերացված բոլոր կանոնադրական ակտերի («Նախաշավիղ», ԵՆԺ կանոնադրություն, ԳՀԽ կանոնադրություն, «Ուղենիշ») կարգավիճակի որոշում՝ վավերացում, փոփոխություն կամ ուժը կորցրած ճանաչում,
- Սփյուռքի թեմերի կանոնադրությունների եւ ընդունող պետությունների օրենսդրության համապատասխանության ապահովման կարգ:

Քայլ հինգերորդ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություն

Նոր Կանոնադրությամբ սահմանված կարգով Ազգային-Եկեղեցական ժողովի գումարում եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություն:

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- ԱԵԺ պատգամավորների ընտրությունը թեմերում իրականացվում է կանոնական թեմական ժողովների կողմից՝ ապահովելով միասնական Կանոնադրությամբ սահմանված աշխարհականների ներկայացվածությունը,
- Թեմերի հետեւորդների թվաքանակի ստուգելի հաշվարկի մեթոդաբանության սահմանում՝ բացառելու համար 16.5-ում արձանագրված՝ ուռճացված թվերով պատվիրակությունների ձեւավորումը,
- Կաթողիկոսի թեկնածուներին ներկայացվող կանոնական պահանջների նախնական եւ հրապարակային ստուգում՝ ներառյալ բարեվարքության եւ կուսակրոնության ուխտի պահպանման հարցերը,
- Ընտրության ընթացակարգի հրապարակայնություն եւ արձանագրվածություն: